

33

Р-16

ՐԱԼԱԲԱՏԱՆՍՏԱՆԻ ԴՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐԸ


33
Ժ-16

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ
ԵՂԱՆԱԿ

Թույլատրված է ՍՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության կողմից որպես դասագիրք տնտեսագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունների ու ֆակուլտետների համար:

655



Պատգարբի պիտավոր խմբագիր՝
ՍՍՄՄ ԳԱ ակադեմիկոս Թուվյանցե Ա. Մ.

606 00(947)67
701(01)75 75 ռՏ:

Պատգարբի խմբագրական կոլեկտիվ՝ ակադ. Թուվյանցե Ա. Մ., ՍՍՄՄ ԳԱ քաղա-
կից ակադեմիկոս Վաղվադ Գ. Ա., պրոֆ. Վաղվադ Մ. Ի., պրոֆ. Մախոպ Ն. Ի., պրոֆ. Բորի-
սապ Ս. Յ.:

Պատգարբի այդ հատորի հեղինակային կոլեկտիվը՝ ՍՍՄՄ ԳԱ ակադեմիկոս
Թուվյանցե Ա. Մ., ՍՍՄՄ ԳԱ թղթակից-ակադեմներ Վաղվադ Գ. Ա., Միլեկովսկի Ա. Գ.,
սեռուսական գիտությունների պրոֆեսորներ, զոկտորներ Աֆանասև Լ. Ա., Բորիսով Ս. Յ.,
Բյեկե Է. Յա., Գուրյերիչի Ի. Ս., Գրադիլով Մ. Մ., Միլեկով Մ. Մ., Մախոպ Ն. Ի., Մա-
շենկո Մ. Գ., Ռուզնիկ Գ. Յ., Ռիսկին Մ. Ն., Տրյակովսկի Ս. Ի., Չեդրակով Վ. Ա.,
զոցնետներ, տեխնական գիտությունների բնկանաժողովուրդներ Ազարովա Մ. Մ., Մանյե Վ. Ի.,
Մորզով Ա. Վ., Շեխնի Վ. Լ., Յամաև Ա. Ի.:

Մի շարք գլուխների էջաթիվերը և առանձին գլուխների մասեր գրել են՝ պրոֆ. Բեկյա-
և, Ջ. Ն., պատմական գիտությունների զոկտոր Գերշից Ա. Ի., պատմական գիտություն-
ների բնկանաժողովուրդ Ա. Մ.:

Պատգարբը հրատարակման են պատրաստել՝ Սմիռնովա Ն. Ա., Կազակով Է. Յա.,
Ալեքսև Ա. Ի.:

Պատգարբի խմբագրական կոլեկտիվն ու հեղինակային կոլեկտիվը խորին երախտա-
գիտություն են հայտնում բարձրագույն ուսումնական հաստատությունների բազմաթիվ
սեռուսական ամբիոններին և ՍՍՄՄ ԳԱ ինստիտուտների կոլեկտիվներին՝ գառադրել յա-
կեակը քննարկելիս նրանց արժեքավոր դիտարկումներին համար:

**«ՐԱՂԱՔԱՏՆՏՍՈՒԹՅՈՒՆ: Արտագրության կապիտալիստական
էպոսիկ: Գասագիրք բունների համար (զլի. խմբագիր՝ ակադեմիկոս
Ա. Մ. Թուվյանցե):**

Այդ գասագրքում շարադրվում են կապիտալիստական արտադրանքանակի օրինա-
չափաթյուններն ու կատեգորիաները (միևմտեղալիստական և մեծպայծառական կա-
պիտալիզմի): Պատգարբը ՍՍՄՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթու-
թյան միևնույնության կողմից հանձնարարված է տնտեսագիտական բարձրագույն հաս-
տատություններն ու Գաղափարների համար Այն կարող է օգտագործվել նաև տնտես-
գիտական տեսությունը ինքնուրույն ուսումնասիրողներին կողմից:

Ամեն մի գիտություն ունի ուսումնասիրության իր հատուկ օրյակ-
առ, այսինքն՝ առարկան: Քաղաքանտեսությանը հասարակական գի-
տություն է և իրենից ներկայացնում է մարքոզիզմ-լենինիզմի բաղկացու-
ցիչ մասերից մեկը: Նա ուսումնասիրում է կենսական բարբերների ար-
տադրման պրոցեսում կազմավորվող մարդկանց հասարակական հարա-
բերությունները, արտադրության հասարակական կարգը:

**§ 1. Հասարակական արտադրությունը և ճրա դերը մարդկային
հասարակության զարգացման գործում**

2

Նյութական արտադրու- 4. Մարքոզ և Յ. Լենինը, հենվելով իրենց մշա-
րանը մարդկային հա- կած դիալեկտիկական մատերիալիզմի և գրան
արտադրության կյանքի համապատասխանող իմացության գիտական մե-
հիմքն է: Աշխատանքի պրոցեսը և ճրա հիմ- նական մտնեսները
կազմում են արտադրության մեջ: Հետև-
յալանքորեն տարածելով դիալեկտիկական մատերիալիզմը հասարակա-
կան երևույթներն ու պրոցեսներն զրա, նրանք ստեղծեցին նոր գիտու-
թյուն՝ պատմական մատերիալիզմը, զրանով իսկ հայտնագործելով
մարդկանց կենսագործունենության օրյակավի հիմքը:

Հասարակական արտադրությունը մարդկանց կյանքի հիմքն է
և կարելու համար մարդկի պետք է ունենան սնունդ, բնակարան, հա-
լուստ և այլն: Այդ բարբերներն ունենալու համար նրանք պետք է աշպո-
սիք արտադրեն: 4. Մարքոզ և Յ. Լենինը նշում էին, որ առաջին պատ-
մական գործողությունը՝ դա մարդկանց պահանջումները բավարարե-

չու համար անհրաժեշտ առարկաների արտադրությունն էր, հենց նյութական էլյաների արտադրությունը՝

Հասարակական արտադրությունը իր մեջ ընդգրկում է բնության հետ մարդու փոխազդած ներգործության պրոցեսը (որ բնութագրում է արտադրողական օւմերի կացությունը) և այդ պրոցեսում առաջացող սոնանտիկան հարաբերությունների ամբողջությունը (արտադրության պրոցեսի հասարակական կողմը)։ Մարդու և բնության փոխներգործության պրոցեսը աշխատանքի պրոցես է, որ միշտ ընթացում է հասարակական որոշակի ձևով։

Աշխատանքի պրոցեսը ենթադրում է հետևյալ մասնատմանը. 1) մարդու աշխատանքը, 2) աշխատանքի առարկան և 3) աշխատանքի միջոցները։ Այդ պրոցեսն իրենից ներկայացնում է մարդկանց գիտակցական, նպատակահամար գործունեության պրոցես, որի օգնությամբ նրանք ձևափոխում են արտաքին բնության առարկաները և դրանք հարմարեցնում իրենց պահանջմանքները բավարարելու համար։ Աշխատանքը բացառապես մարդու սեփականությունն է։ Մարդն աշխատում է գիտակցորեն, և դա նրա գիտավոր տարրերություններից մեկն է կենդանուց։— Նա միջնորդավորում, կարգավորում ու վերահսկում է նյութափոխանակությունն իր և բնության միջև, արտադրում ու վերարտադրում է գոյություն համար իրեն անհրաժեշտ միջոցները։ Նրա աշխատանքային գործունեության նպատակները իրենց բուն հիմքում օրենկատիվորեն պայմանավորված են։ Արտադրելով իրենց համար անհրաժեշտ առարկաներ, իրիր, մարդիկ ձանաչում են բնության օրենքները և դրանք համապատասխան էլ բնությունը ծառայեցնում են իրենց, ձգտում են հասնել բնության վրա ազելի ու ազելի իշխանուն։

Ներգործելով արտաքին բնության վրա և փոխելով այն, մարդիկ փոխում են նաև սեփական բնությունը. զարգացնում են աշխատանքու բնորենակությունները, հարստացնում են իրենց գիտելիքները, լայնացնում դրանք օգտագործման հնարավորությունները։ Միշտ աճող պահանջմանքներից զրգված՝ մարդիկ շարունակ ընդլայնում են աշխատանքային գործունեության պրոցեսը, կտաստում են արտադրական փորձը և կատարելագործում աշխատանքի պրոցեսը, որը սերնդից-սերունդ անընդհատ փոփոխվում է, դառնում էլլ ազելի բարդ ու բազմապիսի։ Մարդու զարգացման համար աշխատանքի նշանակությունը հստակապես է։ Աշխատանքը, զրկել է Ծ. Լեոնիսը, սմարդկային ամբողջ կյանքի առաջին հիմնական պայմանն է, և այն էլ այն աստիճան, որ

մենք որոշ իմաստով պիտի առնեք՝ հենց աշխատանքն է ստեղծել մարդուն՝

Աշխատանքի առարկան բնության այն նյութն է, որի վրա մարդն ազդում է աշխատանքի պրոցեսում։ Աշխատանքի այն առարկան, որն արդեն ենթարկվել է մարդկային աշխատանքի ներգործությանը, բայց նախատեսված է հետագա վերամշակման համար, կոչվում է հում նյութ, կամ հումք։ Ըստ որում պետք է նկատի ունենալ, որ աշխատանքի ոչ մեկն մի առարկա է հումք. թեև յուրաքանչյուր հում նյութ միշտ էլ աշխատանքի առարկա է Օրինակ, քարածխաշերտը հանցանքում կամ հանքաքարը հանքաքանում աշխատանքի առարկաներ են, բայց հումք չեն, քանի որ դրանք դեռ չեն ենթարկվել մարդկային աշխատանքի ներգործությանը։ Իսկ շնորհից կարված-հանված անօխք կամ հանքաքարը, որոնք հետագա վերամշակման են գնում, հումք դասանված հանդերձ, միաժամանակ աշխատանքի առարկա են։

Աշխատանքի առարկան սպեցիֆիկ պատմական կատեգորիա է այն իմաստով, որ հասարակության զարգացմանը համընթաց աշխատանքի առարկաներ կազմող բնության նյութերի շրջանակը մեծանում է, դառնում է բազմապիսի։ Այսպես, հասարակական զարգացման վաղ ժամանակներում այդ շրջանակը խիստ նեղ էր, իսկ ժամանակակից հասարակությունում այն շափազանց ընդլայնվել է։ Բազմապես է առել, որ մեր ժամանակներում աշխատանքի առարկա են դարձել բնօրինական այնպիսի օտարեր, որոնք բնության մեջ զեռ չեն հայտնարծվել իրենց թևակն վիճակում։

Այն, ինչով մարդը ներգործում է աշխատանքի առարկայի վրա, կոչվում է աշխատանքի միջոցներ։ Դրանցում վճակական դերը պատկանում է աշխատանքի գործիքներին, որոնց մեխանիկական, ֆիզիկական ու բնօրինական հատկությունները մարդի օգտագործում է իր նպատակին համապատասխան։ Տվյալ իրը աշխատանքի գործիք է, թե անօրինակ, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կախված է այն բանից, թե ինչպես է դա օգտագործում մարդը։ Աշխատանքի գործիքների պատճառման պլանից էլ ենց սկսվում է մարդու րուն աշխատանքը։

Աշխատանքի միջոցներից, բառի սպելի լայն իմաստով, վերաբերում են աշխատանքի բուր նյութական պայմանները, առանց որոնց չի կարող աշխատանքը կատարվել։ Աշխատանքի համընթացանուր պայմանն է նաև քանի որ տասն դրան արտադրական պրոցեսը ընդհանրապես չի կարող տեղի ունենալ։ Աշխատանքի նյութական պայմաններից են նաև արտադրական շենքերը, երկաթուղիները, ջրանցքները և այլն։ Բնության հասարակական իմացության հետևանքները մարմնավորվում են

1 ՏՊ Կ. Մարտ և Կ. Լեոնիս, Ընտիր Երկեր, Կ. 1, էջ 25—26։

1 Ծ. Լեոնիս, Բնության գիտելիքներ, էջ 167։

աշխատանքի միջոցները ու դրանց արտադրական կիրառման պրոցեսների մեջ, տեխնիկայում ու տեխնոլոգիայում: Տեխնիկայի (ու տեխնոլոգիայի) զարգացման մակարդակը ծառայում է որպես հասարակության կողմից բնության ուժերի տիրապետման, բնության վրա հասարակության իշխման աստիճանի գլխավոր ցուցանիշ:

Աշխատանքի միջոցները և աշխատանքի առարկաները միասին առած կազմում են արտադրության միջոցները: Արտադրության միջոցները և մարդու աշխատանքը անխզելիորեն փոխադարձաբար կապված և պայմանավորված են: Աշխատանքի զործիքները, որպես ամեն մի աշխատանքային պրոցեսի անհրաժեշտ տարր, միշտ հանդիսանում են անցյալ աշխատանքի արդյունք (եթև խոսքը Վերաբերի սկզբում չմշակված քարերին ու ճյուղերին, որ նախնազարյան մարդիկ բնությանեց վերցնում էին պտորաստի): Բայց առանց միայնվելու կենդանի աշխատանքի հետ դրանք չեն կարող կատարել իրեց համար նախանշված գործ, կորցնում են իրենց նշանակությունը: Այլ աշխատանքի տարրիկաբար, ոչ աշխատանքի միջոցները զույլբան չեն ունենում որպես այդպիսիք, եթե չեն ներգրավված կենդանի աշխատանքի պրոցեսի մեջ: Մարդու աշխատանքային զործունեությունը ևս իր հերթին որպես այդպիսին զույլբան չի ունենա առանց արտադրության միջոցների: Հենարան, աշխատանքի պրոցեսը նրա երեք հիմնական մոմենտների մեքենայական միացում չէ: Միմյանի այդ փոխադարձաբար պայմանավորված մոմենտների օրգանական միասնությունը է իրագործվում մարդկային աշխատանքը, որի վճռական գործոնը ինքը՝ մարդն է, նրա նպատակահամար գործունեությունը: Մարդը, որպես առաջատար ուժ է հանդես գալիս իրեն շրջապատող բնության հետ փոխներգործության պրոցեսում: Նա աշխատանքի առարկաները հարմարեցնում է իր պահանջներին: Երբ անհրաժեշտ է նյութական բարիքներ՝ սնունդ, հագուստ, բնակարան ու անձնական սպառման այլ առարկաներ, ինչպես նաև աշխատանքի զործիքներ, հումք, օժանդակ նյութեր ու արտադրություն այլ միջոցներ, յայտնիք՝ արտադրական սպառման առարկաներ: Աշխատանքի պրոցեսի հետևանքը միշտ աշխատանքի արդյունքն է: Այդպիսով, նրա վերջնական հետևանքների տեսանկյունով դիմադր աշխատանքը հանդես է գալիս որպես արտադրողական աշխատանք, իսկ աշխատանքի պրոցեսը՝ որպես արտադրության պրոցես:

Այսպիսին են աշխատանքի էությունը և նրա բնգհանուր հատկանիշները առհասարակ՝ անկասա ան հասարակական մեկից, որով կատարվում է աշխատանքը:

1
Հասարակական արտադրությունը և նրա երկու կողմերը՝ արտադրողական ուժերը և արտադրական մարտերությունները

Աշխատանքի պրոցեսը միշտ իրականացնում են անհատները, բայց, ինչպես նշում էր Կ. Մարքսը այն անհատները, որոնք արտադրում են հասարակ ուժերը և արտադրական մարտերությունները: Միայն կոլեկտիվում կարող են զարգանալ մարդու ստեղծագործական բնորոնակությունները և նրա անհատականությունը: Կոլեկտիվի շրջանակներում են ստեղծվել կատարելագործվել ու է՛լ ավելի տարբերակվել աշխատանքների գործիքները, հայտնաբերվել աշխատանքի նոր առարկաներ: Արտադրության զարգացումով մարդկանց փոխադարձ կախվածությունը չի փոքրանում, այլ բազմապատկելի ուժեղանում է: Իրոք, մամանակակից մարդը ի վիճակի չէ մենակ ստեղծել բոլորը, ինչ անհրաժեշտ է իրեն՝ բնուկարան, սնունդ, հագուստ, գրքեր և սպառման օրիշ շատ առարկաներ, ինչպես և աշխատանքի միջոցներ: Գրա հետ միասին արտադրության առարկանց շարժման շնորհիվ անշափ աճում է մարդկանց գիտելիքների ու փորձի նշանակությունը: Հասարակության արտադրողական ուժերի զարգացման գործում: Այդ բոլորը նշանակում է, որ որպես աշխատանքի պրոցեսի անկախում նախադրյալ, միշտ հանդես է գալիս հասարակությունը, այլ ոչ թե նրանից մեկուսացած անհատը: Արտադրությունը միշտ էլ հասարակական արտադրություն է:

Կ. Մարքսը հայտնաբերվելով հասարակական արտադրության միմյանայնց հետ անխզելիորեն կապված երկու կողմերը՝ արտադրողական ուժերը և արտադրական մարտերությունները: Արտադրողական ուժերին են վերաբերում արտադրության միջոցները և մարդիկ, որոնք ունեն արտադրական որոշակի փորձ, հմտություններ և գործողության մեջ են գիտն արտադրության այլ միջոցները: Մարդիկ հասարակության արտադրողական ուժերի հիմնական տարրն են: Արտադրողական ուժերը հանդես են գալիս որպես հասարակական արտադրության առաջատար կողմը: Արտադրողական ուժերի զարգացման մակարդակը բնորոշվում է աշխատանքի հասարակական բաժանման աստիճանով և աշխատանքի միջոցների, ամենից առաջ տեխնիկայի համապատասխան զարգացումով, ինչպես նաև մարդկանց արտադրողական հմտությունների ու գիտական գիտելիքների զարգացման աստիճանով: Ուստի արտադրողական ուժերը տեխնիկայի կամ բնության տարրերի հետ նույնացնելը ճիշտ չէ: Արտադրողական ուժերը զույլբան ունեն միայն որպես հասարակության արտադրողական ուժեր: Արտադրությունը, ինչպես արդեն նշեցվել է, միշտ հասարակական բնույթ է կրում: Մարդիկ, կախով փոխերգործության մեջ մտնելով բնության հետ, միաժամանակ նաև հասարակական հարաբերությունների մեջ են մտնում իրար հետ, որի միջոցով

էլ Հենց հնարավոր էր րուն այդ փոփոխեցործովքունը Այն որոշ կապերն ու հարաբերութիւնները, որոնց մեջ մարդիկ, անկախ իրենց կամբից ու գիտակցութիւնից, մտնում են նյութական արտադրութեան պրոցեսում, կոչվում են հասարակական-արտադրական, կամ տնտեսական հարաբերութիւններ:

Արտադրական հարաբերութիւնների էությունը

Հարաբերութիւնները հարաբերութիւններ են մարդկանց միջև, որոնք պայմանաւորված են արտադրութեան մեջ նրանց տեղաբաշխումով, որը որոշվում է միայն տեխնոլոգիայով կամ տեխնիկայով, արտադրական պրոցեսների կազմակերպումով: Քայց արտադրութիւնում մարդկանց ամեն մի գիտակցական տեղաբաշխում արդէն նմաբարում է, որ մարդիկ որոշակի հասարակական հարաբերութիւնների մեջ են, որոնք հնարավորութիւն են տալիս իրացրոծիկ աշխատանքի պրոցեսը:

Մարդկանց միջև տնտեսական հարաբերութիւնները իրենցից ներկայացնում են անհնից սուսց Հենց արտադրութեան պրոցեսով թելադրվող սեփականատիրական հարաբերութիւններ: Արտադրված նյութական բարիքները պետք է սպաւմեն Քայց որնէլ արջուլը սպաւելու համար մեարդիկ պետք է նախապես յուրացնեն այն Առանց յուրացնեն չկա սակ արտադրութիւնը Վեմեն մի արտադրութիւնը, — զրիկ է Կ. Մարքսը, — անհատի կողմից բնութեան աւարկաների յուրացումն է հասարակական որոշակի ձևի սահմաններում և նրա միջոցով: Այդ առումով արտադրողին կրիսի առէլ, թէ սեփականութիւնը (յուրացումը) արտադրութեան պայմանն է՝ 1:

Արտադրամիջոցների յուրացումը ձնում է մարդկանց միջև առանձնահատուկ հասարակական փոխհարաբերութիւնները: Մարդկանց այդ փոխհարաբերութիւնները, որոնք համապատասխանում են նրանց վերաբերմունքին արտադրութեան միջոցների նկատմամբ և ինչպես իրենց, այնպես էլ ուրիշների աշխատանքի արդյունքների նկատմամբ, կոչվում են սեփականատիրական հարաբերութիւնները: Նշյալ հարաբերութիւնները կենսամիջոցների ամբողջական արտադրումնր և դրանց օգտագործմանը մարդկանց մասնակցութեան անհրաժեշտ պայմանն են:

Սեփականատիրական հարաբերութիւնները մշտ կապված են իրերի հետ, այսինքն՝ աշխատանքի միջոցների ու առարկաների հետ, այլև աշխատանքի արդէնքի՝ արտադրանքի հետ: Դա նշանակում է, որ սեփականատիրական հարաբերութիւնը մարդու վերաբերմունքն է մի այլ

մարդու նկատմամբ իրի միջոցով: Սեփականատիրական հարաբերութիւնները իրենցից ներկայացնում են արտադրութեան պրոցեսում մարդկանց նյութական, տնտեսական օրլիկտիվ հարաբերութիւններ միմյանց հետ, որոնք արտահայտվում են արտադրամիջոցների և ինչպես իրենց, այնպես էլ ուրիշների աշխատանքի հետանքների նկատմամբ եղած նրանց վերաբերմունքում: Յ. Հնգելսը նշում էր, որ քաղաքականատնտեսութիւնը գործ ունի ոչ թէ իրերի հետ, այլ մարդկանց միջև եղած հարաբերութիւնների հետ՝ 1, թէն այդ հարաբերութիւնները անպայման կապի մեջ են իրերի հետ, իսկ որոշ պայմաններում նույնիսկ Հնգելսն են զայիս առարկայացված ձևով:

Սեփականատիրական հարաբերութիւնները կազմում են արտադրական հարաբերութիւնների էութիւնը և տարբերում են իրենց տիպով, եթէ հասարակութիւնը ամբողջութեամբ վերացած աշխատանքի միջոցների, առարկաների ու հետանքների հետ վերաբերվում է ինչպես իր սեփականի հետ, սակայ ակաւ է հասարակական սեփականութիւն տիպը: Իսկ եթէ հասարակական արտադրութեան ավյալ պայմանների (այսինքն՝ աշխատանքի միջոցների ու առարկաների) նկատմամբ, ինչպես իր սեփականի նկատմամբ փաստորեն վերաբերվում է հասարակութեան միայն մի մասը, նրա առանկին խմբերը կամ նույնիսկ առանկին անմիք, իսկ հասարակութեան մնացած մասը իրականում հեռացված է արտադրութեան այդ պայմանները յուրացնելուց, ապա ակաւ է մասնավոր սեփականութեան տիպը:

Քուրծումակն տեսարանները սեփականատիրական հարաբերութիւնները սովորաբար հանգիսնում են իրավական հարաբերութիւնների, զույլի նկատմամբ մարդկանց կամային հարաբերութիւններին, ամուցեկիով սեփականութեան սոցիալ-տնտեսական բովանդակութիւնը: Այդ հիման վրա նրանք սեփականութեան մէկ որոշակի տիպը, այն է՝ մասնավոր սեփականութիւնը, ակզարարում են որպէս մարդու բնական իրավութիւն, ուստի և զա համարում են սրբազան և անձեռնմխելի:

Բեղիքիտեսները սեփականութիւնը դիտում են որպէս միայն արտադրական հարաբերութիւնների որոշ տիպի արտաբին, իրավական արտահայտութիւն, այլ ոչ թէ որպէս դրանց էութիւն: Ընդ որում նրանցիկ շատերը ճիշտ չեն մեկնում Կ. Մարքսի հայտնի կարծիքն այն մասին, որ սեփականատիրական հարաբերութիւնները արտադրական հարաբերութիւնների իրավական արտահայտութիւնն են: Կ. Մարքսը և Յ. Հնգելսը, քննարկելով սեփականատիրական հարաբերութիւնները, բուսիլիքս բնագծի են, որ իրավական հարաբերութիւնները այն տնտեսական օրլիկտիվ հարաբերութիւններն արտացոլում են միայն, որոնք

1 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 12, стр. 713.

1 Կ. Մարքս և Յ. Հնգելս, Ըտիր երկր, Կ. 1, էջ 704:

Հատուկ են արտադրության ամեն մի տվյալ եղանակին: Միմիայն այս առումով կարելի է ամբողջ Կ. Մարքսի այն գիտադրվյալներ, որ սեփականատիրական հարաբերությունը (որպես սեփականության իրավունք) արտադրական հարաբերությունների իրավական արտահայտությունն է՝:

Արտադրական հարաբերությունները, կամ, որ միևնույն է, լայն առումով սեփականատիրական հարաբերությունները, ամբողջ սիստեմի հիմք կազմում են արտադրության միջոցների սեփականության հարաբերությունները: Արտադրամիջոցների սեփականության տիպից են կախված հասարակության անդամների ընդհանուր և մասնավոր տնտեսական շահերի բավանդակությունը և կոնկրետ գոյացություններ, հասարակության սոցիալական կառուցվածքը, մարդկանց տեղն ու դիրքը հասարակական արտադրության մեջ:

§ 2. Հարաբերակցությունը արտադրության, բաշխման, փոխանակության և սպառման միջև

Տնտեսական հարաբերությունները չեն սպառվում արտադրության անմիջական բուն պրոցեսում կազմ հասարակական հարաբերություններով, որոնք թևակալեն ամենակարևորներին են, լայն և աշխպես արտադրական հարաբերությունների ամբողջ սիստեմի մի կողմն են միայն: Ամենակարևոր լինելով, հարաբերությունները արտադրության պրոցեսում օբյեկտիվորեն արտահայտում են մարդկանց և արտադրության նյութական պայմանների (արտադրամիջոցների) միավորման այս կամ այն եղանակը, իսկ դրա շնորհիվ էլ արտադրության անմիջական պրոցեսում մարդկանց հարաբերությունները որոշում են մարդկանց միջև կատարվող գործունեության փոխանակումը և տնտեսական այլ հարաբերությունները:

Եթե հասարակության մեջ իշխում է արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, ապա նրանում էկոնոմիկան զարգանում է տարերային անտնտեսական օրենքների ազդեցությամբ, գործունեության փոխանակումը անխտանափելիորեն կատարվում է մարդկանց միջև սրբ-ցակցության տարրեր ձևերով և մարդու կողմից մարդու շահագործման զանազան ձևերով: Իսկ եթե հասարակության մեջ իշխում է արտադրության միջոցների հասարակական սեփականությունը, ապա նրանում բաշխակալում է մարդու կողմից մարդու շահագործումը, տնտեսությունը զարգանում է պլանաչափորեն, հասարակական արտադրությունը ենթարկվում է մարդկանց անող պահանջունքների բավարարմանը, աշխատանքային գործունեության փոխանակությունը կատարվում է մարդկանց ընկերական համագործակցության, բարեկամական մրցու-

թյան ու փոխադարձ օգնության ձևով: Մարդկանց և արտադրության միջոցների միացման եղանակը, որոշելով նրանց միջև գործունեության փոխանակման ձևը, սակայն կերպով արտահայտում է մարդկանց ենթարկումը տվյալ արտադրական հարաբերություններին: Սեփականատիրության տիպը որոշում է գործունեության փոխանակման բնույթը, նրանցից է կախված, թե այս փոխանակությունն արդյոք գիտակցաբար կարգավորվի, պլանայի կիսին, թե՛ տարերային:

Անմիջական արտադրության հարաբերությունները որոշում են նաև հասարակության կողմից ստեղծվող նյութական կենսամիջոցների հետագա օգտագործման բնույթը, այսինքն՝ բաշխման կամ պատասխան հարաբերությունները: Եթե արտադրության վնասական միջոցները կենսաբնույթված են ամբողջ հասարակության ձեռքում (ինչպես այդ տեղի է անկում սոցիալիզմի ժամանակ), և մարդկանց միջև կատարվող գործունեության փոխանակումը ընթանում է ընկերական համագործակցության ու փոխօգնության ձևով, ապա ստեղծված նյութական բարիքները պատկանում են ամբողջ հասարակությանը: Այդ դեպքում դրանք բաշխվում են հօգուտ ամբողջ հասարակության՝ յուրաքանչյուր աշխատավորի պահանջունքների ավելի լրիվ բավարարման և նրա բազմակողմանի զարգացման նպատակով: Իսկ եթե արտադրության միջոցները մոնոպոլացված են ատանձին անձանց կամ խմբերի կողմից, իսկ գործունեության փոխանակումը կատարվում է մարդու կողմից մարդու շահագործման ձևով, ապա այդ արտադրության արդյունքները յուրացվում են ատանձին անձանց կամ խմբերի կողմից՝ հարստանալու նպատակով: Այդպիսի հասարակության մեջ անխտանափելի են հարստության և աղքատության, շահյույթունների և կարիքի ցայտուն հակադրությունները, աշխատավորները հարկադրված են լինում մշտապես դժման պայթաբ մեղ իրենց կենսագործունեության պահպանման ամենաանհրաժեշտ պայմանների ապահովելու համար: Աշխատավորը մարդու անձնավորությունը այդ հասարակության մեջ ձեռք է:

Անմիջական պարաարտադրության վերաբերող գործունեության փոխանակումից պետք է տարբերել արդյունքների փոխանակումը: Բայց դա էլ է որոշվում արտադրության բնույթով: Նայած արտադրության հարաբերություններին՝ փոխանակությունը կարող է կամ սլանալուսով, կամ տարերային բնույթ ունենալ: Դրա հետ միասին բաշխումը կարող է լինել կամ որպես անմիջական բաշխում, կամ անպիսին, երբ աբզյունքն ստեղծվում է որպես արքանք, ուստի և բաշխվում ու վերարաշխվում է ապրանքային փոխանակության այս կամ այն ձևի միջոցով: Հասարակական զարգացման որոշ փուլերում արդյունքի փոխանակում

Վ ՏՊ ՝ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 16, стр. 26

հատարվում է՝ անուծախի ձևով՝ փողի միջոցով՝ Բայց ապրանքային փոխանակությունը մշտապես երևում է։ Մարքեթ-լենինիզմի կասկեկները բազմիցս նշել են, որ հասարակության զարգացման որոշ փուլում այն կվերանա։

Տնտեսական հարաբերությունների կարևորագույն ձևերից մեկը սպառման բնագավառի հարաբերություններն են։ 4. Մարքեթ սպառուցել է, որ արտադրությունը և սպառումը, թեև դրանք իրենցից ներկայացնում են հակադիր պրոցեսներ, միմյանց չեն բացառում, այլ ավելին, փոխադարձաբար թափանցում են մեկը մյուսի մեջ և մեկը առանց մյուսի գոյություն չունեն։ Իհարկե, սպառումը որպես կենսաբանական կամ տեխնոլոգիական պրոցես քաղաքատնտեսությունը ըրենություն չի անում։ Դա այլ գիտությունների խնդիր է։ Բայց, որպես արտադրության նպատակ, որպես ռազմ վերարտադրության շղթայում, սպառումը միշտ մտել է և մտնում է անտեսական ուսումնասիրությունների մեջ։ Այսպիսով, արտադրությունը, բաշխումը, փոխանակումը և սպառումը սերտորեն միահյուսվում են իրար, ներկայացնելով վերաաղարկյալ միասնական պրոցես։

Մարդկանց հարաբերությունները արտադրության անմիջական պրոցեսում, ինչպես արդեն նշվել է, որոշում են մյուս բոլոր տնտեսական կապերը և հարաբերությունները հասարակության մեջ։ Արտադրական հարաբերությունների տարրեր կողմեր իրենցից ներկայացնում են կուտամբոզություն, որի բոլոր մասերը փոխներկայացնում են մեջ են զտելվում։ Այսպես, սեփականատիրական հարաբերությունները, կամ աշխատուժի և արտադրամիջոցների միավորման եղանակը, կրում են գործունեության փոխանակման հարաբերությունների ազդեցությունը, վերջինները նպաստում են սեփականատիրական հարաբերությունների ստեղծմանը և մերթապանեցմանը կամ թուլացմանը, արտադրության միջոցների սեփականատիրերի հարստության աճմանը կամ նվազմանը և այլն։

Արտադրության և բաշխման հարաբերությունները նույնպես փոխադարձ ներգործության մեջ են, ազդելով միմյանց վրա։ Օրինակ, բաշխումը աշխատավարձի, պարգևների և այլ վճարումների ձևով անմիջականորեն հանդես է գալիս որպես աշխատանքի արտադրողականության բարձրացման միջոց։ Բաշխման հարաբերությունները ոչ միայն փոխազդում են արտադրության հարաբերությունների հետ, այլև թափանցում են նրանց մեջ։

Բաշխումը, ինչպես ցույց է տրվել վերևում, հանդիսանում է էկոնոմիկայի հարաբերականորեն ինքնուրույն ոլորտ։ Բաշխման հարաբերությունները արտադրության հարաբերությունների հակառակ կողմն են իրենցով արտադրության հետևանք, բաշխումը միևնույն ժամանակ հենց արտադրության տարր է։ Այն անխելեխորեն կապված է արտա-

դրության միջոցների սեփականության և դրան համապատասխան՝ մարդկանց միջև տեղի ունեցող գործունեության փոխանակման եղանակի հետ։ Այն իրացվում է նաև սահմանակա սպառման համար աշխատանքի արդյունքների փոխանակման մեջ։ Փանի որ քաղաքում արդյունքների բաշխում լինելուց առաջ, — նույն էր 4. Մարքեթ, — այն՝ 1) արտադրության գործիքների բաշխում է և 2) — որ իրենից ներկայացնում է նույն հարաբերության հետագա սահմանումը — հասարակության անզամաների բաշխումն ըստ արտադրության տարրեր տեսակների...»։

Մակալն փոխներգործող ռազմերի, կամ արտադրական հարաբերությունների կողմերի, միասնության մեջ, ինչպես նաև տարբերությունների յուրաքանչյուր միասնության մեջ, կա այնպիսի կողմ, որը ապահովում է հենց այդ միասնությունը։ Արտադրական հարաբերություններում որպես այդպիսի կողմ հանդես են գալիս արտադրամիջոցների սեփականատիրական հարաբերությունները։ Ահա ինչու այս կամ այն պրոցեսների ու երևույթների ուսումնասիրելու զեպում քաղաքատնտեսությունը էլ նույն է առաջին հերթին արտադրամիջոցների սեփականությունից։ Փաղաքատնտեսությունը շաղկապում է բոլոր տնտեսական հարաբերությունները մի միասնական ամբողջության մեջ և դրանով բնորոշում հասարակական կապի բնույթը։

Այսպիսով, արտադրական հարաբերությունները ամենաընդհանուր գծերով բնորոշվում են նրանով, թե ով է իրականում յուրացնում արտադրության միջոցները, ով է հանդիսանում դրանց սեփականատերը, ով է որչիկտիվորեն արտադրության միջոցների այնպես վերաբերվում, ինչպես իր միջոցներին։ Արտադրամիջոցների վերաբերյալ հարաբերությունների որոշում են հարաբերությունների ամբողջ սխեմայի արտադրության բաշխման, փոխանակման ու սպառման ոլորտներում։

Արտադրական հարաբերությունների զարգացման ու փոփոխման գործում վճռական գեր է խաղում արտադրողական ուժերի զարգացումը։ Արտադրական հարաբերությունները որոշվում են հասարակական արտադրողական ուժերի մակարդակով ու բնույթով։ Երկու փոխադարձաբար պայմանավորված կողմերի՝ արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների միասնությունը կազմում է արտադրության եզրանքը։

§ 3. «Տնտեսական հարաբերություններ» հասկացության բնութագրում և ունիզոնիստական աղավաղումների ճշնադատությունը

4. Մարքեթ տեսականորեն արտադրական հարաբերությունները ստանձնացրեց մյուս բոլոր հասարակական հարաբերություններից,

¹ K. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 12, стр. 722.

ցույց տվեց, որ նրանց հիմքում ընկած է արտագրամիջոցների սեփականության որոշ ձևը, որ արտագրական հարաբերությունների սխառմամբ վճռական տեղը պատկանում է արտագրության պրոցեսում գոյություն ունեցող հասարակական հարաբերություններին, որոնք առաջնային են մյուս բոլոր հարաբերությունների համեմատությամբ: Հենց այդ իմաստով էլ սովոր է, որ արտագրական հարաբերությունների սխառմամբ ստանալով իր ստիճանը արտագրության հարաբերություններին է պատկանում:

4. Մարքոից առաջ տեսնապետները լչփտեին այնպիսի կատեգորիայի մասին, ինչպես արտագրական հարաբերությունները: Բուրժուական տեսնապետները ամեն կերպ ձգտում էին իրարից անջատել տնտեսական այնպիսի ուսույթողները, ինչպիսիք են նյութական քարտիքների արտադրումը, դրանք բաշխումը, փոխանակումն ու սպառումը: Նրանք գտնում էին, որ հասարակական այդ բոլոր պրոցեսները ինքնուրույն են և իրար հետ առնչված են միայն արտաքինային, արտագրանքի շարժման հաջորդականությամբ: Ընդ որում սպառումը նրանք մեկնաբանում էին միայն որպես արդյունքի ունեցում և այն հակադրում էին արտադրությանը, որպես արդյունքի ստեղծման պրոցեսի, նրանց կարծիքով՝ անփոփոխ պրոցեսի, որ որոշվում է բնության համընդհանուր օրենքներով: Այստեղից բուրժուական տեսնապետները հետևություն էին անում, թե ոչ արտագրությունը, ոչ սպառումը քաղաքատնտեսության կողմից ուսումնասիրության ենթակա չեն, որ նրա առարկան կարող է լինել կամ բաշխումը, կամ արդյունքի շրջանառությունը: Այդպիսով բաշխումը նրանց կողմից վերածվում էր ինքնարժեքի պրոցեսի, կարվում էր հիքից, որի հետևանքով լայն ապարքվ էր բացվում կապիտալիզմի ամենամեծ հայտ շատազգույնության համար: 4. Մարքսը բացահայտեց բուրժուական տեսնապետների պնդումների գիտական սեռակությունը, ցույց տալով, որ նրանք բոլորը, տեսնելով արտագրության, բաշխման, փոխանակման ու սպառման տարբերությունները, չեն տեսնում և չեն ուզում տեսնել դրանց միասնությունը և փոխադարձ կապը:

Ապրանքային արտագրության երևան գալու հետևանքով ապրանքների փոխանակումը մշակական միջանկյալ օղակ դարձավ արտագրության, բաշխման ու սպառման միջև և մեծ նշանակություն ստացավ ժարդկանց տնտեսական հարաբերությունների գործում: Բուրժուական քաղաքատնտեսությունը հաճախ ձգտում էր մարդկանց միջև բոլոր արտագրական հարաբերությունները հանգեցնել ապրանքային փոխանակության հարաբերություններին: Մերիանադիխսաները, որոնք թքաղաքատնտեսություն տերմինը առաջինն են դրածուել, գտնում էին, որ հասարակության մեջ տնտեսական հարաբերությունների հիմնական ար-

տահայտությունը շրջանառությունն է: Այդ միակողմանիությունից բխելով լուրջան շխարհացան խուսափել նաև բուրժուական քաղաքատնտեսության կապիկներ Ազամ Սմիթը և Դավիդ Ռիկարդոն Թեյնսն նրանք սահմանել էին, որ հասարակության հարստության աղբյուրը ապրանքներն արտադրող աշխատանքն է, բայց արտագրությունը բերնելու անսակեղից շխարհացան զուր գալ նրա թեղանուր, ապապատմական բնորոշումներից և մարդկանց տնտեսական բոլոր հարաբերություններ վերջին հաշվով հանգեցրին ստարկանելի, ապրանքների հարաբերություններին: Բուրժուական կապիկ քաղաքատնտեսության հենց այդ սխալ հետևությունն էլ կապիկից զուհիկ (վուլգար) տնտեսագետները:

Տարբերաշեռնի գործող շուկայում ապրանքների շրջանառությունը վուլգար տնտեսագետները հուշակեցին որպես առաջնային, որպես ապրանքների արտագրությունը որոշող, իսկ քաղաքատնտեսության ստարկան՝ որպես զնադրացման, արդյունքների բաշխման կամ ապրանքների՝ տնտեսադար սուրբիկի կողմից իրագործվող փոխանակման վերածությունը:

Բուրժուական վուլգար տնտեսագետների պնդումները արտագրության հանդեպ շրջանառության առաջնության՝ մասին և այն մասին, թե միայն բաշխումն է իրենից ներկայացնում քաղաքատնտեսության ստարկա, կրկնում էին մարքսիզմի սեղիցնիխսաներ՝ սեֆորմիստներ Ո. Զիլֆերդինգը, Յ. Բաուերը, Կ. Ռենները և ուրիշներ: Հենկելով նրանց կեցեղեցիայի վրա, այժմյան աշ սոցիալ-դեմոկրատները պաշտպանում են արտագրամիջոցների կապիտալիստական սեփականության գոյությունը, կոչ անելով սահմանափակել նրա վրա ներդրումը բուրժուական պետության հարկային քաղաքականությունը նրանց նկատմամբ լիսվին կիրառելի է 4. Մարքսը առանձն այն մասին, որ վուլգար սոցիալիզմը... բուրժուական տնտեսագետներից ընդօրինակել է բաշխումը որպես արտագրության եղանակից անկախ մի բան գիտելու և մեկնաբանելու ձևը և այդտեղից էլ դործն այնպիսի պատմաբանություն, իր սոցիալիզմը պատվում է զեբազեբապակե բաշխման հարցերի շուրջը²:

4. Ապրանքային շատագրություններ մասնատում են տնտեսական հարաբերությունների կողմերի միասնությունը և տնտեսական հարաբերությունները հակադրում արտագրական հարաբերություններին: Արտագրական հարաբերությունները նույնացնելով սեղիցնիխսան պրոցեսների հետ, նրանք միայն շուկայական հարաբերություններն են համարում տնտեսական հարաբերություններ:

¹ Գիտական գրականության մեջ զա հայտնի է սեփականային կեցեղեցիայ սեկցիա:

² 4. Մարքսը, Գոթայի ծրագրի բենեգոտությունը, 1848, էջ 21.

Դուրծուական որոշ հեղինակներ պնդում են, թե ստեղծագիտական և օճաարական-արտադրական հարաբերություններ տերմինների բաժանակցությունը բոլորովին տարբեր է, թե ստեղծություն (ЭКОНОМИЯ) բառի իմաստային կոդը հասարակագրորդ է խնայողություն՝ հասկացողությունը։ Ուստի, նրանք կարծիքով, ստեղծողության (ЭКОНОМИЧНОСТЬ) լսականը կարող է լինել միայն խնայողական վերաբերմունքը մարդու պահանջմունքների համեմատությամբ սահմանափակ բարբեղների նկատմամբ, աշխատանքի սահմանափակությունը և զրա օգտագործման հրկքնարական բնույթը։ Ընդ որում այդ խնայողությունը գրանցվում է իբր թե արտադրության պրոցեսում և զրանց զուրա, հասարակության մեջ և հասարակությունից զուրա, արտահայտվելով ոչ թե մարդկանց հասարակական հարաբերությունները միմյանց նկատմամբ, այլ մարդու հարաբերությունը բնության նկատմամբ։ Իսկ հասարակական հարաբերությունները մարդկանց միջև հաստատվում են իբր թե նրանց ամեն մի գործունեության պրոցեսում։ Այդ հարաբերությունները բազմազան են և խնայողության հասկացությունը չեն ներառում։ Այսպիսից հասարակական-արտադրական հարաբերությունները հայտարարվում են ոչ-ստեղծական և պնդում, թե քաղաքատնտեսության օրյեկտ կարող է լինել մարդկանց հարաբերությունը բնության նկատմամբ, և ոչ թե հասարակական-արտադրական հարաբերությունները։ «Տնտեսություն» (ЭКОНОМИЯ) բառի հասկացության նկատմամբ այդ էքսպոսիտիաների օրյեկտիվ իմաստն է՝ ձգտել քաղաքատնտեսությունը օրյեկտ կարող կանց ստեղծական գործունեության հիմքերի հիմքի — սեփականատիրական հարաբերությունների և զրանց համապատասխանող գործունեության փոխանակության ու բաշխման հարաբերությունները — ուսումնասիրությունը։

Բուրծուական ստեղծագիտությունն ու ընդգնխտանքը խզում են արտադրական հարաբերությունների օգակների միասնությունը, անշատում են շրջանառության պրոցեսը նրան կանխորոշող արտադրության պրոցեսից, հեմմացնում են արտադրական հարաբերությունների պետականում սեփականության հարաբերությունների հիմնարական նշանակությունը և այդպիսով ազավազում իրականությունը։ Արտադրության կապիտալիստական նշանակումը ստաբազող հակամարտությունները բողաքվում են, որի նկանաքում բուրծուական հասարակության զարգացման օրյեկտիվ պատկերը աշավազվում է։

1 Ի դեպ, կհատենք, որ ստեղծություն (ЭКОНОМИЯ) կամ օկոնոմիա բառը նշանակում է ոչ միայն խնայողություն, այլև ստեղծության (ХОЗЯЙСТВО) հիմունքը և նրա կառավարումը։ Նենց այդ իմաստով էլ այս տերմինը հաճախվել է իր ծագման պահին։ Այսպես, Արխանգելսկը գրել է. թե կոնոմիային պետք է վերաբերեն երկու ֆունկցիաներ էլ՝ ստեղծության (ХОЗЯЙСТВО) հիմունքը և նրա կառավարումը։

Բուրծուական վուզար ստեղծագիտությունն ու ընդգնխտանքի կազմից բազաքատնտեսության ստարգային սրբող բերողունները կամավական են, կեղծ-գիտական, կպատակ ունենալով պաշտպանելու արտադրության միջոցների կապիտալիստական սեփականությունը, սասի և ժամանակակից բուրծուական հասարակության ստաշաղթմական ուժերին խանկարում են ճանաչելու կապիտալիզմի զարգացման իսկական սնեղեցները։

§ 4. Արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների օրյեկտիվական միասնությունը։ Հասարակական-տնտեսական ֆորմացիա

Արտադրողական ուժերի 4. Մարքսը նշում էր, որ քաղաքատնտեսություն և արտադրական հարաբերությունների միասնությունը միասնականությունն է արտադրողական մեջ 4. Ի. բյուրեղ — կենիեր գրել է. «Քաղաքատնտեսությունը ամենեկին արտադրությունը» չի զբաղվում, այլ զբաղվում է արտադրության մեջ մարդկանց ունեցած հասարակական հարաբերություններով, արտադրության հասարակական կարողով, Միսթամանակ մարքազմ-լեկեիքի կլասիկները մեծ ուշադրություն էին զարձնում արտադրողական ուժերին, որոնց կորեորապոյն բաղկացուցիչ մասը աշխատավորներն են։

Արտադրական հարաբերությունները հանգիստում են արտադրողական ուժերի զարգացման հասարակական ձևը։ Այդ պատճառով էլ քաղաքատնտեսությունը ստամնաբերում է արտադրական հարաբերությունները արտադրողական ուժերի հետ փոխազարծ կապի մեջ։ Ձեր միշտ անդիպելուրեն կապված է բուրծուականության հետ, կախված է նրանից։

Արտադրողական ուժերը, նրանց զարգացման բնույթն ու մակարգուր արում են մարդկանց ստեղծական հարաբերությունները՝ արտադրության միջոցների սեփականության ձևը, իսկ դրանով էլ՝ արտադրողական հարաբերությունների բուրջ հաշորդող օգակները։ Իսկ վերջիններս հեղափոխական հակառակ ներդրություն են անում արտադրողական ուժերի վրա։ Նրանք կամ սպահնվում են արտադրողական ուժերի ստաշրեկաց հզոր շարժումը, կամ զանգաղեցնում, արգելակում են այն, իսկ որոշ պայմաններում նույնիսկ ավերման են մատուցում արտադրողական ուժերին։ Տեսական խոշոր սխալներ է հաղցնում արտադրա-

1 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 12, стр. 712.
2 Կ. Ի. Անկե, երկեր, Ե. Հ. էջ 57.

կան հարաբերությունների այն ակտիվ դերի մտացույթյան մասունքը, որ նրանք կատարում են արտադրողական ուժերի զարգացման գործում: Այդպիսի սխալ է, օրինակ, տարբերացումն ու ինքնահաստատությունը, որ իր ժամանակին պտույտաբանական էին բուսաբանականները, որոնք հանդես էին գալիս կոնկրետիվացման դեմ՝ հանուն այն բանի, որ պայուցողական տեսնաստիություններին հնարավորություն տրվեր զեպի կոնկրետիվ տեսնաստիության զեպ տարբերացումը, ինքնահաստատությունը:

Քաղաքատնտեսությունը ուսումնասիրում է, թե տվյալ արտադրական հարաբերությունները պայմաններում ինչպես են օգտագործվում արտադրողական ուժերը: Դրա հետ միասին հասարակության արտադրողական ուժերը այն օրյակտիվ պայմաններն են, առանց որոնց կոնկրետ հաշվառման հնարավոր չէ ուսումնասիրել արտադրողական հարաբերությունները: Մարդկանց կողմից արտադրամիջոցների գործադրումը, որը պայմանավորված է այդ միջոցների սեփականատիրական հարաբերություններով, ինքնըստինքյան դառնում է տնտեսական հարաբերությունների և որպես այդպիսին մտնում է քաղաքատնտեսության անարդիվ մեջ: Այս մտնելու ամենայն որոշակիությունը բնօրգծում էր Կ. Մարքսը՝ «Մեքենան», — գրել է նա, — նույնքան թիչ է տնտեսական կատեգորիան, ինչպես երբ, որը թաշում է գոյթանը: Մեքենաների ժամանակակից գործադրումը մեր արդի տնտեսակարգի հարաբերություններին մեկն է, բայց մեքենաների շահագործման եղանակը ամենևին էլ այն չէ, ինչ իրենք՝ մեքենաները¹:

Քաղաքատնտեսությունը, արտադրական հարաբերությունները ուսումնասիրելով որպես արտադրողական ուժերի զարգացման ձև (կամ, այլ կերպ ասած, արտադրամիջոցների օգտագործման հասարակական եղանակ), որանով իսկ հաշվի է առնում տեխնիկական առաջընթացի ուղղություններն ու տեխնոլոգիան, այդ առաջընթացի վրա արտադրական հարաբերությունների ներգործությունը և զրա ստիպալուրենական հետևանքները:

Արտադրական հարաբերությունները որոշում են հասարակության ստիպալական կառուցվածքը: Արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը առաջացնում է հասարակության բաժանումը հակադիր դասակարգերի: Դասակարգերի գիտական խորիմաստ բնորոշումը տվել է Կ. Ի. Լենինը՝ «Դասակարգերի կազմում են մարդկանց մեծ խմբերը», — գրել է նա, — որոնք տարբերվում են հասարակական արտադրության պատմականորեն որոշ սխեմանում իրենց զբաղված տեղով, արտադրության միջոցների նկատմամբ

իրենց ունեցած (մեծ մասամբ օրենքներով ամրապնդված և ձևակերպված) վերաբերմունքով, աշխատանքի հասարակական կազմակերպման մեջ իրենց ունեցած դերով և, հետևաբար, հասարակական հարստության այն բաժնի ստացման եղանակներով ու շարժիներով, որ իրենց տրամադրության տակ ունեն: Դասակարգերը մարդկանց այնպիսի խմբերն են, որոնցին մեկը կարող է չուրացնել մյուսի աշխատանքը, հասարակական տնտեսության որոշ կացութթաման մեջ նրանց առել տարբերություններով²:

Շահագործվող դասակարգի աշխատանքի արդյունքները միշտ չուրացվում են շահագործողների դասակարգի կողմից: Անմիջական արտադրողները շահագործվող աշխատավորները, իրենց ստեղծած հարստությունից ստանում են իրենց աշխատանակությունը պահպանելու համար հատկացվող մասը միայն: Ընդ որում այդ մասը ոչ միշտ է բավարար աշխատավորի և նրա ընտանիքի նույնիսկ նորմալ կենսապայմանների պահպանման համար:

Սակայն դասակարգերը հավերժական երևույթ չեն: Մարդկային հասարակությունը իր ուլին սկսել է անդատակարգ ստիպալական կառուցվածքից: Դասակարգեր չի ունենալու նաև կոմունիստական հասարակությունը: Կոմունիզմի ժամանակ դասակարգային տարբերությունների մնացորդները կանհետանան:

Դասակարգային հասարակության մեջ մարդկանց տնտեսական հարաբերությունները քաղաքատնտեսության ուսումնասիրում է ամենինց առաջ որպես դասակարգի հարաբերությունները: Այդ պատճառով քաղաքատնտեսությունը չի կարող չուսումնասիրել դասակարգային հարաբերությունների նաև այնպիսի ձևեր, ինչպիսին է պետությունը: «... Պետությունը մտնողությունը վերցրած», — բնօրգծում էր Ց. Ընգելը, — հանդիսանում է արտադրության իշխող դասակարգի տնտեսական պահանջմունքների խտացված արտահայտությունը միայն...»³:

Արդի պայմաններում կապիտալ լայնորեն օգտագործվել է պետությունը, նպատակ ունենալով պաշտպանել կապիտալիստական արտադրական հարաբերությունները և ամրապնդել իր տնտեսական դիրքերը: մոնոպոլիստական կապիտալիզմը ավելի ու ավելի է փոխարկվում պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի:

Բուրժուական պետության ներգործությունը Լենինի կալի վրա ներկայումս լայն ծավալ է բնորոշում: Այն իրագործվում է մոնոպոլիստա-

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 27, стр. 405.

¹ Կ. Ի. Լենին, Ցրվեր, է. 29, էջ 515.

² К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 21, стр. 310.

կան կապիտալի պահանջով և նրա շահերի համար: Կապիտալիստական երկրներում հասարակության տնտեսական կյանքին միջամտելը, պետական սեփականության ընդլայնումը, բուրժուական պետության ուժի հետ մոնոպոլիաների ուժի միացումը լին վերացնում, սակայն, կապիտալի տիրապետությունը, ինչպես այդ պնդում են այ սոցիալիստներն ու սեփականիտները: Պետական սեփականությունը բնույթը պարզելու համար անհրաժեշտ է պարզել, թե մարզկանց ինչպիսի՞ն խմբեր, ինչպիսի՞ դասակարգերն են ինչպիսի դեր խաղում պետության մեջ: Բնորոշելով բուրժուական պետական սեփականության բնույթը, Ֆ. Էնկելը գրել է, որ բուրժուական պետությունը հանդիսանալով արտադրության մեջ ընկերի սեփականատեր, աստարգ է գալիս որպես կոլեկտիվ կապիտալիստ, այսինքն՝ ներկայացնում է կապիտալիստների դասակարգը ամբողջությամբ առած:

Սոցիալիստական հեղափոխությունը և պրոլետարիատի ղեկավարության հաստատումը ստեղծում են պետության սկզբունքորեն նոր տիպ, որը դառնում է մոնոպոլիա՝ բանվոր դասակարգի կողմից գլխավորվող սոցիալիզմի ճնշող մեծամասնության գործիքը, իսկ ապա, շահագործող դասակարգերի լիկվիդացման հետևանքով՝ ամբողջ սոցիալիզմի գործիքը: Որքան ավելի աշխատավոր մասսաներ են ներգրավվում պետության կառավարման գործում, այնքան ավելի լրիվ է ծավալվում իսկոպիսի գեմալիստները: Ջարդացած սոցիալիստական հասարակության կառուցման պրոցեսում տեղի է ունենում պրոլետարիատի ղեկավարության պետության վերածումը համաժողովրդական պետության, իսկ կոմունիզմի բարձրագույն փուլում այդ պետությունը փոխարինելու կցա կոմունիստական հասարակական ինքնավարությունը:

Պետությունը որպես բազաբական վերնաշերքի հիմնական մեծ ուսումնասիրվում է իրավաբանական և այլ գիտությունների կողմից: Բազաբատենությունը պետությունը դիտում է որպես բազիսի միացնող տնտեսական գործուն ուժ: Պրա հետ մեկտեղ մարդկանց տնտեսական շարաբրությունների ուսումնասիրությունը հնարավոր է անտեսական բազիսի վրա պետության ներգործությունը հաշվի առնելով միայն: Կ. Մարքսը բազիսից նշել է, որ բազաբատենությունը պրոլետներից է: Այսպիսով այդ պետությունը արտադրական շարաբրությունների վրա: Արտադրության պատմականորեն որոշակի եղանակը իրեն համա-

պատասխանող վերնաշերքի հետ կոչվում է սոցիալ-տնտեսական ֆորմացիա:

§ 5. Քաղաքատնտեսության մեթոդը

Մատերիալիստական գիտելիության մեթոդի կիրառման բազաբատենությունը մեջ

Հասարակական կյանքի ուսումնասիրությունը բարդ պրոցես է: Պա ընթանում է «Էկոնոմիկի հայեցողությունից դեպի արտաբան մասնորոշությունը և դրանից դեպի պրակտիկան»: Կոնկրետ տնտեսական կյանքի կենդանի հայեցողությունը ծանոթացնում է տնտեսական կյանքի լուր արտաքին կազմին: Բայց բազաբատենությունը չի նկարագրում սոսկ տնտեսական երկվույթներն ու պրոցեսներն արտաքին կողմը նրա բոլոր պատճանակներով անհերքելի ու մասնավորություններով: Այն թափանցում է խորը՝ ուսումնասիրվող երևույթի լուրջան մեջ: Այսպիսին է, գրել է Վ. Ի. Լենինը, և՛ ընդգիտություն, և՛ բազաբատենություն, և՛ պատմության ընթացքը:

Սարդկանց անմիջակամորեն ընկալվող պրակտիկ գործունեությունը գիտական իմացություն միայն նշակում է, Այն սալի է փաստը, որոնց կուտակումով իր ուղին է սկսում յուրաքանչյուր գիտություն: Ասկայն փաստերի ամեն մի կուտակում չէ, որ պիտան է գիտական հետազոտման համար: Էմպիրիզմի մեջ լրինվելու համար պետք է վերցնել ոչ թե պատճանակներին մեղքը ընկած առանձին փաստեր, այլ փաստերի ամբողջությունը, որոնք վերաբերում են ուսումնասիրվող երևույթին և համակողմանի ու սերտորեն փոխադարձ կապի մեջ են միմյանց հետ: Իրականությունը գիտականորեն փոխադրվելու այդ պահանջը այնքան շատ է անհրաժեշտ, որքան ավելի բարձր է հասարակության գործացման ստաբիլիտետ, որքան ավելի բարդ ու բազմապիսի են տնտեսական կյանքի պրոցեսներն ու երևույթները, որքան ավելի լայն են տնտեսական կապերի տեղիտարբայ մասշտաբները:

Բայց փաստերի իմանքը ինքնարտինքյան նշանակում է միայն իրականություն գիտական ճանաչման սկզբը՝ անհրաժեշտ է քրոնոլոգիա աշխատանք կատարել հավաքված փաստերի վրա, որպեսզի հայտնի ընդունելու հետևում թարմված էությունը, կարգավորվի ու սխտեմավորվի պատմական նյութը, նրանում գտնվի զիխավոր օգակը, որից կուտակվող կարելի է դուրս բաշել հասարակության տնտեսական կյանքին վերաբերող հարցերի ամբողջ շղթան: Իսկ այդ կարելի է անել միայն բարձրանալով մինչև գիտական մասնադրության աստիճանը, որը, ինչ-

¹ Բազաբական վերնաշերքը չի սպասում բազիսի ամբողջ վերնաշերքը վերնաշերքի կազմի մեջ մտնում են հասարակական գիտաբանության բոլոր մեթոդը՝ գաղափարախոսությունը, բազաբականությունը և հասարակության՝ դրանց համապատասխանող բազաբատենությունը ու այլ հիմնարկությունները:

² Վ. Ի. Լենին, Երկեր, Կ. 30, էջ 205:

պես նշում է Վ. Ի. Լենինը, իրենից ներկայացնում է ամի շարք արտարակցականների, հասկացությունների, օրենքների ձևավորման, գոյացման պրոցես...»¹։

Գիտական արտարակցականը

Գիտական արտարակցիաները ընդհանրացված հասկացություններն են, որ մարդիկ մշակում են ուսումնասիրվող երևույթի անմիջական կոնկրետությունից վերացյալ մտածողությամբ, Գիտական իմացությունն էլակետոր օրջկետիվ իրականությունն է։ Բայց արտարակցիան դա արտացոլում է ոչ այնպես, ինչպես կենդանի հանրությունը, ոչ անմիջականորեն, ոչ սուղակի կերպով։ Մտածողության արտարահող զործանունությունը նշանակում է զննվող երևույթի մեջ ոչ-էականից վերանալու բարդ պրոցես, որպեսզի նրանում երեսն բերվի էականը։ Մշակելով արտարակտ հասկացություններ, մտածողությունը դրանով իսկ մշակում է իրականությունն ընդհանրացված արամարանական արտահայտություններ։ Օրինակ, վերանալով մարդկանց ստեղծած բազմազան առարկաներից, և, հետևապես, նաև այդ առարկաները արտադրող աշխատանքի բազմազան կոնկրետ ձևերից, մարդը մտածողության օգնությամբ մշակում է այդ առարկաների ընդհանրացված արամարանական արտահայտությունը՝ արդյունքը, որպես առարկայացված աշխատանքի մարմնացում ընդհանրապես։ Բայց դրանից սովյալ արտարակտ հասկացությունը չի դառնում իրականությունից կտրված մի բան։ Արտարահման պրոցեսում մտածողությունը չի կտրվում իրականությունից, այլ թափանցանում է նրա ներքո, նրևույթից ընթանալով դեպի էությունը։ Հակառակ դեպքում մտածողությունը կարող է մարցուն տանել նրա կողմից ճանաչվող իրականությունից մի կողմ և նույնիսկ խնդրալից զիտակցությունն ու կենսական իրական հարաբերությունները, գիտակցությունը պատկերացնել որպես զուի սուբստանցիա։ Դա բնորոշ է, օրինակ, իդեալիզմի համար, ինչպես «սուբյեկտիզմ», այնպես էլ «օբյեկտիվ» իդեալիզմի ֆազրատանստության մեջ արտարակտ հասկացություններին մերթնդմեք սուղ սուղ ունեցող կտրվելը իրականությունից արտահայտվում է նրանում, որ առանձնացվում ու բացարձակ են դարձվում տնտեսական կյանքի առանձին երևույթներ, խզվում են տնտեսական պրոցեսների որակական և քանակական կողմերը, խիստ շափազանցվում է գրանցից մեկը և այլն։

Հասարակության տնտեսական կյանքը՝ դա մարդկանց կամբից ու գիտակցությունից անկախ օբյեկտիվ իրականությունն է, թեպետև կազմավորվում, ձևավորվում է անհատների գիտակցված գործողություններով։ Արտադրական հարաբերությունները յուրաքանչյուր հասարակու-

թյան մեջ, իրենցից ներկայացնելով միասնական անխզելի ամբողջություն, կազմված են շատ կողմերից՝ իրենց հատուկ կապերի, անցումների, միջնորդությունների ամբողջ բազմապատկառությամբ։ Գրանց ներհասուկ են առարկություններ միասնության մեջ, հակադրություններ, օրոք փոխկերպրում, ծավալվում են։ Համապատասխանաբար լուծվում են նաև հակասությունները, Արտադրական հարաբերություններում են անմիջապես տեսանելի մակերևույթ, ձև է տեսանելիության ետեղվում թափված նրան բնորոշող բովանդակություն։

Ուսումնասիրվող տնտեսական երևույթներում գտնել էական կողմերը, կանկրետի ամբողջ բազմազանության մեջ հայտնաբերել զրանց կապերը, բացահայտել կողմերի փոխերգործությունը, նրանց միջև տեղի ունեցող սպալարը և այգպիսով ճանաչել կոնոմիկան ամբողջությամբ վերցրած, տիրապետել նրա զարգացման օրենքներին—բազաբանտեսության խնդիրն է։

Բայց գիտությունների համար գիտական մեթոդը, որպես ճետագրությունների գիտակրիկ-մատերիալաական սկզբունքների, գործեղանակների ու միջոցների—օրգանական ամբողջություն, միասնակ է։ Գի կարելի գիտելիքների մեկ ասպարեզում ձևավորված որոշակի առարկայի համապատասխանող հասկացությունները մեքենայացար փոխադրի գիտելիքների այլ ասպարեզներ։ Գի կարելի, օրինակ, հետազոտության միայն իրական գիտությունների հատուկ մի շարք հասկացությունների, գործնականներ ու միջոցների կիրառել հասարակական պրոցեսներին ու երևույթներին ուսումնասիրման մեջ։ Իսկապես, մի՞թե կարելի է, սանցը, արտադրական հարաբերությունները ղեկ մանրագիտականի տեսապակիների տակ, անել թրքանությունից մեջ կամ մերենայական ուժերի ենթարկել հասոոցի վրա։ Անչամ բնագիտության ասպարեզում տարածված այնպիսի գործնականը, ինչդիպել է նրա սովորական բովանդակության մեջ փարձարիումը, էկունտիկայում կարող է օգտագործվել համեմատաբար շափալոր սահմաններում (արտադրության կազմակերպման կոնկրետ հարցերը ուսումնասիրելու, ճյուղային էկունտիկաներում)։ Իհարկե, սոցիալիզմի ժամանակ էկունտիկայի ասպարեզում փարձարություն հնարագործությունները զգալիորեն ավելի լայն են լինում, քան հասարակական տարերային զարգացման պայմաններում։ Փարձարությունները լայնորեն կիրառվում են առանձին ձևերակությունների, արտադրության ճյուղերի, ամբողջությամբ վերցրած ժողովրդական տնտեսություն կառավարման մեթոդները սուղպես համար։ Բայց այդ դեպքում սեփականության հարաբերությունների՝ հասարակության մեջ տիրապետող տիպը չի փոխվում։

Արտադրական հարաբերությունների բազաբանտեսական իմացություն կարեորագույն միջոց է հանդիսանում արտարակտ մտածողու-

¹ Վ. Ի. Լենին, երկեր, Վ. 38, էջ 220.

Քյունը՝ իրեն հատուկ գիտելիտիկական տրամաբանության մտածելաձևով, առաջին հերթին վերլուծումով և սինթեզով:

Վերլուծություն (անալիզ)
զուքյունը բնթանում է տեսանկից, կոնկրետից և սինթեզ

կոնկրետը նրա բաղկացուցիչ մասերի ու կողմերի Մինքնզը համասեռ տարրերը միացնում է միմյանց հետ, մասերից վերստեղծում է ամբողջություն: Մինքնից պրոցեսում ճանաչման ենթակա երևույթը ուսումնասիրվում է այն կազմող կողմերի փոխադարձ կապի միջ. ամբողջականության ու միասնության մեջ, հակասությունների շարժման մեջ, որի հետևանքով հայտնի են դասնում դրանց լուծման ուղիներն ու ձևերը: Ընթանալով արտարկաից զեպի կոնկրետը, մենք հարաբերությունների էությունը հասկանալու ենք բնթանում ենք զեպի նրա դրսևորմանը կոնկրետ իրականության ամբողջ բազմազանության մեջ:

Կապիտալիստական էկոնոմիկայի վերլուծությունը, օրինակ, թույլ է տալիս առանձնացնել այն կաղմով էակայն մոտենումներ՝ արտադրության միջոցների կապիտալիստական սեփականությունը և վարձու աշխատանքը: Կողմերից յուրաքանչյուրը նախ դիտվում է ինքնին՝ առանձին-առանձին (կապիտալիստական սեփականության էությունը, կապիտալի հիմնական շահը և այլն, մի կողմից, և վարձու աշխատուժի էությունը, բանվոր դասակարգի հիմնական տնտեսական շահը և այլն, մյուս կողմից): Այնուհետև կողմերը ուսումնասիրվում են փոխերկրորդություններից (կապիտալի կողմից վարձու աշխատանքի շահագործման հակամարտ հարաբերությունը, արտադրության հասարակական բնույթի որոշիչ նշանակությունը, բանվոր դասակարգի ճամաշխարհային պատմական դերը կապիտալիզմի առաջամասն գործում): Այդ կողմերի միջև եղած հակամարտ հակասությունը լուծվում է պրոլետարական հեղափոխություններից:

Կապիտալիստական էկոնոմիկայի կողմերի միջև հակամարտ հակասության լուծումը հասնում է արտադրության հասարակական բնույթի փոփոխմանը, սոցիալիստական հասարակական արտադրության առաջացմանը, որտեղ արտադրության միջոցների սեփականատերերի և աշխատանքի միջև հակամարտ հակասություն չկա:

Վերլուծության պրոցեսում տեղի է ունենում առարկայի մասնատում: Դա կարելի է նրա հաջորդ խնդր՝ այն բուր սուսանձահաստիությունների տեսական բացատրման համար, որոնցից վերանում են սկզբում: Միայն այդպիսի վերլուծության հետևանքով կարելի է ստանալ առավել բնզհանուր արտաբանցիկանք, որոնք պիտանի են հետազոտող ամբողջական օբյեկտի, նրա շարժման և նրան հատուկ հակասությունների լուծման ուսումնասիրության համար:

Մինքնից ավարտում է էությունը բացահայտումը, ենթ վերլուծության օգնությամբ հայտնաբերվում է էականը երևույթի մեջ, սպա սինթեզը հնարավորություն է տալիս ցույց տալ, թե ինչ ձևերով է աղջ էականը երևան զայի տնտեսական իրականության մակերևույթի վրա: Վերլուծությունը և սինթեզը հանդիսանում են իրականության գիտական իմացության միևնույն պրոցեսի երկու կողմերի օրգանական միասնությունը: Միայն իմացության երկմիասնական անալիտիկ-սինթետիկ պրոցեսում, կոնկրետից զեպի արտարկա և արտարկաից զեպի կոնկրետ շարժման մեջ է բացահայտվում ուսումնասիրվող երևույթին ներհատուկ բազմազանության միասնությունը: Իմացության այդպիսի պրոցեսում միայն կարելի է բարձրանալ երևույթի առանձին պարզազույն էական տարրերից զեպի նրա էությունը ամբողջությանը վերցրած, զեպի նրա ինքնաշարժման բացահայտումը:

Ցուրբանչյուր տնտեսական պրոցեսին ու երկիրավական և քանակավորյին ներհատուկ են որակական և քանակական վերլուծություն կան կողմերը: Այդ պատճառով քաղաքատնտեսությունը լայնորեն օգտագործում է հետազոտության մաթեմատիկական և իրենկազգական գործելալեւերն ու միջոցները: Մասնամատիկական ու վիճակագրական վերլուծությունը օգնում է բացահայտելու երևույթների բանական կողմը, տնտեսական փոփոխականների օբյեկտիվ բանական կապը: Ըստ որում որքան ավելի բարձր լինի ժամանակակից տնտեսության նամրայնացման մակարդակը, այնքան ավելի անհրաժեշտ կլինի էկոնոմիկայի բանական մեծությունների անալիզին ու ավելի բազմակողմանի հաշվառումը, էլիկարենա-հաշվողական տեխնիկայի լայն կիրառումը: Իր հերթին, հաշվարկման-հաշվողական տեխնիկան որքան ավելի կատարելագործված է, այնքան ավելի հնարավորություն է լինում միլիոնավոր տնտեսական փաստերի (ինքնորմացիայի) օպերատիվ մշակման հնարավորությունն ամբողջ ժողովրդական տնտեսության մասշտաբով, որին լիաժամպ կերպով կաշի էի է հասնել միայն արտադրության միջոցների հասարակական սեփականության տիրապետման պայմաններում:

նանք աշխատանքի արդյունքի այն կոնկրետ անուսական ձևերից, որ հասարակական որոշ պայմաններում ընդունում են աշխատանքի արդյունքները, այսպես հասարակության հարստությունը միշտ կազմվում է սպառողական արժեքներից: Աշխատանքի արդյունքի սպառողական արժեքը անհրապեհ հասարակական հարաբերություններից չի արտահայտում, բայց պատմական բնույթ ունի, բանի որ նրա դերն ու նշանակությունը փոխվում են հասարակական պայմանների փոփոխությունից կախված: Նրան արտադրողը արդյունքը ստեղծում է իր համար, այսպես արդյունքը իրենից սպառողական արժեք է ներկայացնում արտադրողի համար: Իսկ էթի աշխատանքի հասարակական բաժանման բերումով արդյունքը նախատեսվում է ոչ թե իր՝ արտադրողի, այլ ուրիշ անձի համար, այսպես դառնում է հասարակական սպառողական արժեք, սպառողական արժեք ուրիշների համար: Այդուհանդերձ արտադրության պայմաններում սպառողական արժեքը պետք է բավարարի ոչ թե իր՝ արտադրողի, այլ այն անձանց պահանջումները, որոնք զենում են սովյալ ապրանքը: Հետևապես, ապրանքի արտադրման պրոցեսում պետք է ստեղծվի հասարակական սպառողական արժեք: Բայց ոչ ամեն մի հասարակական սպառողական արժեք է ապրանք, բանի որ ապրանքը, ինչպես արդեն ասվել է, պետք է ունենա նա մի հատկություն՝ ուրիշ ապրանքի հետ փոխանակվելու հատկություն: Ուրեմն՝ ապրանքի սպառողական արժեքի պատմական անանձնահատկությունն այն է, որ հանդիսանում է փոխանակային արժեքի կրող:

Իրերի սպառողական արժեքը, մարդկանց համար դրանց օգտակարությունը պատմականորեն բացահայտվում է գիտության ու անխելիկայ առաջընթացի համընթաց, Այսպես, երկաթի օգտակարությունը հայտնի դարձավ միայն այն ժամանակ, երբ մարդիկ սովորեցին հանրապետք երկաթ լույզ և դրանից օգտորտակ աշխատանքի գործիքներ ու առարկաներ: Գիտատեխնիկական հետագա առաջընթացի, արտադրության մեջ գիտության ու անխելիկայի նվաճումների արտառվորման շնորհիվ շարունակ բացահայտվում են երկաթի և մյուս մետաղների հրաճանակ նոր հարաբերություններ, հասարակության համար դրանց օգտակար նոր հատկություններ:

Քաղաքատնտեսությունը չի ուսումնասիրում իրերի որպես սպառողական արժեքների ֆիզիկա-քիմիական հատկությունները, դրանք ուսումնասիրվում են ուրիշ գիտությունների կողմից: Քաղաքատնտեսությունը ուսումնասիրում է արտադրության, բաշխման, փոխանակման ու սպառման պրոցեսում առաջացող հասարակական հարաբերությունների սխեմանում սպառողական արժեքի դերը:

Ապրանքի փոխանակային արժեքը և արժեքը

Փոխանակային արժեքը՝ ապրանքի այն հաս-
կարյունն է, որ որչազ համամասնորյուններով
փոխանակվում է այլ ապրանքների հետ: Թեև

փոխանակության առանձին գործողությունների ղեկավարում այդ համա-
մասնությունները կարող են պատահական ընդլիկ կերև, բայց ամբող-
ջությամբ առած դրանք թելադրվում են որոշ օրինակափոխություններով:
Տնտեսական գիտությունը փոխանակության զարգացման բազմազար-
յա փորձը ուսումնասիրել և ընդհանրացրել է արժեքի աշխատանքային
տեսության մեջ:

Միուս ապրանքների փոխանակումը նշանակում է, որ դրանք հա-
վասարեցվում են մեկը մյուսի նկատմամբ: Բայց այդ հավասարեցումը
կարող է անցի ունենալ միայն այն պատճառով, որ փոխանակվող ապ-
րանքներին ներհատում են օբյեկտիվ ինչ-որ միատեսակ, ընդհանուր
հատկություններ, որոնք այդ ապրանքների մեջ արմատավորված են
զրանց ղեկ փոխանակման պրոցեսի մեջ մտնելուց առաջ: Իսկ ի՞նչ հատ-
կություններ են դրանք: Ակնհայտ է, որ փոխանակվող ապրանքները որ-
պես սպառողական արժեքներ միջանցիկ տարբերվում են, որովհետև
այլ կերպ փոխանակման պրոցեսը իմաստ ու անհրաժեշտություն չէր
սեւենաւ: Իսկ այդ ապրանքների ընդհանուր օբյեկտիվ հատկությունը
միայն այն է, որ զրանց արտադրման վրա ծախսվել է հասարակական
աշխատանք: Որպես սպառողական արժեքներ ապրանքները միջանցիկ
տարբեր են, որպես հասարակական աշխատանքի մարմնացում՝ միա-
տեսակ են:

Ապրանքի մեջ առարկայացած հատուկական աշխատանքը կազ-
մում է ապրանքի արժեքը: Արժեքը ապրանքի մեջ բովանդակվող աշխ-
տանքի թանկությունն է: Ապրանքի փոխանակային արժեքը, այսինքն՝ հա-
մամասնությունը, բոտ որի մեկ ապրանք փոխանակվում է մեկ ուրիշով,
որոշվում է զրանց արժեքով: Փոխանակային արժեքը դա արժեքի ձևն է,
եթա արտաքին դրսևորումն է փոխանակման գործողությունում:

Արժեքի աշխատանքային տեսության սկիզբը գրվել է բուրժուա-
կան կլասիկ բողաքատնտեսության ներկայացուցիչների (Վ. Պետտի,
Կ. Մակի, Գ. Ռիկարդո) աշխատություններում: Բայց հետադականորեն,
համակողմանիորեն, նրանից բխող սոցիալական ու դասակարգային
բուր ճանտություններով քաղաքատնտեսությունը մշակել է Կ. Մարքսը:

Բուրժուական վուլգար քաղաքատնտեսությունը փորձել և փորձում
է հերքել արժեքի աշխատանքային տեսությունը, հակադրելով նրան դի-
տական օրեն հիմք շունեցող դուրյթներ: Այսպես, օրինակ, բուրժուական
գիտության մեջ լայն տարածում է ստաղել փոխանակային արժեքի՝ որ-
պես սպառողական արժեքի արտահայտություն մեկնաբանությունը: Այդ
տեսությունա համաձայն փոխանակային համամասնությունները որոշ-

վում են ոչ թե գործադրված հասարակական աշխատանքով, այլ իբր թե
ապրանքի սպառողական արժեքով: Բայց ապրանքները որպես սպառ-
չական արժեքներ, անհամեմատելի են, որանք փոխանակվում են մի-
այն այն պատճառով, որ ունեն սարբեր սպառողական արժեք: Հենց
սպառողական արժեքով է մեկ ապրանք տարբերվում մյուսից: Հետևա-
պես, հասարակական աշխատանքն է որոշում ապրանքի արժեքը և այն
համամասնությունները, որանցով մեկ ապրանք փոխանակվում է մեկ
ուրիշով:

Աշխատանքը հասարակության կյանքի հիմքն է, և այդ հանգա-
մանքը չի կարող մարդկանց տնտեսական կապերի մեջ շարսերովել
նաև այն ղեկարում, երբ այդ կապերը ապրանքային հարաբերություն-
ների ձև ունեն: Աշխատանքի բուն հասարակական բաժանումը այն պայ-
մաններում, երբ որպես արտադրողներ հանդես են գալիս տարբեր սե-
փականատերեր, չէր կարող զարգանալ, եթե փոխանակային համամաս-
նությունները շրոշվեին աշխատանքի ծախսումներով, այսինքն՝ եթե
փոխանակային արժեքը շրոշվեր արժեքով:

Արժեք կարող է ունենալ միայն սպառողական արժեք ներկայաց-
նող իբր: Մյուս կողմից, ամեն մի օգտակար իր չէ, յուրաքանչյուր սպա-
ռողական արժեք չէ, որ արժեք է ունենում. այն առարկաները, որոնց
վրա մարդու աշխատանք չի գործադրվել, արժեք չեն ունենում (օրինակ՝
լժակված հողը, գետերի ու ծովերի ջրը, վայրի անող պտուղները և
այլն): Դրա հետ միասին աշխատանքի ծախսումները ինքնին արդյունք
ղեկ արժեք չեն դարձնում: Օրինակ, գյուղատնտեսական բնամթերալին
տնտեսությունում այն արդյունքները, որ արտադրվում են սեփական
պատման համար, արժեքի հատկություն չեն ստանում: Աշխատանքի
արդյունքը արժեք է դառնում միայն հասարակական որոշ պայմաննե-
րում՝ ապրանքային արտադրության անդամություն ղեկարում: Արժեքը
պատմական կատեղորիս է: Այդ հասկանալու համար անհրաժեշտ է
վերլուծել ապրանքի մեջ մարմնավորված աշխատանքի բնույթը:

Աշխատանքի պրոցեսում ապրանքարտադրողը
Ապրանքի մեջ մարմնա-
նեղծում է սպառողական արժեք և արժեք: Այդ
ցած աշխատանքի եր-
կանի բնույթը: Կունկ-
րես աշխատանքն
արտադրող աշխատանք
բնույթ է կրում: Մի կողմից, դա մարդկանց այս
կամ այն պահանջմունքները բավարարող իրեր
ստեղծող օգտակար աշխատանք է: Որոշակորեն
օգտակար աշխատանքը մարդկանց դուրյթյան հափտնեապես բնական
անհրաժեշտությունն է՝ անկախ հասարակական պայմաններից: Մյուս
կողմից, յուրաքանչյուր ապրանքարտադրողի աշխատանքը հանդիսա-
նում է ամբողջ հասարակական աշխատանքի մի մասնիկը, ընդհանրա-

պէս մարդկային աշխատութի ժախտումը անկախ նրա կոնկրետ ձևերից։ Աշխատանքի առաջին տեսակը կուլում է կոնկրետ աշխատանք, երկրորդը՝ արտաբերական աշխատանք։ Կոնկրետ աշխատանքը՝ որոշակի օգտակար ձևով ժախտված աշխատանք է, որ ստեղծում է որոշակի սպառողական արժեք (բարձրագույն, մեծագույն, հասցեային)։ Սպառողական արժեքների տարբերությունը պայմանավորվում է նրանով, որ այդ արժեքները կոնկրետ աշխատանքի տարբեր տեսակների արդյունքներն են (ճանաչափորի, դոմեսայի բանվորի, հացբլուխի, ջուլահակի և ուրիշների աշխատանքը)։ Հինց յուրաքանչյուր արտաբերարտադրողի կոնկրետ աշխատանքի սպեցիֆիկ բնույթն էլ առաջացնում է նրա տարբերությունը ուրիշ արտաբերարտադրողի աշխատանքից։ Այդ տարբերությունը անխուսափելիորեն առաջանում է այն տարբերություններով, որ սովա են աշխատանքի առարկաներում, աշխատանքի դրժիքներում, արտադրական գործառնությունների բնույթում, վերջին հաշվով՝ աշխատանքի արգասիքում։ Պետք է նկատի ունենալ, որ կոնկրետ աշխատանքը՝ արտադրվող սպառողական արժեքներէ, իրենին հարստություն միակ աղբյուրը չէ։ Մարդը միայն վերամշակում է այն նյութական օտարարակը, որը բնութայն մեջ արդեն գոյություն ունի։ Սպառողական արժեքը հանդիսանում է երկու տարբերի՝ բնութայն նյութի և աշխատանքի միացման հետևանքը։

Բայց կոնկրետ աշխատանքի որ ձևն էլ վերցնենք, այն իրենից ներկայացնում է նաև մարդկային կներդրանքի կոնսում (միկանների, ուղեղի, ներվերի և այլն), համամարդկային հասարակական աշխատանքի ամբողջական ծախսերի մի մասնիկը։ Այն փաստը, որ սպրանքը օտմով է ոչ միայն սպառողական արժեքով, այլև արժեքով, սպրանքը բային արտադրության պայմաններում ինչ-որ ընդհանուր բան է արտահայտում տարբեր մարդկանց աշխատանքի մեջ՝ հասարակական աշխատանք առճասարակ՝ անկախ նրա կոնկրետ ձևից։— արտարակա աշխատանքը։

Արտարակա աշխատանքը սպրանքային արտադրության բնորոշ առանձնահատկությունն է։ Այն արտահայտում է սպրանք արտադրողների հարստությունները, ուստի և պատմական կատարողի և։ Ի՛նչպիսի, բնամեկույն տնտեսության պայմաններում էլ մարդկանց աշխատանքն ինչ-որ ընդհանուր բան է կղել։ Բայց բնամեկույն տնտեսության մեջ աշխատանքի այց ընդհանուր կողմը հայտնաբերվել է անմիջականորեն, և ոչ թե փոխանակման պրոցեսում իրերի համեմատման միջոցով։

Օրինակ, նախնադարյան համայնքում, կրք սպրանքների արտադրություն դեռ չկար, յուրաքանչյուր արտադրողի աշխատանքը անմիջական հասարակական աշխատանք է կղել, որովհետև յուրաքանչյուր արտադրող համայնքի առաջադրությամբ նյութական արտադրության

պրոցեսում կատարում էր այս կամ այն օգտակար ֆունկցիան։ Նրա անձնական, կոնկրետ աշխատանքը երկան էր գալիս անմիջականորեն՝ որպես համայնքի ամբողջական աշխատանքի մի մասնիկը։

Սրք մասնավոր սեփականությունը հանդեպընց արտադրողների անջատմանը, նրանցից ամեն մեկը սկսեց զբաղվել աշխատանքի որոշակի ձևով՝ ինչպես իր մասնավոր գործով։ Աշխատանքը դարձրեց անմիջական հասարակական լինելուց, նրա հասարակական էությունը դարձավ իրանքված վիճակում։ Այժմ արդեն միայն սպրանքների փոխանակություն էր թույլ տալիս որոշելու, որ տվյալ արտադրողի աշխատանքը հասարակությանը անհրաժեշտ է և կազմում է հասարակական աշխատանքի մի մասնիկը։ Համեմատելով մեկը մյուսի նկատմամբ իրենց աշխատանքի տարբեր արդյունքները, մարդիկ փոխանակման պրոցեսում համեմատում են այդ արդյունքների արտադրության վրա ծախսված աշխատանքը։ Այդպես արտադրողների աշխատանքի հասարակական ծախսերի հաշվառումը մասնավոր սեփականության պայմաններում կատարվում է փոխանակության միջոցով, տարեկանորեն։

Արտարակա աշխատանքի կատարողի արտահայտում է աշխատանքի տարբեր տեսակների հավասարեցման փոխանակության, դրանց կոնկրետ ձևերից վերանալու միջոցով կատարվող իրական օրինակով պրոցեսը։ Դա արտահայտում է այն ընդհանուրը, որ հատուկ է օրինակով իրականության մեջ սպրանք արտադրողների աշխատանքին։ Որքան ազլին բազմազան են աշխատանքի կոնկրետ ձևերը, այսինքն՝ որքան ազլին է զարգացած աշխատանքի հասարակական բաժանումը, այնքան ազլին է մեծ ափով է զբաղվում աշխատանքի ամենաբազմազան տեսակների ընդհանրությունը, այնքան մեծ նշանակություն է ստանում դրանց հավասարեցման պրոցեսը և ազլին զարգացած է լինում արտարակա աշխատանքի կատարողին։

Այսպիսով, արտարակա աշխատանքը իրենից ներկայացնում է համամարդկային աշխատանք, որի հասարակական բնույթը արտահայտվում է սպրանքային փոխանակության պրոցեսում։ Իսկ արժեքը՝ սպրանքի մեջ բյուրեղացված արտարակա աշխատանքն է։ Արտարակա աշխատանքը արտահայտում է արտադրական որոշակի հարստերությունները՝ սպրանք արտադրողների հարստությունները։ Դա նշանակում է, որ արժեքն իրի հատկությունը չէ, այլ արտահայտում է սպրանքաբազմազանների արտադրական հարստությունները։

Ապրանքների արտադրող աշխատանքի երկակի բնույթը հայտնաբերվել է Կ. Մարքսը։ Այդ հայտնաբերությունը կապիտալիզմի բազմաբաժանության դիտական մշակման համար բացատրիկ կարևոր նշանակություն ունեցավ, քանի որ թույլ տվեց առեղծված արժեքի իսկական գիտական՝ աշխատանքային տեսությունը, բացահայտել սպրանքային

տնտեսության հակասությունները, իսկ հետո նաև կապիտալիստական արտադրության հակասությունները, նրա զարգացման օրինաչափությունները և կործանման անխուսափելիությունը:

Այդպես ընդհին արտադրությունը՝ յուրաքանչյուր մասնավոր ապրանքարտադրողի անձնական գործն է: Մասնավոր սեփականությունը ապրանքարտադրողներին միմյանցից անբաժանում է: Դրա հետ միասին աշխատանքի հասարակական բաժանումը նաարակական բնույթ է առյիս աշխատանքին, անկախ մասնավոր ապրանքարտադրողների կազմում է իրար հետ: Դրա հետևանքով առաջանում ու զարգանում է խոր հակասություն մասնավոր և հասարակական աշխատանքի միջև: Մասնավոր սեփականությունը անխուսափելիորեն հարուցում է ապրանքային արտադրության տարերային զարգացում, մրցակցություն է առաջացնում ապրանքարտադրողների միջև մեծ միայն շուկայում, ապրանքների տարերային փոխանակության և շուկայի մրցակցության պրոցեսում արտահայտվում է արտադրողների աշխատանքի հասարակական բնույթը, նրանց կախվածությունը մեկը մյուսից: Միայն փոխանակությունն է սահմանում, թե որքան է հասարակությանը անհրաժեշտ տվյալ ապրանքը, ինչ հասարակությանը պետք է տվյալ տեսակի կոնկրետ աշխատանքի արդյունքը, ապա հասարակությունը այդ արդյունքը չի ընդունի անզամ որպես հասարակական աշխատանքի մասնիկ:

Քանի որ արդյունքները արտադրվում են որպես ապրանքներ, առաջանում է դրանց արժեքը իրացնելու՝ դրանց փոխարեն ուրիշ ապրանք ստանալու անհրաժեշտությունը: Բայց, ինչ արտադրված է այնպիսի սպառողական արժեք, որը չի համապատասխանում հասարակության պահանջներին, զնարուհակ պահանջարկին, ապա ապրանքը չի ծախվի և դրա արտադրման վրա ծախսված աշխատանքը հասարակությունը չի ընդունի: Ետևելուց ամերկայներին կատարվում է աշխատանքի հասարակական հաշվառման պրոցես: Ապրանք արտադրողներին մի մասն կողմից ապրանքների հաջող իրացումը ամեն քայլափոխի խախտում է ուրիշների շահերը, որոնք բավականաչափ հարմարված չեն հասարակության պահանջմաններին և շուկայի պայմաններին: Մրցակցությունը պրոցեսում ապրանք արտադրողները ոմանք հրատառանում են, իսկ ուրիշները թախքսվում ու կործանվում են:

Մասնավոր և հասարակական աշխատանքի միջև եղած հակասությունը արտայայտվում է կոնկրետ և արտադրում աշխատանքի միջև եղած հակասության մեջ: Ապրանքը, լինելով սպառողական արժեք և արժեք է միտանալու, միևնույն ժամանակ իր մեջ պարունակում է դրանք միջև առկա հակասությունը: Մասնավոր և հասարակական աշխատանքի

միջև եղած այդ հակասությունը հակամարտ բնույթ է կրում, իրենից ենթակայացնում է պարզ ապրանքային տնտեսության հիմնական հակասությունը: Կապիտալիզմի պայմաններում այդ հակասությունը էլ ալեկալ է սրվում և զարգանալով դառնում հակասություն արտադրության հասարակական բնույթի և յուրաքան մասնավոր-կապիտալիստական ձևի միջև, որի մասին խոսք կլինի ստորև:

Աշխատանքի մասնավոր և հասարակական բնույթի հակասությունը՝ մասնավոր ապրանքային արտադրության բոլոր հակասությունների կախեալային մոմենտն է: Վելլզար բարբարոստնտեսությունը մասնավոր սեփականատիրական տնտեսությունը պատկերացնում է որպես մի ենթադրանակ տնտեսություն, որտեղ ապրանք արտադրողները իրր սուկ սպասարկումներ են փոխանակում: Իսկ գործակաճում մասնավոր սեփականատիրական ապրանքային տնտեսությունը պատկերվում է անհաշտիկ, հակամարտ հակասություններով, որոնք զարգացման տարերային բնույթի և մրցակցայարի պայմաններում հասցնում են փոքրամիջ սեփականատիրերի հարստացմանը և հաշիվ պարզ ապրանքարտադրողների հակայաքանակ բազմության քայքայմանն ու կործանմանը:

Ապրանքի արժեքի և հարստացման հարաբերակցությունը

Ապրանքի արժեքի մեծությունը որոշվում է նրա արտադրության համար հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի քանակով և չափվում է աշխատանքային ժամանակով: Չանաչան ապրանքարտադրողներ միևնույն ժամանակի արտադրության համար ծախսում են ոչ միևնույն քանակի ժամանակ, որի հետևանքով ապրանքները տարբեր անհատական արժեք են ունենում: Քանի որ արժեքը իրենում պարունակում է հասարակական աշխատանք, ապա հասարակական արժեքի մեծությունը չի կարող որոշվել աշխատանքի անհատական ծախսմաներով: Ապրանքի հասարակական արժեքը՝ արժեք է, որը որոշվում է ապրանքի արտադրության համար պահանջվող հասարակական անհրաժեշտ ժամանակով: Հասարակական անհրաժեշտ աշխատանքամասնակը այն ժամանակն է, որը ծախսվում է որևէ ապրանք պատրաստելու համար՝ արտադրության տվյալ հասարակականորեն նորմալ պայմաններում և տվյալ հասարակությունում աշխատանքի ունակության ու ինտենսիվության միջին մակարդակի դեպքում:

Մասնավոր սեփականությունը պայմաններում ապրանքների փոխանակման գործում համատանությունները տարերայնորեն կորզվողովում են աշխատանքամասնակի ընթացքում աշխատանքի հասարակականորեն անհրաժեշտ ծախսումներով: Աշխատանքի հասարակականորեն անհրաժեշտ ծախսումների կարգավորիչ դերը ցայտունորեն դրսևորվում է ապրանք արտադրողների մրցակցությունում: Ապրանք արտադրողը, որը արտադրանքի մեկ միավորի վրա ծախսել է ավելի պակաս աշխատանք

մանակ, քան ուրիշները, շահեկան գործից մեջ է գտնվում: Ավելի կատարելագործված տեխնիկա և արտադրության ու աշխատանքի կազմակերպվածություն ունեցող խոշոր ձեռնարկությունները տվյալ ապրանքի արտադրման վրա ավելի քիչ աշխատածաժանակ են ծախսում, քան այդպիսի առավելություններ չունեցող ձեռնարկությունները: Հենց այդ առավելություններն էլ պայմանավորում են մասն ու միջակ ձեռնարկությունների զուրա մղումը խոշոր ձեռնարկությունների կողմից:

Մասնավոր ապրանքարտադրողները շուկայում ձևականորեն հաճախորդներ են գրավում, որովհետև ապրանքները ծախում են միեռնույն հասարակական արժեքով: Բայց իրականում այդ ձևական հաճախությունն ետևում թաքնվում է մասնավոր ապրանքարտադրողների փաստական անհավասարությունը: Բանն այն է, որ խոշոր և մասն ապրանքարտադրողները միևնույն ապրանքների արտադրության վրա տարբեր շահերի աշխատանք են գործադրում, իսկ այդ ապրանքները ծախվում են հավասարաչափ արժեքով:

Աշխատանքի արտադրողականությունը և ինտենսիվությունը: Պարզ և բարդ աշխատանք:

Մասնակի մեկ միավորի ընթացում արտադրված արդյունքների քանակությունը: Աշխատանքի արտադրողականությունը փոփոխում է արտադրողականության բարձրացման հետևանքով ապրանքի միավորի արժեքը իջնում է:

Աշխատանքի արտադրողականությունը կախված է մի շարք գործոններից և ամենից առաջ՝ աշխատանքի գործիքների զարգացման մակարդակից, որանց արդյունավետությունից: Նշակալան հշխատողություն ունեն աշխատողի որակավորման աստիճանը, գիտության ու տեխնիկայի զարգացման և արտադրության մեջ զորանց կիրառման մակարդակը, արտադրության համակենտրոնացման աստիճանը, բնական պայմանները:

Քանի որ աշխատանքի արտադրողականությունը չափվում է աշխատանքային ժամանակի մեկ միավորի ընթացքում սպառողական արժեքների քանակով, այն վիրարեքում է աշխատանքային ժամանակի կակերտ կողմին՝ կոնկրետ աշխատանքին: Կ. Մարքսը գրել է, որ կոնկրետ աշխատանքը կարող է լինել արդյունքների ստեղծման մերթ ավելի հարուստ, մերթ ավելի աղքատ արդյունք: Իսկ արտադրված աշխատանքը (էր բարդությամբ ու ինտենսիվությամբ միատեսակ)՝ ժամանակի մեկ միավորի ընթացքում արտադրում է միևնույն արժեքը:

ՍՅԵ աշխատանքային ժամանակի 8 ժամվա ընթացքում 100 մ գործվածքի քանակը Թագուրի 200 մ, ապա ավել 200 մ գործվածքի արժեքը կազմի աշխատանքի նույն 8 ժամով, թեև այս դեպքում աշխատանքի արտադրողականությունը կրկնակի կավելանա, իսկ յուրաքանչյուր մասը գործվածքի արժեքը համապատասխանաբար կիջնի:

Աշխատանքը կարող է լինել ավելի ինտենսիվ և նվազ ինտենսիվ: Աշխատանքի ինտենսիվությունն ասելով հասկանում ենք աշխատուժի ծախսումը ժամանակի մեկ միավորի ընթացքում: Ավելի ինտենսիվ աշխատանքը հավասար ժամանակամիջոցում ավելի մեծ արժեք է ստեղծում նվազ ինտենսիվ աշխատանքի համեմատությամբ:

Այսպես, եթե հիշյալ գործվածքի արտադրման առը մերթ ինտենսիվության հետ համեմատած կազմված լինի աշխատանքի ինտենսիվությունը 2 անգամ բարձրացման հետ, ապա աշխատանքի 8 ժամը փաստորեն հավասար կլինի աշխատանքի 16 ժամվա, իսկ ամեն մեկ մասը գործվածքի արժեքը կհասնա Նախկինը (այլ հավասար պայմանների դեպքում):

Այդպիսով, ապրանքի արժեքի մեծությունը ուղիղ համեմատական է ծախսված հասարակական աշխատանքի քանակին և հեղակալքած համեմատական՝ աշխատանքի արտադրողական ուժին:

Ապրանքի արտադրող աշխատանքը պարզ աշխատանք է, եթե հաստի վարժեցում չի պահանջում, և բարդ աշխատանք է, եթե պահանջում է հաստի պատրաստություն, վարժեցում: Պարզ աշխատանքը՝ որակյալ աշխատանք է, բարդ աշխատանքը՝ որակյալ աշխատանք է: Ամեն մի բարդ աշխատանքը բազմապատկված պարզ աշխատանք է:

§ 3. Արժեքի մեք: Փողի ծագումը

Արժեքը իրերի հասարակական հատկությունն է: Ապրանքի մեջ գտնվող ապրանքային հայտնաբերել ֆիզիկական կամ քիմիական որևէ վերլուծության օգնությամբ անկարելի է: Այն գրանցվում է միայն ապրանք արտադրողների հարաբերություններում, երբ նրանք փոխանակման պրոցեսում տվյալ ապրանքը համեմատում են ուրիշ ապրանքների հետ:

Արժեքի մեք զարգացման ուսումնասիրությունը
Արժեքի մեք զարգացումը: Արժեքի մեք զարգացումը առաջին անգամ կատարել է Կ. Մարքսը: Լեյպցիգի կամ պատասխանակալ կամ մեք

Հանկան բնույթ է կրել: Փոխանակության այդ ստացիային համապատասխանում էր արժեքի պարզ, եզակի, կամ պատահական մեք, իսկ հի՛նչ էր իրենից ներկայացնում այն:

Նախնադարյան համայնակարգի պայմաններում յուրաքանչյուր համայնք սեփական սպառման համար իրեն անհրաժեշտ ամեն ինչ արտադրում էր իր ուժերով, Աշխատանքի արդյունքները համայնքների միջև փոխանակվում էին միայն բացառիկ դեպքերում: Ասանների ապրանքների արժեքը միայն պատահականորեն էր արտահայտվում որևէ ուրիշ ապրանքում: Այդ է պատճառը, որ արժեքի պարզ, կարգի կամ պատահական ձևը իրենից ներկայացնում է արժեքի ամենատարրական ձևը:

1 կացինը=1 ուշաբթի

Այս հավասարության մեջ մեկ ապրանքը (կացինը) իր արժեքը արտահայտում է մի ուրիշ ապրանքի մեջ (ուշաբթի): Իսկ երկրորդ ապրանքը (ուշաբթի) ասպին ապրանքի (կացինի) արժեքի արտահայտություն է, որպես նյութ է ծառայում նրա արժեքի արտահայտման համար: Իր արժեքն ուրիշ ապրանքի մեջ արտահայտող ապրանքը գտնվում է արժեքի նադարեական ձևի մեջ: Ուրիշ ապրանքի արժեքն արտահայտող ապրանքը գտնվում է արժեքի համարժեքային ձևի մեջ, նրա համարժեքն է:

Արժեքի հարաբերական և համարժեքային ձևերը անխզելիորեն կապված են միմյանց հետ և իրենցից ներկայացնում են արժեքի միևնույն արտահայտության հակադիր կողմերը: Ըստ որում արժեքի հարաբերական ձևը ակտիվ դեր է կատարում, իսկ համարժեքայինը՝ պասիվ, որովհետև ապրանք-համարժեքը ծառայում է ուրիշ ապրանքի արժեքի արտահայտման համար: Արժեքի հարաբերական ձևը ամենից առաջ արտահայտում է փոխանակելի ապրանքների որակական միասնակությունը, այն, որ դրանք համարանրկալին աշխատանքի արդյունքներ են: Մեր օրինակում կացինի փոխանակման ուշաբթով նշանակում է, որ կացինն պատրաստողը և անսանսպահը համապատասխան արդյունքների արտադրման համար աշխատանք են ծախսել, և այդ հանգամանքը թույլ է տալիս նշյալ ապրանքները իրար հետ հավասարելուն: Բայց ապրանք արտադրողները փոխանակման պրոցեսում պետք է հաշվի առնեն նաև իրենց զործադրած աշխատանքի քանակը: 10 ժամում ստեղծված արդյունքը ոչ որ չի փոխանակում այնպիսի ապրանքի հետ, որը կարելի է պատրաստել 5 ժամվա ընթացքում: Հետևապես, արժեքի հարաբերական ձևը քանակական որոշակիություն ունի:

Արժեքի համարժեքային ձևը բնահայելու դեպքում հարկավոր է հաշվի առնել նրա հետևյալ առանձնահատկությունները: Ապրանք-համարժեքի սպառողական արժեքը ծառայում է ուրիշ ապրանքի արժեքի արտահայտման համար: Եթե կացինը հավասարեցվում է ուշաբթի, զա նշանակում է, որ կացինի արժեքն իր արտահայտությունը ստանում է ուրիշ սպառողական արժեքի՝ ուշաբթի միջոցով, այսինքն՝ համարժեքի դեր կատարող ապրանքի միջոցով: Ուշաբթը կարող է համարվել լինել այն պատճառով, որ ես ներկայացնում է ուրիշ սպառողական արժեք, քան կացինը: Ապրանքների այդ փոխանակման մեջ սպառողական արժեքը՝ ուշաբթը, լինելով համարժեք, վկայում է, որ կացինը արժեքի կրող է: Այդպիսով, մեկ ապրանքի արժեքը կարող է արտահայտվել միայն ուրիշ ապրանքի սպառողական արժեքի մեջ: Պատահական փոխանակումն ստացված համարժեքի դերը չի ամբակցվում որևէ մեկ ապրանքի: Այդ դերը պատահաբար կատարում են տարբի ապրանքները:

Արժեքի արժեքի պարզ ձևի վերլուծությունը, մի ձև, որ բնորոշ է պատահական փոխանակության համար, ցույց է տալիս, որ զանազան սեփականատերերի, մեկուսացված արտադրողների միջև գոյություն ունեցող կապը զրևերվում է միայն փոխանակման պրոցեսում, նրանց աշխատանքը չի կարող արտահայտվել այլ կերպ, քան մեկ ապրանք մյուս ապրանքի հետ համամասնելու միջոցով: Կոնկրետ աշխատանքը փոխանակության պրոցեսում գտնում է արտադրված աշխատանքի զրևվորման ձև: Մեր օրինակում անսանսպահի կոնկրետ աշխատանքը համամարդկային արտադրված աշխատանքի արտահայտության միջոց է:

Կացինն պատրաստողի աշխատանքը և անսանսպահի աշխատանքը իրենցից ներկայացնում են մասնավոր արտադրողների, մեկուսացված սեփականատերերի աշխատանք: Սակայն փոխանակության պրոցեսում անսանսպահի մասնավոր աշխատանքի արդյունքը կատարել է համարժեքի դեր, այսինքն՝ անդրես է եկել անմիջականորեն որպես հասարակական աշխատանքի արդյունք: Փայն և փոխանակությունը կատարվել է, անսանսպահի մասնավոր աշխատանքը «վավերացրեց», որ կացինն արտադրման համար զործադրված է հասարակական աշխատանք: Հետևապես, մասնավոր աշխատանքը փոխանակության պրոցեսում հանդես է դալիս որպես հասարակական աշխատանքի մարմնավորում:

Այդպիսով, ապրանքում և ապրանք արտադրող աշխատանքում պարունակվող ներքին հակասությունները փոխանակման պրոցեսում գտնում են իրենց արտաքին արտահայտությունը: Այդ պրոցեսում ապրանքի և ապրանք արտադրողի աշխատանքի կրկն ապրանքի հասակությունները ստան թև մեկը մյուսից բաժանվում են և գտնվում տարբեր բևեռներում: Ապրանքը արժեքի հարաբերական ձևում հանդես է գալիս որպես սպառողական արժեք՝ կոնկրետ, մասնավոր աշխատանքի ար-

3. Այդպիսի դեր է... միջնադարյան դրոշագրանի քաղաքակրթական ստեղծ հայտնի է եղել փոխանակման միջոցով իր ստացած ապրանքների արտահայտման համար անհրաժեշտ աշխատանքային ժամանակի քանակը: Գյուղական զարբեր և սոցիալորդը նրա այդ ստաց աշխատում էին նույնպես, ինչպես դերձանը կամ կոշիկագոր... K. Маркс в Ф. Энгельс. Соч., т. 25, ч. II, стр. 472):

դուներ, իսկ ապրանքը, որ համարժեքի դեր է խաղում,— որպես արժեքի, արտարկատ աշխատանքի արտահայտություն, հասարակական աշխատանքի մարմնացում:

Արժեքի լրիվ, կամ ծավալումը ձևը

Աշխատանքի հասարակական բաժանման զարգացումը և արտադրության շարունակվող աճումը պայմանավորեցին փոխանակության հետագա զարգացումը: Ավելի ու ավելի, մեծ քանակությամբ արդյունքներ էին ներքաշվում փոխանակության պրոցեսի մեջ, որը ավելի էր կանոնավոր դառնում: Աշխատանքի առաջին խոշոր հասարակական բաժանման (Նոգադրժույունից անասնապահության բաժանման) շնորհիվ անասունները սկսեցին արդեն ոչ թե պատահանալ, այլ սխտանատիկորեն փոխանակվել այլ ապրանքներով: Իսկ մյուս ապրանքները (հացահատիկ, կապիկներ և այլն) հանդես էին գալիս որպես համարժեքներ անասունների նկատմամբ, իսկ անասունները առավելապես արժեքի հարաբերական ձևում էին:

Քանի որ փոխանակությունն այդպես պատահական բնույթ չէր կրում, համարժեքի ֆունկցիան կատարող բոլոր ապրանքները արդեն հանդես են գալիս ոչ թե որպես պատահական, այլ որպես առանձնահատուկ համարժեքներ: Պրանցից յուրաքանչյուրը մեկն էլ շատ համարժեքներից, որոնց հավասարեցվում են անասունները: Փոխանակությունն այժմ հետևյալ տեսքն է ստանում.

$$1 \text{ սլաքար} \begin{cases} = 4 \text{ սոսիսի հացահատիկ} \\ = 1 \text{ կապիկ} \\ \text{և այլն} \end{cases}$$

Փոխանակության այս ձևը, որը արտահայտում է փոխանակության նոր աստիճանը, կրում է արժեքի լրիվ, կամ ծավալում, ձևը: Սա բնորոշում է արտադրական կապերի յուրացումն ու ամրապնդումը: Այդ պայմաններում աճում է նաև փոխանակվող ապրանքների միջև քանակական հարաբերակցությունների ճշտության նշանակությունը, քանի որ գործադրված աշխատանքի փոխհատուցման մեջ փոխանակությունն սկսում է ավելի մեծ դեր խաղալ:

Արժեքի համընդհանուր ձևը

Փայրանքային արտադրության ծավալի աճման, փոխանակության պրոցեսի և աշխատանքի հասարակական-բաժանման զարգացման հետևանքով ապրանքների աշխարհից առանձնանում է մի ապրանք, որը մյուս բոլոր ապրանքների համար դառնում է համարժեք՝ համընդհանուր համարժեք: Արժեքի ծավալումն ձևն հետզհետե դառնում է արժեքի համընդհանուր ձև:

4 սոսիսի հացահատիկ
1 կապիկ
և այլն

$$= 1 \text{ սլաքար}$$

Փոխանակության զարգացման նախորդ ստադիաներում համարժեքի ֆունկցիան կարող էր կատարել ամեն մի ապրանք: Իսկ համընդհանուր համարժեքի դերը կատարում է ապրանքներից միայն մեկը: Բոլոր ապրանքների արժեքը արդեն արտահայտվում է մեկ ապրանքի մեջ, որը հանդես է գալիս որպես հասարակական աշխատանքի անմիջական մարմնացում: Համընդհանուր համարժեքի դեր կատարող ապրանքի փոխարեն կարելի է ստանալ ցանկացած ապրանքը: Համընդհանուր համարժեքը օժտված է համընդհանուր փոխանակման ունակության հատկությամբ:

Համընդհանուր համարժեքի անհրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ արտադրողական ուժերի զարգացման որոշ էտապում փոխանակությունը դարձել էր կանոնավոր երևույթ, կենսականորեն կարևոր նշանակություն էր ստացել, սկսել էր որոշել արտադրողների որոշ մասի ապրուստի պայմանները: Արդյունքների՝ որպես ապրանքների արտադրման տարերային զարգացումը, սրում է հակասությունները մասնավոր և հասարակական աշխատանքի միջև, որը և հարուցում է համընդհանուր համարժեքի առաջատան անհրաժեշտությունը:

Արժեքի պարզ և ծավալուն ձևերի պայմաններում ապրանքների անմիջական փոխանակությունը նույնպես որոշ դժվարություններ էր պարունակում իրենում: Բայց այդ դժվարությունները մեծ նշանակություն չունեին, քանի որ ինքը փոխանակությունը պատահական, անկանոն բնույթ էր կրում: Իսկ արտադրության ու փոխանակության զարգացման հետևանքով ապրանքով ապրանքի անմիջական փոխանակության դժվարությունները չէին նվազում, այլ, ընդհակառակն, աճում էին: Պրակտում արտահայտվում էր ապրանքային արտադրության հակասությունների խորացումը նրա զարգացման հետևանքով, այն րանից հետևանքով, որ ավելի շատ տեսակի արդյունքներ էին արտադրվում փոխանակման համար: Քանի որ փոխանակությունը դարձել էր մշտական կենսական անհրաժեշտություն, նրա իրագործման դժվարությունները անմիջականորեն ազդում էին ապրանքարտադրողների բախտի վրա: Իրենց գոյության համար նրանք պետք է իրենց ապրանքը փոխանակեին իրենց համար անհրաժեշտ ապրանքով կամ նրա դիմաց ստանալին ախպիտ ապրանք, որը կարելի լիներ փոխանակել այլ գտնազան ապրանքների հետ: Մտադեց համընդհանուր համարժեքի անհրաժեշտությունը:

Համընդամենու համարժեքի հայտնվելը՝ փոխանակության զարգացման տարերային պրոցեսի արդարև էր Դրա հայտնվելը մարդկանց միջև ինչ-որ գիտակցական համառոտացման հետևանք չէ։ Նեղ այն արդյունք էլ, որը հանդես էր գալիս առավելագույն իրեն ապրանք, այսինքն արտադրվում էր գլխավորապես փոխանակության համար. սկսեց համընդհանուր համարժեքի դեր խաղալ։ Համընդհանուր համարժեքի ֆունկցիան նայած արտադրության կոնկրետ սլաշմաներին կապարտվում էին տարբեր ապրանքներ՝ անասունները, վայրի գազանները մորթիները, ձուկը, խնցրաբերը և այլն։

Արժեքի փողային մեջ Երբ փոխանակությունը ընդլայնվեց, գուրս եկավ տեղական շուկայի սահմաններից, անհրաժեշտություն ծագեց համընդհանուր համարժեք ֆունկցիան ամրակցել միայն մեկ ապրանքի. այդպիսին էլ Նեղը գործնավոր փոքր։ Փողը իրենից ներկայացնում է համընդամենու համարժեքի ավարտուն ձևը՝ մի հատուկ ապրանք, որի սպառողական արժեքի հետ հաստատունն սերտանել է արժեքի համարժեքային ձևը։

Փոխանակության, արժեքի ձևի վերլուծությունը ներառվորություն է առկա պարզել փողի էությունը։ Արժեքի ձևի զարգացումը, որ հարուցեց փողի անհրաժեշտությունը, արդեն պարունակվում էր արժեքի պարզ ձևի մեջ։ Կ. Մարքսը առաջինը վերլուծեց արժեքի ձևի զարգացման պրոցեսը, ընդհանրացնելով փոխանակման պատմության վերաբերյալ հակալական նյութերը։ Արժեքի ձևի զարգացման արամարանական հանրորակականությունը համապատասխանում է փոխանակության զարգացման պատմական պրոցեսին։ Այն արտացոլում է փոխանակության և ապրանքային արտադրության սեռյալ հակասությունների զարգացումը, որոնց մասին ազդեց վերևում։

Փողի զեղը կապարտվում էին տարբեր ապրանքներ։ Բայց արտադրության զարգացման պրոցեսում աստիճանաբար այդ զեղը ամրակցվեց սակուն։ Կա բացատրվում է ոչ ոսկու ինչ-որ դերակրան հատկություններով ֆեուկությունը, գրել է Կ. Մարքսը, փող չի ստեղծում, ինչպես որ բանկիր էլ չի ստեղծում։ Բանն այն է, որ արժեատի զարգացումը հասցրեց մետաղների հանույթի ու մշակման աճին, մետաղն փողերի տարածմանը։ Մետաղն փողերի ասպարեզ գալը կապված է աշխատանքի երկրորդ խոշոր հասարակական բաժանման՝ Նողադրությունների արժեատի անշատման հետ։ Մետաղն փողի համար սկզբում օգտագործվում էին պղինձը, բրոնզը, արծաթը և միայն հետագայում ոսկին։

Ազնիվ մետաղները ըստ իրենց բնական հատկությունների (միասնականության, բաժանելիության, պահպանելիության) առավել չափով հարմարեցված են փողի հասարակական զեղին։ Բայց ոսկի արդյունահանելու համար շատ մեծ աշխատանք էր պահանջվում։ Այդ պատճա-

ռով նրան փողի զեղ ամրակցելու պրոցեսը երկար տևեց։ Որպես փող ոսկին լիակատար տիրապետում ստացավ միայն XIX դարում, երբ հայտնաբերվեցին նրա հարուստ պաշարները և երբ ծավալվեց համաշխարհային շուկան։

Արժեք և գին

Փողի ծագումը հասցնում է ապրանքային փոխանակության ձևերի հետագա զարգացմանը։ Փողի ասպարեզ գալուց հետո բոլոր ապրանքները հավասարեցվում են փողին, յուրաքանչյուր ապրանքի արժեքը արտահայտվում է փողով, Դրանով իսկ ապրանքները օժտվում են գինով։ Գինը ապրանքի արժեքի փողային արտահայտությունն է։

Քանի որ ապրանքների արժեքը փոխանակության պրոցեսում արտահայտվում է ապրանքների հավասարեցման միջոցով, արժեքի ձևի զարգացման բոլոր ստորադասներում փոխանակության համեմատությունների փոփոխումը կարող է առաջացնել շեղումներ ապրանքների արժեքի իրական ընթացքից։ Ի՞նչ որ փոխանակության համեմատությունները կախված են նաև հարաբերական ձևում գանձող ապրանքների արժեքից և ապրանք-համարժեքի արժեքից։

Գին երևան գալը արտահայտում է դրա հետ կապված հակասությունների հետագա զարգացումը։

Մինչև համընդհանուր համարժեքի երևան գալը յուրաքանչյուր ապրանքի փոխանակման պայմանները ամբողջովին կախված էին տվյալ ապրանքային զործարքը որոշող հանգամանքներից։ Փողի և գնի իր երևան գալուց հետո ապրանքների փոխանակային արժեքի վրա սկսեցին ազդել ոչ միայն տվյալ կոնկրետ զործարքն առաջացրած հանգամանքները, այլև արտադրության և շուկայի ընդհանուր վիճակը։ Պահանջարկի ու առաջարկի հարաբերակցության ազդեցության տակ փոխանակվող ապրանքների գների՝ իրենց արժեքից շեղումը ընդհանուր ընույթ է ստանում և զրևեղծվում ոչ միայն առումայի յուրաքանչյուր առանձին զործողության մեջ, այլ նաև տվյալ ապրանքների ամբողջ շուկայում։

Գին կարող են ունենալ նաև արժեք չունեցող իրերը, օրինակ՝ շմբչակված Նողամասերը, որոնք մարդու աշխատանքի չեն ենթարկվել, աչսինքն՝ Շնարավոր է արժեք չարտահայտող գների գոյություն։ Հետևապես, գին երևան գալը արտացոլում է ապրանքային տնտեսության հակասությունների խորացումը։

Ապրանքի ու փողի սխառնությունը և տարբերությունը

Արժեքի ձևի զարգացման օրինակաբանությունների ընտանիքում բնույթ է տալիս հետևություն անել, որ փողի ծագումը պատմական պրոցես է, որի հիմքում ընկած է ապրանքային փոխանակու-

թյան զարգացումը: Փողի ծագման պատճառը ապրանքային արտադրության հակասությունների ծավալումն է և Փողը, ինչպես արդեն ասվել է, ապրանք է, որը համընդհանուր համարժեքի հատուկ զեք է կատարում, ինչ փողը, թե՛ ապրանքների իրենցից ներկայացնում են հասարակական աշխատանքի արդյունքները: Բայց արտադրության միջոցների մասնավոր սեփականության պայմաններում բոլոր ապրանքները շուկայում անմիջականորեն հանգեն են զույգն որպես մասնավոր աշխատանքի արդյունքներ, իսկ փողը՝ որպես հասարակական աշխատանքի անմիջական մարմնացում (համընդհանուր համարժեք): Միայն փողով փոխանակելով կարելի է որոշել, որ ապրանքները շուտ էություն հասարակական աշխատանքի արդյունքներ են: Այլ կերպ ասած, շուկայում հասարակական աշխատանքի հաշվառում է կատարվում քանակական ու որակական տեսակետից, որի համար միջոց է ծառայում փողը: Մասնավոր սեփականության տիրապետման ժամանակ այդ հաշվառումը կատարվում է տարերայնորեն, ապրանք արտադրողների թիկունքում, զենքի տարերային տատանումների միջոցով:

Փոխանակման պրոցեսում իրացվում է կտրը արտաքնադատ անկախ մասնավոր ապրանքարտադրողների միջև Փողը, լուծելով ապրանքների անմիջական փոխանակության հակասությունները, դրա հետ միասին պայմաններ է ստեղծում ապրանքային տնտեսության հակասությունների հետագա զարգացման համար: Փողի առաջին զայլ ամենևին հասարակական շեղողանկա հարաբերություններ չի ստեղծում, ինչպես այդ պատկերում են բուրժուական անասագիտները: Իհարկե, որպես համընդհանուր համարժեք, փողը պատմականորեն ամենից ասոց պատկերվում էր ապրանքափոխանակությանը պարզ ապրանքարտադրողների միջև, փոխանակություն, որը կապված էր մարդու կողմից մարդու շահագործման հետ: Բայց արտադրամիջոցների մասնավոր սեփականության պայմաններում փողի ֆունկցիան անխուսափելիորեն նրան զարկնում է շահագործման գործիք:

Փողը որպես շահագործման գործիք

Փողը ապրանքային փոխանակության ժամանակ (Ա—Ա) առանց փողի մասնակցության ապրանքների տուտանք միշտ համընկնում էր ժամանակի մեջ: Փողի ծագման հետևանքով փոխանակությունը բաժանվել էր երկու հակադիր և միմյանց լրացնող գործողության՝ վաճառքի և զեման:

Նախքան ապրանք զեկը ամեն մի մասնավոր սեփականատեր պետք է վաճառքի իր ապրանքը: Դա ստեղծում է պայմաններ, որոնք միջնորդ-վաճառականին թույլ են տալիս ներքաշվել փոխանակության մեջ: Վաճառականը առուձախ է տեսնում ոչ թե անմիջականորեն սպառողական արժեք ձևից բերելու նպատակով, այլ իր արժանագրության տակ կցած փողի քանակին ավելացնելու համար, հարստանալու համար: Արիշ խոսքով, փողային շրջանառությունը նախադրյալներ է ստեղծում, որպեսզի առաջինը դա վաճառականական կապիտալը: Փողային հարստությունների մեծացումը խոշոր սեփականատերերի ձեռքին և մանր ապրանքարտադրողների քայքայումը պայմաններ ստեղծեցին նաև վաշխատական կապիտալի առաջինը զայլու համար:

Փողային տնտեսության զարգացումը մասնավոր սեփականատերության պայմաններում ունեցանում է հասարակական տարերքը և դրա իշխումը մարդկանց վրա: Դա աստիճանաբար քայքայում է քնամիթրային տնտեսությունը, օժանդակում արտադրողներից ոճանց քայքայմանը և մշուտների հարստացմանը, դրանով իսկ ուժեղացնելով շեղողությունը: Փողն սկսում է գործել նաև ապրանքային շրջանառության ոլորտից դուրս. ծնունդ են առնում փողային ռենտան ու փողային հարկեր, բնամիթրային պարհակները փոխարինվում են փողայինի:

Ապրանքային արտադրության, փողային տնտեսության տարերային զարգացումը հասցնում է այնտեղ, որ փողի մեջ ավելի ու ավելի է մարմնանում հասարակական տարերային ուժի իշխանությունը: Փողի հասարակական ուժը, քանի որ այն կուտակվում է հարուստների ձեռքին, դառնում է մասնավոր անձի ուժ: Հարուստների իրենց մտա կուտակում են հակալական փողային հարստություններ, իսկ աշխատավոր մասաների փողի կարիքը շարունակ աճում է: Մասնավոր սեփականությունը պայմաններում փողը անխուսափելիորեն դառնում է շահագործման միջոց: Վաճառականների ու վաշխատողները իրենց մտա կուտակված փողը օգտագործում էին մանր արտադրողների ստրկացնելու համար, լուրացնելով նրանց աշխատանքի զգալի մասը: Փողը շահագործման միջոց էր դառնում զեռ արտադրության կապիտալիստական նշանակից էլ առաջ:

Փողի շրջանառությունը ինքնին չի կարող կյանքի կոչել կապիտալիստական արտադրանքալուծանակը, որովհետև դրա համար անհրաժեշտ է արտադրողական ուժերի զարգացման որոշակի մակարդակ: Բայց փողի շրջանառությունը մեծապես նպաստում էր պարզ ապրանքային տնտեսության կապիտալիստականի փոխակերպվելու պրոցեսին: Փողային տարերային շրջանառությունը պայմաններ է ստեղծում անմիջական արտադրողներին սեփականազրկելու նրանց աշխատումը՝ ապրանքի փոխարկվելու, վարձու աշխատանքի սխտանի առաջանալու համար:

Կապիտալիզմի որով փողը դառնում է կապիտալիստական շահագործման համընդհանուր գործիք, վարձու աշխատանքի գնման և նրա ստեղծած հավելյալ արժեքի անհատույց յուրացման միջոց, Փողը ինքնին կապիտալ չէ՝ Այն կապիտալ է դառնում միայն այն դեպքում, երբ կիրառվում է մարդու կողմից մարդու շահագործման համար:

Փողի ֆունկցիաները: Փողի նւթյունը արտահայտվում է այն ֆունկցիաներում, որ փողը կատարում է ապրանքային արտադրության և շրջանառության պրոցեսում:

Փողը որպես արժեքի չափ
Զարգացած ապրանքային տնտեսության մեջ փողը կատարում է 1) արժեքի չափի, 2) շրջանառության միջոցի, 3) գանձերի գոյացման միջոցի, 4) վճարման էֆիցիենտի և 5) համաշխարհային փողի ֆունկցիաները:

Փողի ֆունկցիաների զարգացումը առաջանում է ապրանքային տնտեսության և նրա հակասությունների աճով: Ուստի փողի այս կամ այն ֆունկցիայի զարգացման աստիճանը իրենով արտացոլում է բուն ապրանքային արտադրության էվոլյուցիայի տարբեր կտակները:

Նախքան ապրանքի շրջանառության մեջ մտնի նրա արժեքը պետք է արդեն չափված լինի: Քանի որ բոլոր ապրանքների արժեքը փողով է չափվում, ապա փողի առաջին ֆունկցիան արժեքի չափի ֆունկցիանն է, Տարբեր ապրանքների արժեքի համաչափվելն է, բանակախոս՝ հարաբերակցելի: Բայց փողը չէ, որ ապրանքները համաչափելի է դարձնում, այլ այն, որ դրանք բոլորը, ներառյալ նաև ոսկին, հասարակական աշխատանքի արդյունք են: Ապրանքների արժեքը ոսկով է չափվում Տենց այն պատճառով, որ թե՛ ապրանքները, թե՛ ոսկու վրա ծախված է հասարակական աշխատանքը:

Ապրանքի արժեքը արտահայտելու, այն չափելու համար ձևաբանում կանխելի փող՝ ոսկի, ունենալու անհրաժեշտություն չկա: Արժեքի չափի ֆունկցիան փողը կատարում է որպես մտովի պատկերացում, իդեալական կամ փողը Սահմանելով ապրանքի որոշակի զին, նրա տեղը մտովի, կամ, 4. Մարքսի բաներով սասած, իդեալապես, այդ ապրանքի արժեքը արտահայտում է փողով՝ ոսկով: Բայց ապրանքի արժեքը ոսկով իդեալական չափելը հնարավոր է միայն այն պատճառով, որ փողը իրական գոյություն ունի որպես համընդհանուր համարժեք: Մարդկանց կողմից փողի և ապրանքի միջև մտովի պատկերացվող հարաբերությունը առաջանում է ապրանքի արժեքի ու ոսկու արժեքի միջև իրականում գոյություն ունեցող հարաբերությունը:

Ապրանքի արժեքի չափումը կատարվում է ոսկու՝ որպես փողային ապրանքի, որոշակի բանակությանը այն հավասարեցնելու միջոցով: Ապրանքի արժեքը արտահայտվում՝ ապրանքի գինն է: Ապրանքի գինը նշանակում է ոսկու որոշակի մասային արժեքի համարժեքությունը որոշակի բանակությանը ապրանքի արժեքի նկատմամբ:

Բայց ապրանքի զինը իր արժեքին համապատասխանում է միայն պահանջարկի ու առաջարկի համընդհանուր զեպքում: Իսկ եթե այդ չէ, ապա անխուսափելիորեն առաջանում են զիների շեղումներ արժեքից: Այսպիսով, ապրանքների զինը կախված էն չենց ապրանքների արժեքից, փողի (ոսկու) արժեքից, պահանջարկի ու առաջարկի հարաբերակցությունից:

Ապրանքների գինը արտահայտվում են փողային ապրանքի՝ ոսկու որոշ բանակության մեջ: Ոսկու քանակը, նրա մասան չափվում է նրա կշռով: Ոսկու որոշակի կշռային քանակությունը ընդունվում է որպես նրա մասային չափման միավոր: Այդ միավորը, որը սահմանում է պետությունը որպես փողային միավոր, կոչվում է գների մասշտաբ: Գների մասշտաբը ծառայում է ոսկու մասային չափման համար: Ապրանքների բոլոր գները արտահայտվում են փողային միավորների որոշակի քանակության մեջ, կամ, այլ կերպ սասած, ոսկու կշռային միավորների որոշակի քանակության մեջ: Նախահղափոխական Ռուսաստանում XIX հարյուրամյակի վերջերին փողային միավորը ոսկու էր, որը հավասարեցված էր 0,7742 գ մարդու ոսկու ճես:

Չի կարելի շփոթել արժեքի չափը որպես փողի ֆունկցիան և գների մասշտաբը: Փողը արժեքի չափի ֆունկցիան է կատարում այն պատճառով, որ փողը հասարակական աշխատանքի մարմնավորումն է: Իրր գների մասշտաբ փողը հանդես է գալիս որպես ոսկու հաստատված կին և ծառայում է նրա մասան չափելու համար անկախ այն բանից, թե ինչ քանակության հասարակական աշխատանք է պարունակվում մեկ գրամ ոսկու մեջ:

Ոսկու արժեքի և ապրանքների նախկին արժեքի փոփոխության զեպքում ապրանքների գները կփոփոխվեն: Բայց մի ապրանք, որի արժեքը 10 անգամ գերազանցում է ուրիշ ապրանքի արժեքից, համարժեք կլինի ոսկու 10 անգամ մեծ քանակին: Հաս որում գների մասշտաբը չի փոփոխվի:

Իսկ եթե գները մասշտաբը, այսինքն՝ փողային միավոր կազմող ոսկու քանակը մոտփոխվի, ապա առանց ապրանքի ու ոսկու արժեքների փոփոխման անխուսափելիորեն տեղի կունենան գների փոփոխությունը: Նրանք կահմանվեն այլ մակարդակի վրա, քանի որ յուրաքանչյուր փողային միավոր այն ժամանակ կներկայացնի հասարակական աշխատանքի որոշ քանակություն:

Փողը որպես շրջանառության միջոց
Որպես արժեքի չափ փողի մեջ կարելի է մտածել արտահայտել ամբողջ տնտեսության արտատալը և առանձին մարդկանց հարստությունները: Իսկ ապրանքների շրջանառության պրոցեսում փողը պետք է անպայման առկա լինի:

որովհետեւ այդանքները տուածախի զեպրում զրանց իրեցալական զները պետք է վերածվեն ռեալ փողի: Այդ պրոցեսում փողը կատարում է շրջանառության միջոցի ֆունկցիա: Ապրանքը փողի փոխարկվելը նշանակում է այն փաստի հաստատական ճանաչումը, որ ապրանքը պատրաստելու համար ապրանք արտադրողի աշխատանքը իսկապես պետք է հասարակությանը: Մասնավոր սեփականության վրա հիմնված տնտեսությունում ապրանք արտադրողների համար առանձնակապ թարր է ապրանքը փողի փոխարկվելու գործողությունը: Այստեղ դրսևորվում է հակասությունը մասնավոր և հասարակական աշխատանքի միջև, մասնավոր արտադրողների կախվածությունը շուկայի տարրերից:

Փողի՝ որպես շրջանառության միջոցի գործողությունը արտահայտում է ապրանք արտադրողների միջև արտադրական կապերի հետազգա զարգացումն ու բարդացումը: Պողը ապրանքափոխանակության ժամանակ ապրանքի վաճառումը միաժամանակ նշանակում էր ուրիշ ապրանքի գնում: Իսկ ապրանքային շրջանառության պրոցեսում ապրանք արտադրողի կողմից իր ապրանքը վաճառումը զեն չի պայմանավորում նրա կողմից միաժամանակ ուրիշ ապրանքի գնում: Ապրանքի վաճառումը և գնումը կարող են խախտվել ժամանակի ու տարածության մեջ: Եթե ապրանք արտադրող մեկը իր ապրանքը վաճառում է, ուրիշ ապրանք շնչելով, այսպ, հետևապես, ինչ-որ ապրանքարտադրողներ չեն կարող վաճառել իրենց ապրանքները, որի հետևանքով խափանում է ստեղծվում այդ ապրանքների վաճառահանելու գործում: Այդպես՝ ապրանքա-փողային շրջանառությունը իր մեջ ներթափանցում է ապրանքների վաճառման ու գնման իզման հնարավորություն, կնշանակել՝ նաև զերարտադրության անտեսական ճգնաժամերի հնարավորություն: Սակայն պարզ ապրանքային տնտեսությունում այդ հնարավորությունը իրականություն չի դառնում, քանի որ աշխատանքի հասարակական բաժանումն այստեղ համեմատաբար թույլ է զարգացած, անբավարար է զարգացած նաև արտադրության պրոցեսի հասարակական բնույթը, իսկ շուկան հիմնականում սեզական է:

Այդպես շրջանառության միջոց փողը նախակցում հանդես էր գալիս մետաղե ձուլակտորներով: Բայց ձուլակտորներով ապրանքների փոխանակումը մի շարք գեվառություններ էր ստադացնում. պետք էր կշռել մետաղը, որոշել նրա հարցանելը, մետաղածույլերը կտորների բաժանել և այլն: Սրկկտիվորեն ծաղեց ձուլակտորների մեջ մետաղի բավանգակությունը հեղինակավոր կերպով վավերացնելու անհրաժեշտություն: Դրանք (МОНЕТА) հենց իրենց ներկայացնում է սահմանված ձևի ձուլակտոր, որը բառ կշռի ու հարցանելի պարունակում է որոշ քանակությամբ մետաղ, և զա դրանի վրա վավերացված է պետության հատուկ դրոշմով:

Փողը շրջանառության միջոցի ֆունկցիան կատարում է անցողիկ կերպով: Ապարանքներով մեկ ապրանքային գործարքը, ախոհետև նա սպասարկում է հաջորդ գործարքը և այլն: Այդ ֆունկցիայի անցողիկ իննչը թույլ է տալիս լիարժեք փողը փոխարինել նրա արտահայտչին՝ որի թիրախը փողով (օրինակ՝ պղնձի) կամ արժեքի թղթանշաններով: Անկեղծամբ շրջանառության սրբակրկան ցույց է տվել, որ անբեղձատ շրջանառության հետևանքով դրամները մաշվում են, կորցնում են իրենց մաստայի մի մասը և վերածվում ոչ լիարժեք փողի: Դրամների անվասական արժեքը և դրանց սեալ քաճանդակությունը միջանցից սեզատվում, տարբերվում են, ու այդ հանգամանքները օգտագործել է պետական իշխանությունը: Արպես ոսկու փոխարինիչներ սկսեցին շրջանառության համար թողարկել արժեքի թիրախները:

Փողը որպես գանձերի գույացման միջոց

Տարբեր հանգամանքների բերումով շրջանառության պրոցեսը կարող է ընդհատվել, որի հետևանքով փողը գաղաթում է շրջանառություն կատարելու և մնում է անշարժ: Այս դեպքում փողը սկսում է կատարել նոր ֆունկցիա՝ գանձերի գույացման միջոցի ֆունկցիա:

Ապրանքային արտադրության տարիքային զարգացումը առաջացնում է փողի կուտակման օբյեկտիվ անհրաժեշտություն: Շուկայի պատահականություններից պայահվազարկելու համար յուրաքանչյուր ապրանքարտադրող պետք է իրեն ապահովի փողի որոշ սեղելով և հնարավորություն ունենա ուրիշ ապրանքներ գնել անկախ այն բանից, թե կհաջողվի՞ արդյոք իրացնել սեփական ապրանքները: Վաճառականական էր ու վաշխատական կապիտալի զարգացման հետևանքով, փողը պահելու ձգտումը, աստիճանաբար, որոշ չափով դառնում է ինքնանպատակ գործ:

Բնամթերային անտեսություն քայքայման ու ապրանքային հարսբերությունների զարգացման համեմատ փողը ավելի ու ավելի է իրեն դնետրում որպես հասարակական հարստության մարմնացում: Բնագրթերային տնտեսության պայմաններում հարստության կուտակումը իրականացվում էր արդյունքների կուտակման ձևով: Ապրանքային տնտեսության զարգացումը առաջացնում է հարստության կուտակման այլ ձև՝ փողի կուտակման ձևը: Անսահմանափակ քանակությամբ ապրանքներ չի կարելի պահել, մինչդեռ փողային ապրանքը, համընդհանուր հարստության գեր կատարելով, միշտ կարող է կատարել իր ֆունկցիան:

Այդպես գանձ փողը հարստության արտահայտիչ է ընդհանրապես. Գանձի ֆունկցիան կարող են կատարել ոչ միայն ոսկե դրամները, այլև հենց փողային էությունը նրա անմիջական բնամթերային ձևով՝ ոսկե ձուլակտորները, ոսկուց պատրաստված բանվածքները և այլն:

Փողը գտնվի ֆունկցիայում տարևաշնորհն կարգավորում է զբա-
մական շրջանառությունը: Այսպես, ապրանքների արտադրության եվա-
զելու և ապրանքաշրջանառության կենսակիզու գեպրում սակու մի մասը
շրջանառությունից զուրս է մնում և փոխարկվում գտնվի: Իսկ երբ արտա-
դրությունը ընդարձակում և ապրանքաշրջանառությունը աճում է, այդ
սուկին ներքի շրջանառության մեջ է մտնում:

Ապրանքային տնտեսության զարգացման վաղ աստիճաններում
փողի կուտակումը կատարվում էր փողը շրջանառությունից զուրս հա-
նելու միջոցով: Իսկ կապիտալիստական արտադրանքանակի ժամանակ
տիրացվածը եշանակություն է ստանում շահույթի հետևից ընկնելը, բայց
քանի որ անշարժ փողը շահույթ չի բերում, կապիտալիստները
ձգտում են շրջանառության մեջ դնել այն, գտնել նրա համար շահավետ
կիրառում: Իստի և կապիտալիզմի պայմաններում գտնվեց սովորա-
բար հանձնում են բանկերին՝ պահելու համար: Բանկերը փողը համա-
կենարանացնում են և վարկի միջոցով գտնում նրա շահութաբեր կիրա-
րումը:

Կապիտալիզմի ընդհանուր ճշմամբ կապիտալիստական զրամ-
կան շրջանառությունը հասցրեց քառասյին վիճակի: Գրա հետևանքով
վերածնվեց կանխիկ սուկի ձևը բերելու ուղղությամբ կապիտալիստնե-
րի ձգտումը: Բուրժուական տնտեսագետների հաշվարկումների համա-
ձայն զանազան երկրների կապիտալիստներ իրենց անձնական սնչյին-
րում պահում են ավելի քան 15 միլիարդ զոլար սուկի, որը շատ անգա-
մով գեպրանցնում է բոլոր կապիտալիստական երկրներում մեկ տար-
վա ընթացքում արդյունահանվող սուկու քանակը:

Կապիտալիստական երկրների միջև պայքար է մղվում ուժու ու-
ղիվների համար, պայքար, որը հանդիսանում է միջմուպերիալիստա-
կան սակնասուր հակասությունների բաղադրուցի մասը: Բանն այն է,
որ ուժու ուղիվները իմպերիալիստական պետությունները օտապոր-
ծում են որպես իրենց միջև տնտեսական պայքարի կարևորագույն զին-
բերից մեկը և որպես տնտեսական թույլ զարգացած երկրների վաշխա-
տական շահարժում միջոց:

**Փողը որպես վճարման
միջոց**

Վճարման հետաձգումով ապրանքների վաճառ-
ման զեպերում փողն սուկե վճարման միջոցի
ֆունկցիա կատարելու Երբ ապրանքները ծախվում
են վճարման հետաձգումով, փողը գները որոշելիս գործում է իրական-
պես, իբրև արժեքի չափ, բայց շրջանառության միջոցի դեր չի կատարում:
Փողը կարող է ապրանքների համար փող վճարում են միայն վճարման
ժամկետը հասնելու ժամանակ: Հետևապես, այս դեպքում փողը շրջա-
նառության պրոցեսում ապրանքներին անմիջապես չի հակադրվում, այլ
շրջանառություն է մտնում միայն որոշ ժամանակ անց, վճարման մի-

ջոցի ֆունկցիան արտացոլում է մարդկանց միջև արտադրական ու առ-
տրական կապերի հետագա զարգացումը:

Որպես վճարման միջոց փողի ֆունկցիան ենթադրում է փողի ու
միայն որպես զեպրական միջոցի, այլ նաև որպես հասարակական հա-
րատության, այսինքն՝ ընդհանրապես գտնվի մարմնացման զարգացու-
մը: Փողի որպես վճարման միջոցի գործողությունը չի սահմանափակ-
վում ապրանքային շրջանառության ոլորտի սահմաններով: Պարտաճե-
րի և պարտագանի հարաբերությունը տեղի է ունենում, օրինակ, փո-
ղի փոխառվության, փոխառվություններով գործարքների զեպրելում:
Վճարման միջոցի ֆունկցիան փողը կատարում է նաև տնտային, հար-
կերի վճարման զեպրելում:

Փողի որպես վճարման միջոցի կիրառման ասպարեզը զգայուն
ընդարձակվում է վարկի ու վարկային սխեմայի զարգացման կազմակցու-
թյամբ, որնք միտմամանակ սահմանափակում են փողի որպես շրջա-
նառության միջոցի կիրառումը: Հարցադած կապիտալիզմի պայմաննե-
րում փողը հանգես է դաշխ առավելագույն որպես վճարման միջոց: Իսկ
որպես շրջանառության միջոց փողը գործում է զխաճորտայն մանր
սուկերի շրջանում:

Վարկային հարաբերություններին և փողի որպես վճարման միջոցի
ֆունկցիայի զարգացումը հանդիսանում է վարկային փողի առաջանա-
լում: Մեկ կապիտալիստի կողմից մի ուրիշ կապիտալիստի արամա-
ղվող վարկը առաջացնում է պարտքային պարտավորադրեր՝ մուրհակ-
ներ: Այդ պարտքային պարտավորադրեր, մասնակցելով առևտրային
շրջանառությանը, ձևերից ձևը անցնելով մինչև վճարման ժամկետի
հասնելը, քաս էություն փողի դեր են կատարում: Բայց մուրհակների
շրջանառությունը սահմանափակ է, քանի որ զրանք ունենում են միայն
մասնավոր անձի երաշխավորություն: Այդ նկատառումով օրյնկախվորեն
ձագում է ավելի կալում երաշխիքի պահանջումներ, որ նախորդում է
բանկնտաների երևան պալը: Բանկնտը, իրենից ներկայացնում է մուր-
հակ, որ բանկը առաջ է մասնավոր անձի մուրհակի փոխարեն: Բանկ-
նտաների կմիտան կատարվում է ապրանքային շրջանառության վար-
կավորման կարգով: Այսպիսով բանկնտը ձագում է փողի որպես
վճարման միջոցի ֆունկցիայից: Բանկնտաների հետ միտային շրջանա-
ռությանը մասնակցում է վարկային միջոցների մի ուրիշ ձև՝ նկերը:
Չեկն իրենից ներկայացնում է ավանդատիրոջ զրամ հրաման բանկին՝
իր հաշվին փող տալ չկելով նշված անձավորությունը: Չեկերը շրջանա-
ռության կարճ ժամկետ ունեն:

Վարկային հարաբերությունների զարգացումը հետարավորություն է

ստեղծում պարտերը մարչ պարտային պարտավորությունների փոխադարձ հաշվանցումների միջոցով՝ առանց կանխիկ փողի:

Արտադրամիջոցների մասնավոր սեփականություն պայմաններում փոխադարձ հաշվանցումների փոխումը պարունակում է հակասություններ՝ արմատավորված մասնավոր ապրանքարտադրողների բուն բնույթի մեջ: Եթե պարտապանը չկարողանա ժամանակին ծածկել իր ապրանքը կամ դեղերը իջեկու հետևանքով իր ապրանքի գինաարժեք ստանա իր նախատեսածից ավելի բիչ: դումար, այս նա ի վիճակի չի լինի պարտը վճարել: Դրա հետևանքը կլինի չվճարում ու միայն ավելի ապրանքարտադրողի կողմից, այլ այն անձնավորության կողմից, որին նա պարտ է: Եղթնական ռեակցիայի կարգով ավելի հանգամանքը կդիպչի իրենց՝ ապրանքները վարկով վճարումս միևնախփ վարկանքարտադրողների շահերին և կանգորդառու նրանց վիճակի վրա: Փանի զեռ վճարումները փոխադարձաբար մարվում են, կանխիկ փող չի պահանջվում: Բայց հենց որ փոխադարձ պարտի շղթայում որևէ վճարում չմարվի, փոխադարձ հաշվանցումների շղթան կկորվի և կանխիկ փողը անհրաժեշտ կլինի:

Աշխատուժը միշտ վաճառվում է ապառիկ, այսինքն՝ վճարվում է կապիտալիստի կորմից այն օգտագործելուց հետո: Բանվորը իր աշխատուժի սպառողական արժեքը ավանսավորում է կապիտալիստին: Աշխատուժի արժեքը վճարվում է նրա զնման պահից որոշ ժամանակ անց: Ինչուց հետո, օրինակ, մեկ, երկու շաբաթ անց, և այն, այսինքն՝ այն բանից հետո, երբ կապիտալիստը ինչ-որ ժամանակընթացքում արգեն օգտագործած է լինում աշխատուժը:

Այսպիսով, կապիտալիստը աշխատանքի շուկայում աշխատում ապրանքը ձևը է բերում դրա սպառման պրոցեսում: Հավելյալ արժեք ստանալու համար: Աշխատում սպառողական արժեքի օգտագործումը իրականացվում է շուկայի սամանանից, շրջանառության սյուրտից դուրս, արտադրության պրոցեսում: Հենց այստեղ է, որ կապիտալիստը բանվորին ստիպում է գործադրել ավելի շատ աշխատանք, քան նրան պետք է գոյության անհրաժեշտ միջոցներ վերարտադրելու համար:

Այն հարաբերությունները, որ փոխանակության սյուրտում առաջանում են կապիտալիստների և վարձա բանվորների միջև, ստեղծում են կեղծ, խաբուսիկ պատկերացումներ այդ երկու դասակարգերի միջև իրական փոխհարաբերությունների մասին: Եուրեւեւ կապիտալիստը և բանվորը արտաբուսա հանդես են գալիս որպես հավասար սպառնքատերեր՝ մեկը որպես զնող, մյուսը որպես վաճառող: Բուրժուական տնտեսագետները վաղուց ձգտում են այդ խաբուսիկությունը ներկայացնել որպես իրականություն, փորձելով ապագացնել հակասությունների բուցակայությունը աշխատանքի և կապիտալի միջև:

Արտադրության կապիտալիստական պրոցեսի որպես կապիտալիստների կողմից վարձու բանվորների վճարված աշխատանքի յուրացման պրոցեսի վերլուծությունը, որ ավել է Կ. Մարքսը, բացահայտել է բուրժուազիայի և պրոլետարիատի միջև հարաբերությունների իրական էությունը: Կ. Մարքսը ցույց տվեց, որ չի կարող շահերը հավասարություն, միասնություն լինել կապիտալիստական հասարակության մեջ, որտեղ բուրժուազիան արտադրամիջոցները մոնոպոլացրել է, իսկ արտադրամիջոցներից զուրկ բանվորները սովամահ լինելու համար ստիպված են իրենց աշխատելու ընդունակությունը վաճառել կապիտալիստներին ու հարստացնել շահագործողների դասակարգը:

* К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23, стр. 181.

Կապիտալիստական արտադրության բնույթը, աշխատանքի պրոցեսը և աշխատանքի անձանց պարգևները

Աշխատանքի պրոցեսը՝ զա բնութան հետ մարզու փոխհերթորոշման պրոցես է, նպատակահարմար գործունեություն է սպտառական արժեքներ ստեղծելու համար, մարդկային կյանքի մշտական, բնական պայմաններ: Մարդու նպատակահարմար գործունեությունը կամ աշխատանքը

և արտադրամիջոցները աշխատանքի պրոցեսի անհրաժեշտ գործոններն են: Յուրաքանչյուր հատարակական-անտեսական ֆորմացիայում աշխատանքի պրոցեսին հասու է իր ստեղծած անտեսական տանձնակի բովանդակությունը, որը որոշվում է արտադրամիջոցների սեփականության տվյալ ֆորմացիայում իշխող կնով:

Կապիտալիստական հասարակությունում արտադրամիջոցների և աշխատանքի միացումը իրապարզվում է ատմամիկ միջոցով, շուկայի միջոցով, որտեղ կապիտալիստը ձեռք է բերում աշխատում ու արտադրամիջոցներ: Այդ պատճառով այստեղ աշխատանքի պրոցեսը հանդիս է զայիս որպես կապիտալիստի կողմից վարձու բանվորի աշխատանքի սպառման պրոցես և բնորոշվում է երկու տանձնահատկություններով: Առաջինը, այն կատարվում է կապիտալիստի համար և կապիտալիստի հեղուկության տակ: Կապիտալիստը մոնոպոլիստորեն տիրում է արտադրամիջոցներին և աշխատանքային ժամանակախաբայում սպառ տնօրինում է աշխատանքը, որը նա ձեռք է բերել որպես ազրանք: Երկրորդը, արտադրության պրոցեսում ստեղծված արդյունքը պատկանում է ու՛ր թե նրա անմեջական արտադրողին՝ մարդու բանվորին, այլ կապիտալիստին: Կապիտալիստի օրով աշխատանքի պրոցեսը իրենից ներկայացնում է կապիտալիստի դեմ և իրեն պատկանող աշխատանքի և արտադրամիջոցների փոխգործողության պրոցես, այդ պատճառով էլ այդ պրոցեսին արդյունքը պատկանում է կապիտալիստին:

Փնկյով արտադրամիջոցներ և աշխատում, կապիտալիստը հոգ է տանում երկակի կերպի բաների մասին: Առաջինը, նա ուզում է արտադրամիջոցները այնպես սպառողական արժեքը, որը փոխանակային արժեք ունենա, այսինքն՝ ապրանք: Երկրորդը, նա ուզում է արտադրել այնպիսի ապրանք, որի արժեքը ավելի մեծ լինի աշխատանքի պրոցեսի համար իր ձեռք բերած գործունեների արժեքից, այն հաշվով, որ հավելյալ արժեք ստանա: Սպառողական արժեքը ինքնին չի հետաքրքրում կապիտալիստին, նրա համար միևնույն է ինչ արտադրել՝ ֆեղանոթներ, թե յուզը: Սպառողական արժեքի արտադրումը նրան անհրաժեշտ է այնքանով, որքանով որ նա հանդիսանում է արժեքի նյութական կրողը:

Ապրանքի ստեղծման պրոցեսում կապիտալիստի համար կարևորը հավելյալ արժեք ստանալն է:

Նախորդ գլխում արդեն ցույց է արվել, որ ապրանքների արտադրությունը՝ աշխատանքի պրոցեսի և արժեքի ստեղծման պրոցեսի միասնությունն է: Հիմա արտադրության պրոցեսը բնարկինք նաև որպես արժեքի ավելացման՝ հավելյալ արժեքի ստեղծման, պրոցես: Այդ պրոցեսի լուծումը ստեղծվելի պարանք՝ աշխատանքի սպառումն է կապիտալիստի կողմից:

Ոնկարները թե կապիտալիստը կազմակերպում է կարի մեքենաների արտադրություն և 8 ժամյա աշխատանքային օրվա բեթացումը նրա ձեռնարկությունը թողարկում է 100 մեքենա, որոնց պատրաստմանը մասնակցում են 50 բանվոր:

Իցիուր կապիտալիստը արտադրամիջոցներ գնելու համար ծախսել է հետևյալ դրամական գումարները.

Ներքե և կառույցներ (մեկ օրվա ծաշվածք)	50 դր.
Մեքենաներ և աշխատանքի այլ միջոցներ (մեկ օրվա ծաշվածք)	50 դր.
Հումք, նյութեր և վաճառանք	2000 դր.
Ընդամենը	2100 դր.

Իցիուր նաև, որ աշխատանքի դեմնա համար (պայմանով, որ մեկ աշխատողի աշխատանքի օրվա արժեքը հավասար է 8 դր.) կապիտալիստը ծախսել է 300 դրուր:

Այսպիսով, 100 մեքենայի արտադրության համար բոլոր ծախսերը կկազմեն 2400 դրուր:

Արտադրելով կարի մեքենաներ, բանվորները ծախսում են որոշ քանակությամբ կենդանի աշխատանք՝ նրանց աշխատանքը, ինչպես արդեն ստվել է V գլխում, երկակի բնութ է կրում. մի կողմից՝ զա կոնկրետ աշխատանք է, մյուս կողմից՝ արտադրակ աշխատանք: Արտադրության պրոցեսում բանվորները իրենց կոնկրետ աշխատանքով փոփոխում են հումքի ու օժանդակ նյութերի սպառողական արժեքները և ստեղծում նոր սպառողական արժեքներ: Սախաված արտադրամիջոցների արժեքը պահպանվում է և փոխանցվում պատրաստվող արդյունքին: Արտադրամիջոցները արժեքի փոխանցումը նոր ստեղծվող ապրանքին կատարվում է բանվորի կոնկրետ աշխատանքով: Մեր օրինակում այդ արժեքը կկազմի 2100 դր. (զա հավասար է արտադրամիջոցների ձեռքբերման համար կապիտալիստի արած ծախսերին):

Միևնույն ժամանակ բանվորները իրենց արտադրակ աշխատանքով նոր արժեք են ստեղծում: Նենթադրեք ամեն մի բանվոր մեկ ժամվա բեթացում ստեղծում է 1,5 դրուրի հավասար արժեք: Այդ զեպում 50

բանվոր 8 ժամյա աշխատանքային օրվա ընթացքում կատարվեն 600 զուլարի հավասար նոր արժեք¹։

Այսպիսով, 100 մեքենայի արժեքը ներառում է՝

Կապիտալի արտադրանքների՝ սակզմած արժույթի մեկ փոխացված արժեքը	8 ժամյա աշխատանքային օրվա ընթացքում	50 բանվորների	2100 զուլ.
սակզմած նոր արժեքը			600 զուլ.
	Ընդամենը		2700 զուլ.

Այդ մեքենաները իրացնելով ըստ արժեքի, կապիտալիստը ավելի շատ փող է ստանում, քան ավանսավորել էր։ Տարբերությունը 100 մեքենայի արժեքի և դրանց արտադրության վրա ավանսավորված արժեքի միջև հավասար է 300 զուլ. (Փ՝—Փ—2700—2400)։ Մյուս 300 զուլարն էլ չենց հավելյալ արժեքն է։

Կապիտալիստի ավանսավորած արժեքը մեծացել է, որովհետև քանվորները աշխատել են ավելի ժամանակ, քան պահանջում էր իրենց աշխատածի արժեքի համարժեքը վերարտադրելու համար։ Աշխատածի արժեքը և նրա սպասման պրոցեսում ստեղծվող արժեքը նրանք տարբեր մեծություններ են։

Մեր օրինակում իրենց աշխատանքի համարժեքը վերարտադրելու համար բանվորները պետք է աշխատեն 4 ժամ, իսկ նրանք աշխատել են աշխատանքային օրվա ընթացքում, որը տևել է 8 ժամ։ Այդ պատճառով նրանք ստեղծել են ավելի մեծ արժեք, քան իրենց աշխատածի արժեքն է։ Վերջից աշխատած արժեքը պատահորեն ամբողջ աշխատանքային իրավունք է ստանում նրա արտադրական արժեքը պատահորեն ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում և բանվորներին աշխատեցնել ոչ թե 4, այլ 8 ժամ։

Աշխատածի արժեքի համարժեքը վերարտադրելու համար անհրաժեշտ ժամանակի ընթացքում աշխատածի սպասումը արժեքի զույգացման պրոցեսն է։ Իսկ այդ ժամանակից դուրս աշխատածի ծախսումը իրենցից արգելն են իրադրացնում է արժեքի մեծացման պրոցեսն։ Աշխատածի որպես ապրանքի սպասումը արժեքի զույգացման պրոցեսը վերածում է նրա

¹ Աշխատած վարձելու համար կապիտալիստի ավանսավորած փողը դրժարգրվում է բանվորների գնեատարժեքներով։ Երբ ցանցից համար, այսինքն՝ նրանցով սպասման ստորվանք ենք ընելու, ծառայությունների դիմաց վճարելու համար և այլն։ Արտադրության պրոցեսում դրժում է քան աշխատածը և ոչ թե նրա արժեքը։ Այդ պատճառով աշխատածը աշխատանքի պրոցեսում իր արժեքը չի փոխանցում և չի կարող փոխանցել ստեղծվող ապրանքին, այլ վերարտադրում է այն։

մեծացման պրոցեսի։ Աշխատածի արժեքի համարժեքը վերարտադրելու համար անհրաժեշտ սահմանից դուրս աշխատանքային ժամանակի ծախսումը հավելյալ արժեքի աղբյուր է։ Կապիտալիստական արտադրության պրոցեսը աշխատանքի պրոցեսի և արժեքի ավելացման պրոցեսի միասնությունն է։ յնրպես աշխատանքի պրոցեսի և արժեքի զույգացման պրոցեսի միասնություն,— դրել է Կ. Մարքսը.— արտադրական պրոցեսը ապրանքների արտադրության պրոցեսն է, որպես աշխատանքի պրոցեսի և արժեքի մեծացման պրոցեսի միասնություն այն հանդիսանում է կապիտալիստական արտադրության պրոցեսն, ապրանքային արտադրության կապիտալիստական ձևն է։

Հավելյալ արժեքի արտադրությունը և յուրացումը իրագործվում է արժեքի օրենքի հիման վրա։ Կապիտալիստները աշխատանքի դրժանները արտադրանքից են ու աշխատածը, զնում են բառ նրանց արժեքի և ստեղծված արժեքների զանազան նույնպես բառ նրանց արժեքի։ Մարքսը ցույց է տվել, որ նույնիսկ երբ կապիտալիստները վճարում են աշխատածի լրիվ արժեքը, նրանք միևնույն է քանվորների աշխատանքից կորցում են հավելյալ արժեքը։ Նա սպառնացել է, որ հավելյալ արժեքի ստացումը պատահական կերտվի չի, այլ կապիտալիստական արտադրության օրենքիով օրինապի պրոցեսն։

Հավելյալ արժեքի արտադրության և յուրացման պրոցեսը ենթադրում է շրջանառության ոլորտի ու արտադրության ոլորտի միասնություն։ Շրջանառության ոլորտում կապիտալիստը ձեռք է բերում աշխատած արժեքներ և արտադրանքից ենք, չենց այդ ոլորտում էլ նա ապրանքների վաճառման ուղիով իրացնում է ստեղծված հավելյալ արժեքը, որը նա կապիտալիստից վերադրում է իր ձեռքը։ Արտադրության ոլորտում վաճառք բանվորների աշխատանքի հետեանքով ավանսավորված արժեքը անում է, ստեղծվում է հավելյալ արժեքը։ Կապիտալիստի փողը կապիտալի փոխարկման այդ ամբողջ պրոցեսը, դրել է Կ. Մարքսը, «կատարվում է շրջանառության ոլորտում և կատարվում է ոչ նրա մեջ։ Շրջանառության միջոցով՝ որովհետև այն պայմանավորվում է ապրանքային շուկայում աշխատածի գնումով։ Ոչ շրջանառության մեջ՝ որովհետև վերջինս միայն նախապատրաստում է արժեքի մեծացման պրոցեսը, իսկ դա կատարվում է արտադրության ոլորտում»։ Այս-

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23 стр. 208.

² Там же, стр. 206.

պն է լուծվում կապիտալի համընդհանուր ֆորմուլայի ներքին հակա-
սովյունը:

Աճորածեղտ և ճավելյալ Աշխատանքային օրը բաժանվում է երկու մասի:
աշխատանքանա-
նակը մասնակեր, որի ընթացքում բանվորը արտա-
հանում է աշխատուժի արժեքի համարժեքը: Այդ
ժամանակը է. մարքայ անվանել է անհրաժեշտ աշխատանքամասնակ,
իսկ այդ ժամանակահատվածը՝ ծախսվող աշխատանքը՝ անհրաժեշտ
աշխատանք:

Աշխատանքային օրվա մյուս մասը կազմում է հավելյալ աշխա-
տանքամասնակը. այսինքն՝ անհրաժեշտ աշխատանքային ժամանա-
կից դուրս շարունակված աշխատանքամասնակը: Հավելյալ աշխա-
տանքամասնակի ընթացքում ծախսվող աշխատանքը հավելյալ աշխա-
տանք է: Կապիտալիզմի պայմաններում այդ աշխատանքով ստեղծ-
վում է հավելյալ արժեք: Հավելյալ աշխատանքը և նրանով ստեղծվող
հավելյալ արդյունքը (այսինքն՝ աշխատողի գոյության համար անհրա-
ժեշտից դուրս արտադրվող արդյունքը) ներհատուկ է հարստացման
գագած հասարակության, իսկ հավելյալ արժեքը՝ միայն կապիտալիզմին
է ներհատուկ: Միայն կապիտալիզմի օրով է, որ հավելյալ արդյունքը
գանձում է հավելյալ արժեքի նյութական կրողը: Գա բացատրվում է
և նրանով, որ կապիտալիզմը իրենից ներկայացնում է ապրանքային ար-
տադրության համընդհանուր ձև, աշխատուժը կապիտալիզմի օրով գա-
նաձև է ապրանք: Աստի կապիտալիզմի պայմաններում անհրաժեշտ
արդյունքը գանձում է արժեքի նյութական կրողը, աշխատուժի համար-
ժեքը, իսկ հավելյալ արդյունքը՝ հավելյալ արժեքի նյութական կրողը:
Հավելյալ արժեքը՝ վարձու բանվորների աշխատանքով ստեղծվող և
կապիտալիստների կողմից անհատուց կերպով յուրացվող հավելյալ
կապիտալիստների կողմից անհատուց կերպով յուրացվող հավելյալ
և արդյունքի սպեցիֆիկ ձևն է: Այն իրենով բնորոշում է բուրժուազիայի
և արդյունաբերության միջև արտադրական հարաբերությունները, որոնք ար-
տաշույնում են կապիտալիստների կողմից վարձու բանվորների շահա-
ցործումը:

Հավելյալ արժեքը հանդիսանում է բուրժուական հասարակության
շահագործող դասակարգի՝ կապիտալիստների՝ կապիտալիստների և հողի խոշոր սեփա-
կանատերերի նկատմաների արդյունք: Կապիտալիստական կարգը հեն-
վում է վարձու բանվորների հավելյալ աշխատանքի վրա:

Մարդու կողմից մարդու շահագործումը կապիտալիստական արտա-
դրականականի ձևերից է, դա գոյություն է ունենել նաև նախկինում՝ ստոր-
կարգիական կարգի և ֆեոդալիզմի պայմաններում: Բայց արտադրամի-
ջոցների մասնավոր սեփականության և մարդու կողմից մարդու շահա-
ցործման վրա հիմնված յուրացանկային հասարակական-անտեսական

Ֆորմացիայի ներհատուկ է անմիջական արտադրողից հավելյալ աշխա-
տանք քանակու իր յարդիւլ-անտեսական սպեցիֆիկ ձևը և այդ աշխա-
տանքի արդյունքը յուրացնելու ու օգտագործելու իր սպեցիֆիկ ձևը: Այս-
պես, նորս գյուղացիների շահագործումը հիմնված է եղել անտեսական
և արտաանտեսական հարկազրանքով աշխատեցնելը զուգակցելու վրա:
Իսկ կապիտալիզմի պայմաններում իշխում է արտադրողին անտեսական
հարկազրանքով աշխատեցնելը: Վարձու բանվորները ազատ են անձ-
նական կախում ունենալուց: Բայց զրկված լինելով արտադրամիջոցնե-
րից և գոյության միջոցներից, նրանք ստիպված են իրենց աշխատելու
ընդունակությունը ծախել կապիտալիստին: Նրի վարձու բանվորը կա-
պիտալիստի համար աշխատի, հավելյալ արժեք չստեղծի, չի կարող
գոյություն ունենալ, որովհետև իր պահանջները բավարարելու մի-
ջոցներ չունի: Այդպիսով, վարձու բանվորը, լինելով այս կամ այն
առանձին կապիտալիստի սեփականությունը, պատկանում է կապիտա-
լիստների ամբողջ դասակարգին և, ըստ իսկյան, նրա աշխատանքը
հարկազրանքի բնույթ է կրում: Վարձու աշխատանքի սխտանք վարձու
ստրկության սխտան է:

Կապիտալիստական շահագործման տարրերի՝ հատկանիշը՝ վար-
ձու բանվորի հարկազրանքի աշխատանքի դիմակալվող ըղարկված
բնույթն է: Բանվորի անձնական ազատությունը և նրա կողմից իր աշ-
խատանքի վաճառումը քողարկում են նրա աշխատանքի հարկազրանքի
բնույթը, բանվորի կախվածությունը կապիտալիստի, վերջինիս կողմից
բանվորի հավելյալ աշխատանքի անհատուց յուրացումը:

Կապիտալիստական շահագործման շտանձնահատկությունը, որ
բխում է հենց կապիտալիստական արտադրության բնույթից, — ան-
համեմտեղեն հավելյալ աշխատանքի հետևից ընկնել է: Այսպես անկըչ-
տում է հավելյալ աշխատանքի, հավելյալ արժեքի ծախսը, որը ըն-
դունում է փողի համընդհանուր ձև, և կարող է կուտակվել ուղած քա-
նակությանը: Հավելյալ աշխատանքի արդյունքները յուրացնելու անսահ-
ման ձգտումը առաջացնում է կապիտալի կողմից աշխատանքի շահա-
ցործման նոր, նախկինում չտեսնված մեթոդներ:

§ 4. Կապիտալի էությունը Հաստատում և փոփոխում կապիտալ

Կապիտալը որպես
նապաստակական հարա-
բերություն

Ինչ ձևով էլ հանդես գա կապիտալը, որտեղ էլ
կիրառվի, այն միշտ իրենից ներկայացնում է
շահագործման միջոց, ուրիշի աշխատանքի յու-
րացման միջոց: Այդ գիծը հատկանշական է
ինչպես արդյունաբերական կապիտալի համար, այնպես էլ վաճառա-

կանական ու վաշխատական կապիտալների համար, որոնք գոյություն են ունեցել դեռ մինչևկապիտալիստական ֆորմացիաներում՝ ստրկատիրական կարգի ու ֆեոդալիզմի մամանակներում:

Բայց արդյունաբերական կապիտալը որպես ինքնաճող արժեք, ունի իր սպեցիֆիկ առանձնատվությունները, Առաջինը, այն տարբերվում է վաճառականական ու վաշխատական կապիտալներից իր ծագման պայմաններով: «Կապիտալն առաջ է գալիս միայն այնտեղ, — գրել է Կ. Մարքսը, — որտեղ արտադրության միջոցների ու կենսամիջոցների տերը չուկայում գտնում է ազատ բանվորի՝ որպես իր աշխատանքի ծախսողի, ու հենց այս մեկ պատմական պայմանն է իր մեջ մի ամբողջ համաշխարհային պատմություն է կրում: Ահա ինչու կապիտալը հենց իր ծագման պահից ազդարարում է արտադրության հասարակական պրոցեսի մի առանձին դարաշրջանի գոյությունը»¹: Իսկ վաճառականական ու վաշխատական կապիտալների ծագման համար բավական է պարզ ապրանքային արտադրության և զարգացած շրջանառության սրտիկ առկայությունը:

Երկրորդ, կապիտալը որպես ինքնաճող արժեք, վաճառականական ու վաշխատական կապիտալներից տարբերվում է նրանով, որ իր տիրոջ կողմից օգտագործվում է աշխատուժի սուղանքի գնելու համար, նպատակ ունենալով այդ սուղանքը արտադրության պրոցեսում սպառելու հետևանքով յուրացնել հավելյալ աշխատանք: Վաճառականական կապիտալը սպասարկում է ապրանքների շրջանառությունը, իսկ վաշխատական կապիտալի ֆունկցիան փոխառություններ արամարդելն է:

Երրորդ, կապիտալը որպես ինքնաճող արժեք վաճառականական ու վաշխատական կապիտալներից տարբերվում է եկամտի ազդեցությամբ, նրա արտադրման ու կապիտալի տիրոջ կողմից յուրացման մեթոդներով: Կապիտալիստի եկամտի աղբյուրը հավելյալ արժեքն է, որ ստեղծվում է վարձու բանվորների հավելյալ աշխատանքով կապիտալիստների պատկանող ձեռնարկություններում: Վաճառականների ու վաշխատողների եկամուտների աղբյուր են եղել ամենից առաջ մանրարտադրողների հավելյալ արդյունքը և անհրաժեշտ արդյունքի մի մասը, ինչպես նաև ստրուկների ու ճորտ գյուղացիների աշխատանքով ստեղծված հավելյալ արդյունքի մի մասը: Լուծախ վաշխատունքը յուրացնում էին մանր արտադրողների ամբողջ ունեցվածքը:

Վաճառականները իրենց հարստացման համար օգտագործում էին աշխատի միջոց, ինչպիսին է ոչ-համարժեքների փոխանակությունը: Նրանք սպրանքները վաճառում էին մանր արտադրողներին բարձր գնեքով, իսկ նրանցից սպրանքները գնում էին ցածր գնելով: Վաճառա-

կանները նաև բարձր գներով պերճանքի առարկաներ էին իրացնում ստրկատիրերին ու ֆեոդալներին, որոնք դրա դիմաց վճարում էին ըստ-րուկների ու ճորտ գյուղացիների աշխատանքով ստեղծվող արդյունքի հաշվին:

Վաշխատունքը հարստացնում էին իրենց փոխառությունների գրեթե ինչպես մանր արտադրողներից, այնպես էլ ստրկատիրերից ու ֆեոդալներից գանձվող բարձր տոկոսներով: Ընդ որում շահագործողները բարձր տոկոսները վճարում էին դարձյալ շահագործվողների կողմից ստեղծվող հավելյալ արդյունքի հաշվին:

Չորրորդ, կապիտալիստների ամբողջ դասակարգի հարստացումը սեղի է ունենում հավելյալ արժեքի արտադրության ու յուրացման հետևանքով: Վաճառականների ու վաշխատունքների կողմից ուրիշների աշխատանքի արդյունքների չտրցացումը կազմված է եղել արդեն ստեղծված արդյունքի, ստեղծված արժեքի վերաբաշխման հետ: Նյութական արժեքների, արժեքի ամբողջ ժառանգ հասարակության մեջ չէր սնում այն պատճառով, որ դրանց ինչ-որ մասը մանր արտադրողների, ստրկատիրերի ու ֆեոդալների ձեռքից անցնում էր վաճառականների ու վաշխատունքի ձեռքը:

Այսպես ուրեմն, կապիտալը որպես ինքնաճող արժեք իրենից ներկայացնում է բուրժուական հասարակության արտադրական հարաբերությունը, հարաբերությունն նրա երկու հիմնական դասակարգերի՝ կապիտալիստների դասակարգի և վարձու բանվորների դասակարգի միջև: Այդ հարաբերությունը արտահայտում է վարձու բանվորների շահագործումը կապիտալիստների՝ արտադրամիջոցների մենոպոլիստական սեփականատիրերի կողմից: Ե. Ապրիտալը իր չէ, — գրել է Կ. Մարքսը, — այլ հասարակության պատմական որոշակի ֆորմացիայի պատկանող որոշակի հասարակական արտադրական հարաբերություն, որը ներկայացված է իրի մեջ և այդ իրեն առկա է հասարակական օպեցիֆիկ բնույթով»²:

Նյութական բովանդակության տեսակետից քննարկելով կապիտալը գոյություն ունի կապիտալիստի ձեռքին փողի որոշ գումարի ձևով, նրա գնած արտադրամիջոցների ձևով, ինչպես նաև կապիտալիստական ձեռնարկությունում արտադրված պատրաստի սպրանքների ձևով: Կապիտալը շարունակ փոխում է իր նյութական ձևը: Բայց ինչ ձևով էլ հասնողիս գու, նրա էությունը անփոփոխ է մնում. կապիտալը միշտ արտահայտում է շահագործման, իր տիրոջ կողմից վարձու բանվորների հովելյալ աշխատանքի յուրացման հարաբերությունները:

Քվե փողը, ոչ արտադրության միջոցները, ոչ կենսական բարիքները ինքնբուրժուական կապիտալ չեն: Այսպես, բանվորի աշխատավարձը և

1) K. Маркс, Капитал, т. 1, 1954, էջ 181:

2) K. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 25, ч. II, стр. 380—381.

երա կողմից ձեռք բերվող կենսական բարեքնները կապիտալ չեն: Աշխատակարար բանվորը օգտագործում է իր կենսագործունեությունը պահպանելու համար անհրաժեշտ նյութական բարիքներ գնելու նպատակով: Կենսական բարիքները անմիջականորեն սպառվում են բանվորի ու նրա ընտանիքի կողմից: Կապիտալ չեն նաև մասը արտադրողների արտադրամիջոցները և նրանց աշխատանքի արգելանքները: Փողը, արտադրամիջոցները, կենսական բարիքները կապիտալ են փոխարկվում միայն այն դեպքում, երբ դրանք գործադրվում են հավելյալ արժեքի ստանալու համար, երբ դրանք օգտագործում են որպես շահագործման միջոց:

Բուրժուական տնտեսագետները կապիտալը բնորոշելիս ամբլայնում են նրա սոցիալական, դասակարգային էությունը, կապիտալը նույնացնում են փողի կամ արտադրամիջոցների՝ որպես ամեն տեսակ արտադրության նյութական գործոնների հետ: Այսպես, XIX դ. առաջին կեսի ֆրանսիացի վուլգար տնտեսագետ Յ. Բաստիան գրել է. «Բորժիքներ, նյութի, պաշարների՝ ահա թե ինչը Ռորինգոնը, անկասկած, կհամարի իր կապիտալը... Այժմ դիտարկենք հասարակական կարգի կենտրոնը: Կապիտալը այստեղ նույնպես կազմված է աշխատանքի գործիքներից, նյութից և պաշարներից, առանց որոնց ոչ որ՝ ոչ մենակ, ոչ հասարակության մեջ չի կարող ձևանալիս որևէ տեղական աշխատանք: Ամերիկյան ժամանակակից տնտեսագետ Պ. Սամուելսոնը իր «Էկոնոմիկա» դասագրքում կապիտալը դիտում է ընդամենը միայն որպես «սարատագրության միջնորդող գործոն», այսինքն՝ որպես «հենց տնտեսական սխեմանով արտադրվող կապիտալին բարիքներ»: Ամերիկյան մի ուրիշ տնտեսագետ՝ Դ. Դյուլին կապիտալի կազմի մեջ մտցնում է ամեն բան, ինչը օգտակար դեր է խաղում արտադրության մեջ: Նրա մեկնաբանության համաձայն կապիտալ են հանդիսանում արտադրամիջոցները, հողը, օգտակար հանածոները, սպանան անարկաները, աշխատուժը, Գյուին հնարավոր է ճամբարում, որ կապիտալի մեջ նույնպիսի մտցրվի գործանություններում ցուցաբերվող անձնական ազնվությունը:

Այսպիսով, բուրժուական տնտեսագետները կապիտալը դիտում են որպես հավիտենական, պատմականությունից դուրս կատարողի, բանի որ իբրև, արտադրության միջոցների ամեն մի հասարակության մեջ պոչություն ունեն անկախ նրա ձևից: Կապիտալի նատուրալիստական մեկնաբանումը զրկում է նրան սոցիալական բովանդակությունից: «Բուրժուական փիլիսոփաների ամենարժեքը զինն է այդ,— գրել է Գ. Ի. Լենինը.— բուրժուական ուժիմի կատեգորիաներն ընդունել իբրև հավիտենական ու բնական կատեգորիաներ. ուստի նրանք կապիտալի համար էլ վերցնում են այնպիսի սահմանումներ, ինչպես, օրինակ, արտադրության շարունակությունը ժառանգող կուտակված աշխատանք, այսինքն՝ սահմանում են այն իբրև մարդկային հասարակության համար

հավիտենական մի կատեգորիա, այսպիսով կոծկելով այն առանձնահատուկ, պատմականորեն որոշ տնտեսական ֆորմացիան, երբ ապրանքային տնտեսության կազմակերպած այս «կուտակված աշխատանք» ընկնում է նրա ձեռքը, ով չի աշխատել, և միջոց է ծառայում ուրիշ աշխատանքի շահագործման»:

Փամանակակից բուրժուական տնտեսագետները փորձում են կապիտալի նատուրալիստական բնորոշումը օգտագործել միտակու համար այն սարբերությունները, որ գոյություն ունեն երկու հակադիր սոցիալատնտեսական սխեմաների՝ կապիտալիզմի և սոցիալիզմի միջև, որովհետև և՛ կապիտալիստական հասարակության մեջ, և՛ սոցիալիստական հասարակության մեջ նյութական բարիքներ ստեղծվում համար անհրաժեշտ են արտադրամիջոցները: Բայց, ինչպես դեռ Սարգսն է ցույց տվել, արտադրամիջոցները, լինելով աշխատանքի ամեն մի պրոցեսի նյութական գործոնը, միմիայն բուրժուական հասարակության պայմաններում է, որ փոխարկվում են կապիտալի, վարձու բանվորների հավելյալ աշխատանքի յուրաքանչյուր գործիքի:

Հաստատուն և փոփոխություն, իր կապիտալը (որ սկզբնապես հանդես է գալիս փողի ձևով) գործնում է աշխատանքի պրոցեսի գործոն՝ արտադրության միջոցների և աշխատում: Այդպիսով, կապիտալիստի ձեռք բերած արտադրամիջոցները և աշխատումը սկզբնական կապիտալ արժեքի գոյության լոկ ուրիշ ձևն են:

Արտադրամիջոցների և աշխատումը հանդիսանում են աշխատանքի պրոցեսի արարիչ գործոնները, ուստի և միասնակ դեր չեն կատարում արգյունի արժեքի գոյացման գործում: Աշխատանքի պրոցեսում աշխատումը սպառում է արտադրամիջոցները և ստեղծում նոր արգյունը: Օրինակ, օգտագործելով մանածահաստացը և բամբակը, բամբուրը արտադրում է նոր սպառողական արժեք՝ մանվածք: Արտադրամիջոցները հանդես են գալիս որպես նոր արգյունի, նոր սպառողական արժեքի արտադրության պրոցեսի անհրաժեշտ տարր: Արտադրության պրոցեսում բանվորը աշխատանքի անարկային ավելացնում է նոր արժեք: Իսկ արտադրամիջոցների արժեքը աշխատանքի պրոցեսում պահպանվում, պատրաստի արգյունքին է անցնում: Դա կատարվում է այն պատճառով, որ արտադրամիջոցների օպատողական արժեքը ծախսվում է ուրիշ սպառողական արժեքներ տրտադրելու համար: Օրինակ, բամբակի վեճաձևվման պրոցեսում նրա սպառողական արժեքը անհետանում է և գոյանում է մանվածքի սպառողական արժեքը: Այդ պատճառով բամբակի արժեքը պահպանվում է մանվածքի սպառողական արժեքում:

1 Վ. Ի. Լենին, Երկր, հ. 1, էջ 261:

Այսպիսով, արտադրամիջոցները, կորցնելով իրենց սպառողական արժեքի նախնական անը, պահպանում են իրենց արժեքը, որը փոխանցվում է նոր արդյունքին: Իհարկե, նոր արդյունքին կարող է փոխանցվել արտադրամիջոցների միայն այն արժեքը, որ ունեն իրենք:

Նախկին արժեքի պահպանումը, այսինքն՝ արտադրամիջոցների արժեքի փոխանցումը նոր արդյունքին, իրագործվում է բանվորի կողմից աշխատանքի առարկային նոր արժեքի միացման հետ միաժամանակ: Արտադրության այդ երկակի արդյունքին՝ հին արժեքի փոխանցմանը և նոր արժեքի ստեղծմանը, բանվորը հասնում է հենց իր աշխատանքի կրկնակի բնույթի շնորհիվ: Միևնույն ժամանակ նա իր կոնկրետ աշխատանքով ստեղծում է սպառողական արժեք և նրա վրա փոխանցում արտադրամիջոցներին արժեքը, իսկ արտարակ աշխատանքով ստեղծում է նոր արժեք, միացնելով դա նախկին արժեքին:

Միանակաճ աշխատանքային պրոցեսի երկու կողմերի—նախկին արժեքի փոխանցման և նորի ստեղծման—միջև տարբերությունը ակնառու կերպով դրսևորվում է աշխատանքի արտադրողականության ամձան գնալում: Ենթադրենք, որ բանվորի աշխատանքի արտադրողականությունը անել է 2 անգամ, որի հետևանքով նա նույն ժամանակամիջոցում արտադրել է 2 անգամ ավելի արդյունքներ, քան առաջ և կրկնակի ավելի հումք է մշակել, ուստի և կրկնակի ավելի է փոխանցել հին արժեքը: Բայց նոր արժեքի մեծությունը (ամբողջ արտադրանքի մասապի), որ նա ստեղծել է նույն նախկին ժամանակաբնիվացքում, չի փոխվել, և այդ պատճառով արտադրանքի յուրաքանչյուր միավորին այժմ նոր արժեք է միացել 2 անգամ քիչ: Հետևապես, ինչպես էլ փոխվի աշխատանքի արտադրողականությունը, միևնույն աշխատանքը հավասար ժամանակամիջոցում ստեղծում է հավասար արժեքներ: Դրա հետ միասին արտադրողականության փոփոխման կապակցությամբ միևնույն աշխատանքը հավասար ժամանակամիջոցում արդյունքին է փոխանցում իր մեծությունը տարբեր արժեքներ:

Վարձու բանվորի աշխատանքով ստեղծվող նոր արժեքը պարունակում է նրա աշխատուժի արժեքի համարժեքը և հավելյալ արժեքը: Բանվորը չի փոխանցում, այլ արտադրում է իր աշխատուժի արժեքի համարժեքը: Աշխատանքի պրոցեսում օգտագործվում է աշխատուժի ոչ թե արժեքը, այլ սպառողական արժեքը: Աշխատուժի գնելու համար կապիտալիստի ավանսավորած փողը բանվորը ծախսում է իր համար անհրաժեշտ կենսամիջոցներ ձեռք բերելու վրա: Արտադրելով իր աշխատուժի արժեքի համարժեքը, բանվորը զրանով պայման է ստեղծում իր զոյության համար:

Կապիտալի այն մասը, որը փոխարկվում է արտադրամիջոցների և աշխատանքի պրոցեսում չի փոփոխում իր արժեքի մեծությունը, 4. Մարքսը անվանել է նստատուն կապիտալ:

Կապիտալի այն մասը, որը փոխարկվում է աշխատուժի և արտադրության պրոցեսում փոփոխում է իր արժեքը (քանի որ աշխատուժի վերաբարձրում է իր արժեքի համարժեքը և զրանից բացի հավելյալ արժեք է ստեղծում), 4. Մարքսը անվանել է փոփոխուն կապիտալ:¹ Աշխատանքի պրոցեսի տեսակետից կապիտալի բաղկացուցիչ մասերը զանազանվում են որպես օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, որպես արտադրամիջոցներ ու աշխատուժ, իսկ արժեքի մեծացման պրոցեսի տեսակետից դրանք զանազանվում են որպես հաստատուն և փոփոխուն կապիտալ: Հաստատուն կապիտալի, այսինքն՝ արտադրությանում սպառված արտադրամիջոցների արժեքը միայն նորից արտահայտվում է պատրաստի արդյունքի մեջ: Փոփոխուն կապիտալի արժեքը, որը հավասար է կապիտալիստի կողմից գնված աշխատուժի արժեքին, ծախսվում է սկզբնապես ավանսավորված արժեքի մեծացման նպատակով: Աշխատանքի պրոցեսում բանվորը արտադրում է փոփոխուն կապիտալի մեծությունը հավասար արժեք և հավելյալ արժեք: Հավելյալ արժեքը, որնե՛ն, միայն փոփոխուն կապիտալի հավելանձն է՝ նոր քանակությամբ արժեքի մեծությունը կարող է արտահայտվել $W + m$ ֆորմուլայով, որտեղ W -ն՝ աշխատուժի վերաբարձրված արժեքն է, իսկ m -ն՝ հավելյալ արժեքը:

Այսպիսով, կապիտալիստական ձեռնարկություններում ստեղծվող արժեքների արժեքի ֆորմուլան (W) ունի հետևյալ ձևը՝ $W = C + W + m$, Այդ արժեքը արտադրում է բուրժուական հասարակության արտադրական հարաբերությունները: Վարձու բանվորների շահագործումը կապիտալիստների կողմից:

1/6 Հավելյալ արժեքի արժեքն և նստանձն Կապիտալիստի կողմից յուրացվող հավելյալ արժեքի մասան հավելյալ արժեքի քայքայման մեծությունն է: Հավելյալ արժեքի հարաբերական մեծությունը, կամ փոփոխուն կապիտալի ամձան աստիճանը որոշվում է փոփոխուն կապիտալի եկամտամբ հավելյալ արժեքի հարաբերությամբ ($\frac{m}{C}$): Տոկոսներով արտահայտված

¹ Հաստատուն կապիտալը 4. Մարքսը եղել է C աստով (constant բառի սկզբնառաջ, որը նշանակում է հաստատուն), փոփոխուն կապիտալը՝ v աստով (variable, որ նշանակում է փոփոխվող):

այդ հարաբերությունը Կ. Մարքսը անվանել է հավելյալ արժեքի նորմա և նշանակել m' նիշով:

Փոփոխուն կապիտալի արժեքը հավասար է կապիտալիստի կողմից գնված աշխատուժի արժեքին, իսկ վերջինիս արժեքը որոշում է բանվորի անհրաժեշտ աշխատանքի չափերը: Այլ կերպ ասած, փոփոխուն կապիտալը վերարտադրվում է անհրաժեշտ աշխատանքային ժամանակի ընթացքում բանվորի անհրաժեշտ աշխատանքով: Հավելյալ արժեքը ստեղծվում է հավելյալ ժամանակում բանվորի հավելյալ աշխատանքով: Ուստի հավելյալ արժեքը հարաբերվում է փոփոխուն կապիտալին, ինչպես հավելյալ աշխատանքը՝ անհրաժեշտ աշխատանքին, կամ՝

$$m' = \left(\frac{m}{v} \right) = \frac{\text{հավելյալ աշխատանք}}{\text{անհրաժեշտ աշխատանք}}$$

Առաջին դեպքում $\left(\frac{m}{v} \right)$ հավելյալ արժեքի նորման արտահայտվում է առարկայացված աշխատանքի ձևով, երկրորդ դեպքում $\left(\frac{\text{հավելյալ աշխատանք}}{\text{անհրաժեշտ աշխատանք}} \right)$ հոտուն աշխատանքի ձևով: Հավելյալ աշխատանքի հարաբերությունը անհրաժեշտ աշխատանքին $\left(\frac{\text{հավելյալ աշխատանք}}{\text{անհրաժեշտ աշխատանք}} \right)$ արտահայտվում է արտադրամիջոցների սեփականատիրոջ կողմից արտադրողի շահագործման աստիճանը ամեն մի հավանարտ հասարակության մեջ, իսկ փոփոխուն կապիտալի նկատմամբ հավելյալ արժեքի հարաբերությունը $\left(\frac{m}{v} \right)$ կապիտալիստների կողմից վարձու բանվորներին շահագործման աստիճանի արտահայտման օպերիֆիկ ձևն է: Ե... Հավելյալ արժեքի նորման, — գրել է Մարքսը, — կապիտալի կողմից՝ աշխատուժի կամ կապիտալիստի կողմից՝ բանվորի շահագործման աստիճանի ճշգրիտ արտահայտությունն է՝:

Հավելյալ արժեքի նորման ցույց է տալիս, քն նոր ստեղծված արժեքը $(v+m)$ ինչպես է բաշխվում կապիտալիստի և վարձու բանվորի

միջև, այլև աշխատանքային օրվա որ մասն է բանվորը աշխատում իր համար և որը՝ կապիտալիստի համար: Եթե բանվորը աշխատանքային օրվա կեսը աշխատում է իր համար, իսկ կեսը՝ կապիտալիստի համար, շահագործման աստիճանը հավասար կլինի 100% -ի:

Վ. Բ. Անկեր Ժնևիցիների վաստակներ և կապիտալիստների շահույթը Ռուսաստանում իր հոգվածում բերել է սվյալներ, որոնք քնորոշում են մինչև 1840-ական թվականներին Ռուսաստանում բանվորների շահագործման աստիճանը: Վ. Բ. Անկերը ցույց է տվել, որ բանվորը ստեղծում էր տարեկան 498 ուրյու նոր արժեքներ: Այդ զամարից 246 ու կապիտալիստը ստանալ էր բանվորին որպես աշխատավարձ, իսկ 252 ուրյու կազմում էին կապիտալիստը շահույթը: Համեմատելով բանվորի վաստակը և կապիտալիստի շահույթը, Վ. Բ. Անկերը նշում էր, որ բանվորը իր համար աշխատում էր օրվա կեսից օրվա մեծ մասը՝ կապիտալիստի համար: Բանվորների շահագործման աստիճանը նախահարաբերված Ռուսաստանում, այդպիսով, անցնում էր 100% -ից:

Աշխատուժի սվյալ արժեքի դեպքում հավելյալ արժեքի նորման ընդորոշում է առանձին բանվորի կողմից արտադրվող հավելյալ արժեքի մասանուն Որքան սվյալի բարձր է շահագործման աստիճանը, այնքան սվյալի է վիճում հավելյալ արժեքի մասանուն: Ետնագործման աստիճանից հավելյալ արժեքի մասանունի կախվածությունը արտացոլում է $m' = \frac{m}{v} \cdot 100\%$ ֆորմուլան: Այստեղից՝ $m = v \cdot m'$: Հետևապես, հավելյալ արժեքի մասանուն հավասար է սվանսավորված փոփոխուն կապիտալի մեծությանը, բարձրագույնում հավելյալ արժեքի նորման:

Կապիտալիզմի զարգացման համընթաց հավելյալ արժեքի նորման բարձրանում է, 9-ս նշանակում է, որ բանվորների շահագործումը ուժեղանում է: Այսպես, ԱՄՆ-ի վերամշակող արդյունաբերությունում հավելյալ արժեքի նորման 1909 թվականին հավասար էր 12% -ի, 1929 թ. այն կազմում էր 158—188%, 1953 թ.՝ 240%, իսկ 1966 թ.՝ 314%:

Բանվորների շահագործման աստիճանի աճը զրայմանավորված է կապիտալիստների կողմից հավելյալ արժեքի յուրացման անհարգող ծարավով, նաև նրանց միջև մղվող մրցակցային արտոլ: Հավելյալ արժեքի նորմայի բարձրացմանը կապիտալիստները հասնում են երկու ուղիով՝ բացարձակ հավելյալ արժեքի արտադրությունը և հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը:

77 § 5. Բանվոր դասակարգի շահագործման աստիճանի բարձրացման երկու եղանակը


Բացարձակ հավելյալ արժեքը Ետնագործման աստիճանի բարձրացման ու հավելյալ արժեքի մասանունի մեծացման եղանակներից մեկը աշխատանքա-

1 Կ. Մարքս, Կապիտալ, Գ. 3, 1954, էջ 329:


յին օրվա երկարացումն է: Քնշված հայտնի է, կապիտալիզմի ժամանակ աշխատանքային օրը իրենից ներկայացնում է անհրաժեշտ և հավելյալ աշխատանքային ժամանակի կամ, այլ խոսքով, ժամանակահատվածների գումարը, որոնց բնիվացումը բանվորը վերաբաղարում է իր աշխատուժի արժեքի համարժեքը և ստեղծում հավելյալ արժեք:

Աշխատանքի օրվա այն մասը, որի ընթացքում վերաբաղարվում է աշխատուժի արժեքի համարժեքը, արտադրության ավյալ պայմաններում և հասարակության անսեռական զարգացման ավյալ աստիճանում հանդիսանում է հաստատուն մեծություն: Եթե անհրաժեշտ աշխատանքային ժամանակը արված է, ապա հավելյալ ժամանակը և, ուրեմն, հավելյալ արժեքի նորման կախված են անհրաժեշտ աշխատա-
 ժամանակի սահմաններից զուրա աշխատանքային օրվա երկարացման շափարից:

Ենթադրենք աշխատանքային օրը հավասար է 10 ժամի, որոնցից 5 ժամը կազմում են անհրաժեշտ աշխատաժամանակը և 5 ժամը՝ հավելյալ ժամանակը: Աշխատանքային օրը պատկերենք որպես մի գիծ, օրի վրա յուրաքանչյուր բաժանում կհամապատասխանի մեկ ժամի:



Եթե աշխատանքային օրը աշխատուժի անփոփոխ արժեքի դեպքում ավելանա 10-ից մինչև 12 ժամ, ապա հավելյալ ժամանակը կաճի 5-ից մինչև 7 ժամ: Այս դեպքում աշխատանքային օրը կարելի է ներկայացնել այսպես.



Որչափ որ աճում է հավելյալ ժամանակը, այնչափ էլ մեծանում է շահագործման աստիճանը և աճում է հավելյալ արժեքի մասսան: Աշխատանքային օրը 10 ժամ սեկելու դեպքում շահագործման աստիճանը

$$\left(\frac{5 \text{ ժամ}}{5 \text{ ժամ}} \times 100 \right) \text{ կազմում է } 100\%, \text{ իսկ } 12 \text{ ժամյա աշխատանքային}$$

$$\text{օրվա դեպքում } \left(\frac{7 \text{ ժամ}}{5 \text{ ժամ}} \times 100 \right) 140\%:$$

Աշխատանքային օրվա բացարձակ երկարացմամբ ստացվող հավելյալ արժեքը 4. Մարքսը անվանել է բացարձակ հավելյալ արժեք: Աշխատանքային օրվա երկարացում այն սահմաններից զուրա, որոնց շրջանակներում բանվորն ի վիճակի կլինի միայն իր աշխատուժի արժեքի համարժեքն արտադրելու, — որք է նա, — և տվյալ հավելյալ աշխատանքի յուրացում կապիտալի կողմից, — աճա ինչ է բացարձակ հավելյալ աշխատանքի արտադրությունը:

Բացարձակ հավելյալ արժեքի արտադրությունը կազմում է կապիտալիստական շահագործման համընդհանուր հիմքը, բայց դա գերակշռում էր կապիտալիզմի զարգացման վաղ էտապներում՝ մինչև խոշոր մեքենայական արտադրության հաղթանակը: Բացարձակ հավելյալ արժեքի արտադրության համար կապիտալը օրտագործել է աշխատանքի պրոցեսի պատմականորեն ժառանգված ձևը և լուկ ավելացրել է նրա սևողությունը:

Աշխատանքային օրվա երկարացումը առնչվում է իր սահմանների նեւա: Աշխատանքային օրը ունի իր սահմանները, որոնց շրջանակներում էլ հնց կարող է փոփոխվել: Բայց նրա մինիմալ սահմանները չեն կարող որոշվել: Ընշտ է, հիմն ենթադրվի, որ հավելյալ ժամանակը գրոյի է հավասար, ապա այդ դեպքում կարելի է ստանալ աշխատանքային օրվա մինիմալ սահմանը: Գա այս դեպքում կորոշվի աշխատանքային օրվա այն մասով, որի ընթացքում բանվորը պետք է աշխատի իր գոյությունը պահպանելու համար: Բայց աշխատանքային օրվա մեծությունը չի կարող որոշվել միայն անհրաժեշտ աշխատաժամանակով, որի ընթացքում վերաբաղարվում է աշխատուժի արժեքի համարժեքը, քանի որ կապիտալիզմի գոյությունը հնարավոր չէ առանց հավելյալ աշխատանքի, առանց հավելյալ արժեքի արտադրման և յուրացման:

Միևեույն ժամանակ աշխատանքային օրը ունի սուսփելագույն սահման: Գա որոշվում է երկակի: Առաջինը, աշխատուժի ֆիզիկական

1 Կ. Մարքս, Կապիտալ, Է. 1, 1954, էջ 532:

սահմանով, Մարդը կարող է օրվա ընթացքում ծախսել կենսական էներգիայի միայն որոշ մասը: Նա պետք է ժամանակ ունենա հանգստի և ֆիզիկական այլ պահանջումներն ընդհատելու համար, որպեսզի վերականգնի ծախսված կենսական ուժը, Գրանտվ է որոշվում աշխատանքային օրվա ֆիզիկական սահմանը:

Երկրորդ, աշխատանքային օրվա առավելագույն ակտիվությունը սահմանափակվում է սոցիալական բնույթի սահմաններով: Անհրաժեշտ է, որ բանվորը ժամանակ ունենա ոչ միայն հանգստի և ֆիզիկական մշտապես պահանջումները բավարարելու համար, նրան ժամանակ է պետք նաև մտավոր, սոցիալական պահանջումները բավարարելու համար: Բանվորի այդ պահանջումներն են բավարարման ծավալն ու եղանակները կախված են երկրի զարգացման մակարդակից, կուլտուրայի ընդհանուր իրավիճակից, բանվորի դասակարգի կազմավորման պատմական պայմաններից: Ուրեմն, աշխատանքային օրը ունի նաև սոցիալական սահման: Այն փոփոխությունները, որոնց ենթակա է աշխատանքային օրը, կատարվում են նրա ֆիզիկական և սոցիոլոգիական սահմանների միջև:

Հավելյալ աշխատանքի նկատմամբ դալիի ազահոթմամբ կապիտալը ձգտում է խախտել աշխատանքային օրվա ինչպես սոցիալական, բարոյական, այնպես էլ զուտ ֆիզիկական սահմանները: Իսկ բանվորը շահագործված է, որ աշխատանքային օրը սահմանափակվի որոշ նորմով մեծությամբ: Բանվոր դասակարգի և կապիտալիստների զստակարգի միջև պայքար է մղվում աշխատանքային օրվա մեծությամբ համար: Ուժերի հարարերակցությունը այդ պայքարում ազդում է աշխատանքային օրվա սեղողության վրա: Կապիտալիստական երկրներում ներկայումս զբաղվելու ունեցող աշխատանքային օրը կապիտալիստների և բանվորների միջև բազմազարդյան զստակարգային պայքարի արդյունքն է:

Կապիտալիզմի զարգացման սկզբնական (տասներորդ (XIV) դ. մինչև XVIII դ. կեսը) քայրժամային լայնորեն օրացողում էր պետական իշխանությունը օրենսդրական կարգով շատ երկարաժամ աշխատանքային օր սահմանելու համար: Աշխատանքային օրը այն ժամանակ կազմում էր 16—18 ժամ:

Խոչոր Ֆենեանյական արտադրության հաղթանակի շնորհիվ աշխատանքային օրը երկարացնելու վերաբերյալ պետական օրենքների անհրաժեշտությունը վերացավ: Մեքենաների լայն կիրառումը ուղեկցվում էր արտադրության մեջ առաջներում զբաղված բանվորների մի ժտախ ազատմանը: Արագացավ նաև մանր արտադրողների՝ գյուղացիների ու արհեստավորների, քայքայման պրոցեսը: Այդ պատճառով արագորեն աճում էր այն անձանց թիվը, որոնք հարկազրկված էին ծա-

խել իրենց աշխատանքը: Առաջացավ աշխատուժի ավելցուկ: Այդ պայմաններում բուրժուազիան օգտագործում էր անտեսական մեթոդները՝ երկարատև աշխատանքային օր հաստատելու համար:

Բանվոր դասակարգի կազմակերպվածության, նրա համախմբվածության աճի, քաղաքացիական դիմադրության բարձրացման շնորհիվ ծավալվում էր պրոլետարիատի ակտիվ պայքարը աշխատանքային օրը կրճատելու համար: Այդ պայքարի արդյունքը եղավ աշխատանքային օրվա սահմանափակման վերաբերյալ օրենքի ընդունում բուրժուական կառավարությունների կողմից:

XV դարի սկզբի զարգացած երկրները մեծամասնությամբ աշխատանքային օրը տևում էր 10 ժամ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո պրոլետարիատի զստակարգային համա պայքարի շնորհիվ և Հեկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության արդյունքում կապիտալիստական զարգացած շատ երկրներում օրենսդրական կարգով սահմանվեց 8-ժամյա աշխատանքային օրը: Ներկայումս այդ երկրներից մի քանիսում զբաղվելու ունի 40-ժամյա աշխատանքային շաբաթ: Բայց օրակես 8 ժամից ավել աշխատանք երկրպետ և էլ սովորական երեւոյթ է կառոյտայի երկրներում: Աշխատանքային օրվա սեղողութանը մեծ է մանական զրոյթներում և կայտաւ երկրներում: Գրեց մեծամասնութունում աշխատանքային օրվա տեղոյթնութը օրենսդրական սահմանափակում չունի:

Աշխատանքային օրվա կրճատման համար մղվող պայքարը պրոլետարիատի զստակարգային պայքարի անբաժանելի մասն է: Մակայն այդ պայքարը կարող է առաջացնել աշխատուժի զործադրման պայմանների բարենպաստում միայն, բայց չի կարող վերացնել պրոլետարիատի կողմից իրենց աշխատուժի վաճառումը կապիտալիստներին: Միայն սոցիալիստական հեղափոխությունն է աշխատավորներիին ազատում անհն տեսակ շահագործումից և ապահովում նրանց զրոյթնյան արմատական լավացումը:

Բացարձակ հավելյալ արժեքի արտադրումը ձեռք է բերվում ոչ միայն աշխատանքային օրվա սեղողության ավելացումով: Կապիտալիստների օգտագործում են անլիստի միջոց էլ, ինչպիսին է աշխատանքի ինտենսիվության բարձրացումը: Աշխատանքի ինտենսիվությունն ուժեղացնելով նրանք ձգտում են փոխառուցել աշխատանքային օրվա սեղողության կրճատումը: Աշխատանքի ինտենսիվության աճման դեպքում բանվորը նույն ժամանակամիջոցում կյանքի ավելի շատ էներգիա է ծախսում, ուստի և սեղողում ավելի մեծ արժեք է ավելի մեծ հավելյալ արժեք:

Աշխատանքային օրվա երկարացումը, աշխատանքի ինտենսիվության բարձրացումը, արտաժամյա աշխատանքները, աշխատուժի վաճառումը եր արժեքից ցած,— այս բոլորը ծառայում են բնագործակ

Հավելյալ արժեքի արտադրությանը, բանվոր դասակարգի շահագործման աստիճանի անձանք:

Հարարերակց Շահագործման աստիճանի բարձրացման և հա-
նավելյալ արժեք վելյալ արժեքի ավելացման երկրորդ նշանակը
կապված է կապիտալիստների կողմից իրենց օգտակարգային շահերի
համար դիտարկման և տեխնիկայի նվաճումների զգալիորոժման, աշխա-
տանքի հասարակական արտադրողականության ամձան հետ: Այդ դեպ-
քում հավելյալ արժեքի աճը ձեռք է բերվում անհրաժեշտ աշխատամա-
մանակի կրճատման և հավելյալ աշխատածանակի համապատաս-
խան ավելացման հաշվին:

Ենթադրենք, որ աշխատանքային օրը առաջվա պես հավասար է
10 ժամի, որոնցից 5 ժամը կազմում են անհրաժեշտ աշխատամա-
մանակը և 5 ժամը՝ հավելյալ ժամանակը: Գրեթե անհրաժեշտ աշխա-
տամանակի կերճատվի 1 ժամով և կկազմի 4 ժամ: Այդ դեպքում
հավելյալ աշխատամանակը 1 ժամով և անհրաժեշտ ժամանակի կրճատման
հաշվին կաճի 5-ից մինչև 6 ժամ: Դրա հետևանքով կավելանա նաև հա-
վելյալ արժեքը: Անհրաժեշտ և հավելյալ ժամանակի միջև հարաբերակե-
ցության փոփոխման հետևանքով շահագործման նորման մեք օրինա-
կառ անձում է 100-ից մինչև 150%: Ավելանում է նաև հավելյալ արժեքի
մասսան:

Անհրաժեշտ աշխատամանակի կրճատման և հավելյալ աշ-
խատամանակի համապատասխան ավելացման միջոցով ստաց-
վող հավելյալ արժեքը Կ. Մարքսը անվանել է հարարերակցան հավելյալ
արժեք: Հարարերակցան հավելյալ արժեքի արտադրությունը տեղի կու-
նենա նաև աշխատանքի օրվա կրճատման դեպքում: Այն պահի, երբ ամ-
բողջությանը վերցրած աշխատանքային օրվա ընդհանուր տևողու-
թյունը:

Իսկ ինչ կերպ կարելի է հասնել անհրաժեշտ աշխատամանակ-
կի կրճատմանը և հավելյալ աշխատամանակի համապատասխան
ավելացմանը: Անհրաժեշտ աշխատամանակը կրճատվում է աշ-
խատուժի արժեքի փոքրացման հետևանքով: Իր հերթին, աշխատուժի
արժեքի իջնումը ապահովվում է բանվորների զոյության միջոցների
էժանացումով: Իսկ կենսամիջոցների էժանացումը պայմանավոր-
վում է աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ այն ճյու-
ղերում, որտեղ ստեղծվում են բանվորների սպառման առարկաներ, և
այն ճյուղերում, որտեղ այդ սպառման առարկաները ստեղծելու համար
թողարկում են արտադրամիջոցներ: Այդպիսով, աշխատանքի արտա-
դրողականության աճին համընթաց նվազում է անհրաժեշտ աշխատա-
ծամանակը և ավելանում հավելյալ աշխատամանակը: Աշխատուժ

ապրանքի արժեքի իջնումը տանում է դեպի կապիտալիստների դաս-
կարգի կողմից անհատույց կերպով յուրացվող հավելյալ արժեքի ար-
տադրության մեծացում:

Ավելցուկային նոր տեխնիկայի, արտադրության առավել կա-
նախալից արժեք արտադրողականության մեթոդների կիրառման շնորհիվ
ստանձին ձեռնարկություններում աշխատանքի անհատական արտադրո-
ղականությունը գերազանցում է նրա հասարակական մակարդակը և
կապիտալիստների՝ այդ ձեռնարկությունների տերերի, համար ապահո-
վում ավելցուկային հավելյալ արժեքը:

Ենթադրենք, թե աշխատանքի արտադրողականության հասարակա-
կան մակարդակի դեպքում բանվորը 10-ժամյա աշխատանքային օրվա
ընթացքում պատրաստում է 10 միավոր ապրանք: Ընդունենք, որ յու-
րազանքում միավոր ապրանքի վրա զործադրված արտադրամիջոցների
արժեքը 1 դրար է: Վերանշահման ժամանակի դրան նոր միացված ար-
ժեքը եռույնյակ հավասար է 1 դրարի: Այդ դեպքում ապրանքի միա-
վոր արժեքը կկազմի 2 դրար: Ընդունենք, այնուհետև, որ կապիտա-
լիստին հաջողվել է իր ձեռնարկությունում աշխատանքի արտադրող-
ականությունը կրկնապատկել: Այժմ արժեքը 10-ժամյա աշխատանքա-
յին օրվա ընթացքում պատրաստում է ոչ թե 10, այլ 20 միավոր ապ-
րանք: Հետևապես, արտադրամիջոցների արժեքի անփոփոխ լինելու
դեպքում ապրանքի միավորի արժեքը կիջնի մինչև 1,5 դր., քանի որ
արտադրամիջոցներից փոխանցված արժեքը առաջվա պես հավասար
կլինի 1 դրարի, իսկ նոր միացված արժեքը կկազմի 0,5 դրար:

Թեև աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է 2 ան-
գամ, այնուամենայնիվ միևնույն ժամանակամիջոցում բանվորն ստեղ-
ծում է եռույնյակի նոր արժեք, ինչպիսին առաջ էր՝ 10 դրարի հակա-
սար: Միայն հիմա այդ արժեքը բաշխվում է ավելի մեծ քանակությամբ
արտադրված արդյունքների՝ 20 միավորի վրա: Այդ պատճառով ամեն
մի միավորի ընկնում է նոր արժեքի արդեն ոչ թե 1/10 մասը, այլ 1/30
մասը: Առաջներում ապրանքի միավորի արտադրման վրա բանվորը
ծախսում էր 1 ժամ, իսկ աշխատանքի արտադրողականությունը բարձ-
րանալուց հետո նա սկսեց ծախսել զրա վրա միայն 30 րոպե: Այդ պատ-
ճառով ապրանքի միավորի անհատական արժեքը հասարակական ար-
ժեքի համեմատությամբ իջել է: Այնինչ կապիտալիստը ապրանքը ձա-
խելու է հասարակական արժեքով: Ապրանքը ծախելով հասարակական
արժեքով, նա իրացնելու է ավելցուկային հավելյալ արժեքը, որը հա-
վանում է 0,5 դրար:

Ավելցուկային հավելյալ արժեք ստանում են այն կապիտալիստնե-
րը, որոնք իրենց ձեռնարկություններում կիրառում են նոր տեխնիկա և
արտադրության առավել կատարելագործված մեթոդներ: Բարձր ար-

տարողական աշխատանքով ստեղծված ապրանքի տերը առավելու-
թյուններ ունի մրցակիցներին հետ իր պայքարում: Եւ կարող է իր ապ-
րանքները իրացնել հասարակական արժեքից ցած արժեքով և մինեւոյն
ժամանակ կորզել ավելցուկային հավելյալ արժեք:

Աշխատանքի անհատական արտադրողականութեան բարձրացումը
և ապրանքի անհատական արժեքի իջեցումը կարող են տեղի ունենալ
ամեն տեսակ ապրանքի ստեղծման պրոցեսում: Այդ է պատճառը, որ
ավելցուկային հավելյալ արժեքի արտադրումը և յուրացումը չի կապ-
ված աշխատուժի արժեքի իջեցման հետ: Բայց ավելցուկային հավելյալ
արժեքի արտադրութունը ձեռք է բերվում անհրաժեշտ աշխատածա-
մանկի փոքրացումով և համապատասխանաբար հավելյալ ժամանակի
մեծացումով:

Ենթադրենք մեր օրինակում անհրաժեշտ աշխատածաժանակը
կազմում է 5 ժամ, իսկ նրա փողային արտահանութունը՝ 5 դրար: Բարձր
արտադրողական աշխատանքով պարտադրված 20 միավոր ապ-
րանքի հասարակական արժեքով իրացման դեպքում կապիտալիստը կըս-
տանա 40 դրար: Այդ դումարից 20 դրարը փոխհատուցում է այդ
ապրանքները պատրաստելիս սպառված արտադրամիջոցների արժեքը:
Մյուս 40 դրարը 10-ժամյա աշխատանքային օրվա ընթացքում նոր
ստեղծված արժեքի փողային արտահանութունն է: Այդ 20 դրարից
բանվորին արվելու են 5 դր.: (Նրա աշխատուժի օրվա արժեքի համար-
ժեքը), իսկ 15 դրարը կապիտալիստը կյուրացնի անհատույց: Հետևա-
պես, շահագործման աստիճանը կազմի 100%-ից մինչև 300%: Աշխա-
տանքի անհատական արտադրողականութեան՝ բարձրացման դեպքում
մեր օրինակում բանվորը իր աշխատուժի համաժողովրդ վերադարձում է
արդեն ոչ թե 5, այլ 2,5 ժամվա ընթացքում: Իսկ հավելյալ ժամանակի
համապատասխանաբար ավելանում է մինչև 7,5 ժամ: Եւ... Արտադրու-
թեան բարելավված եղանակ կիրառող կապիտալիստը,— գրել է
Կ. Մարքսը,— հավելյալ արժեք արտադրելու համար աշխատանքային օր-
վա ավելի մեծ մասն է յուրացնում, քան արտադրութեան նույն ճյուղի
մնացած կապիտալիստները: Եւ ասանձին դեպքում նույնն է անում ինչ
որ ընդհանուր առմամբ անում է կապիտալը հարաբերական հավելյալ
արժեք արտադրելիս:

Անհրաժեշտ աշխատանքային ժամանակի փոքրացումը և համա-
պատասխանաբար հավելյալ ժամանակի, հետևապես նաև հավելյալ ար-
ժեքի մեծացումը ավելի դեպքում պայմանավորված է առավել արտա-
դրողական աշխատանքի կիրառումով: Առավել արտադրողական աշխա-
տանքը գործում է որպես բազմապատկված աշխատանք, այսինքն՝ հա-

վասար ժամանակամիջոցներում ստեղծում է ավելի մեծ հասարակական
արժեք, քան հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքը: Այսպիսով,
ավելցուկային հավելյալ արժեքի արդյուր է ծառայում այն ձեռնարկու-
թյունների բանվորների ավելի արտադրողական աշխատանքը, որտեղ
կիրառվում են նոր տեխնիկան և արտադրութեան առավել կատարե-
լագործված մեթոդները:

Սակայն ավելցուկային հավելյալ արժեքը չըսնում է հենց որ տեխ-
նիկական կատարելագործութունները դասնում են ավելի ճյուղի ձեռ-
նարկութունների մեծամասնութեան սեփականութեւնը: Որքան որ աշ-
խատանքի առավել կատարելագործված գործիքները և արտադրութեան
մեթոդները այս կամ այն ճյուղում ընդհանուր տարածում են ստանում,
ապրանքի հասարակական արժեքը իջնում է մինչև նրա անհատական
արժեքի մակարդակը: Գրա հետևանքով վերանում է տարբերութեւնը
ապրանքի հատարակական և անհատական արժեքի միջև, և զրանով իսկ
ավելցուկային հավելյալ արժեքը ստանձին կապիտալիստի կամ մի
խումբ կապիտալիստների համար: Նրբ աշխատանքի արտադրողակա-
նութեան բարձրացումը տարածվում է նաև այն ճյուղերի վրա, որոնց
ապրանքները մտնում են բանվորների անհրաժեշտ կենսամիջոցների
չըսնանկի մեջ, հավելյալ արժեքի ընդհանուր նորման սճում է:

Ավելցուկային հավելյալ արժեքը՝ կապիտալիստական հասարակու-
թեան մշակման, օրինաչափ երևույթ է: Վերանալով որոշ ձեռնարկու-
թյուններում, այն ստացնում է գոյութեւն է ունենում ուրիշ ձեռնար-
կութուններում: Ավելցուկային հավելյալ արժեքի հետեից ընկնելով, կա-
պիտալիստները նոր տեխնիկա են մտցնում և կիրառում արտադրու-
թեան առավել կատարելագործված մեթոդներ, որը ամբողջութեամբ վեր-
ցրում առանձն է ղեկի հասարակութեան արտադրողական ուժերի զար-
գացումը: Բայց, մյուս կողմից, կապիտալիստներից ամեն մեկը ձրտում է
մյուս ձեռնարկատերերից թացցնել, ժամկի տեխնիկական նորութեւնե-
րը, բանի որ սրբան ավելի տեական լինի այն ժամանակը, որի ընթաց-
քում առանձին կապիտալիստը կամ մի խումբ կապիտալիստները մո-
նոպոլիտարորեն օգտագործում են արտադրութեան նոր մեթոդները,
ներքը այնքան ավելի ժամանակ են կորզում ավելցուկային հավելյալ
արժեք: Տեխնիկական նորութեւնները թացցնել-գաղտնի դարձնելը
հանգեցնում է տեխնիկական առաջադիմութեան արգելափակման: Այդպի-
սով, կապիտալիզմի պայմաններում արտադրողական ուժերի զարգա-
ցումը հակասական, հակամարա բնույթ է կրում: Տեխնիկական առաջըն-
թացի հետևանքով բուլժոնապետան հարտաանում է և բանվոր դասակարգի
դրութեւնը՝ վատանում:

1 Կ. Մարքս, Կապիտալ, Ե. 1, 1954, էջ 336:

4. Մարքը, վերլուծելով հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը, հայտնաբերեց կապիտալիզմի կողմից աշխատանքի արտադրողականության բարձրացման երեք հիմնական պատմական ստադիա, որոնք տանում են դեպի հարաբերական հավելյալ արժեքի աճումը: 1) աշխատանքի կապիտալիստական պարզ կոպերացիա, 2) աշխատանքի բաժանումը և մանուֆակտուրա, 3) մեքենաները և խոշոր արդյունաբերությունը: Այդ երեք ստադիաները արտացոլում են արտադրության կապիտալիստական եղանակի զարգացման ու հաստատման պրոցեսը:

Պարզ կոպերացիա

Կապիտալիստական արտադրությունը սկսվում է այն պահից, երբ մի կապիտալ միասնականացնում է շատ բանվորների նախակերպի կապիտալիստական ձևնաբերությունները ծեռող առան որպես աշխատանքի կապիտալիստական պարզ կոպերացիա: Աշխատանքի կոպերացիան իրենից ենթակայացնում է աշխատանքի կապիտալիզմի այնպիսի մե սորի մասնանակ արտադրության միևնույն պրոցեսում կամ արտադրության տարբեր բայց իրար հետ կապված պրոցեսներում կողք-կողքի ու միմյանց հետ փոխզբոժանվումը պլանայինպոնեն աշխատում են շատ անկնիքեր: Աշխատանքի կոպերացիան հայտնի է եղել դեռ ստրկատիրական և ֆեոդալական հասարակություններում, բայց անտեղ դա կանոնավոր չէր կիրառվում: Բուրժուական հասարակության մեջ աշխատանքի կոպերացիան միանեղ աշխատանքի իշխող ձևը դարձավ և համապատասխան օտքիչ-տնտեսական բովանդակությունը ստացավ:

Նյութական բովանդակության տեսակետից աշխատանքի պրոցեսը կապիտալիստական կոպերացիայում արհեստավորական ու գյուղապիական տնտեսությունների աշխատանքի պրոցեսից տարբերվում էր միայն նրա շահերի բնագրանումով, միաժամանակ գործազրկող աշխատանքի մաստալով, արտադրամիջոցների համակենտրոնացման աստիճանով և քաղաքակրթ արտադրանքի ծավալով: Աշխատանքի կապիտալիստական կոպերացիան մասշտաբները որոշվում էին անհատական կապիտալիստների շահերով:

Սոցիալ-տնտեսական բովանդակության տեսակետից աշխատանքի կապիտալիստական կոպերացիան բնութագրվում է երանով, որ այն հիմնվում է զարժու բանվորների աշխատանքի կիրառման վրա, արտադրությունը նրանում իրագործվում է կապիտալիստի հսկողությամբ և հավելյալ արժեք ստանալու համար աշխատանքի արդյունքը յուրացնում է կապիտալիստը:

Կապիտալիստի հրամանատարության սակ շատ բանվորների պարզ միավորումն արդեն պայմանավորեց որակական փոփոխություններ աշխատանքի պրոցեսում, ապահովեց նրա առավելությունները արհեստավորների ու գյուղացիների անհատական աշխատանքի հանդեպ: Շատ բանվորների միասեղ գործունեությունը հասցրեց նրանց աշխատանքի անհատական ստրկերությունների փոխադարձ վերացմանը, իսկ յուրաքանչյուրի անհատական աշխատանքը հանդես եկավ որպես ամբողջական աշխատանքի մասնիկ, որպես միջին հասարակական աշխատանք: Միատեղ աշխատանքի պրոցեսում ծագում էր մրցակցություն՝ յուրաքանակ մրցություն բանվորների միջև, որի շնորհիվ աճում էր առանձին բանվորների անհատական աշխատանքի արտադրողականությունը: Աշխատանքի կոպերացիան առաջացրեց աշխատանքի նոր արտադրողական ուժ՝ համատեղ աշխատանքի արտադրողական ուժ, աշխատանքի կոպերացիա, որի գործազրման բուրժուազաները պատկանում են կապիտալիստին:

Աշխատանքի կոպերացումը պայմանավորում է արտադրության միջոցների մի մասի՝ արտադրական շենքերի, հումքի ու պատրաստի ապրանքների պահեստների, գործիքների և այլն միատեղ պատումը, որ իրենցում է դրանց արժեքը թողարկվող արտադրանքի միավորի հաշվով: Այսպես, 20 մարդը համար մի շինության կառուցման, զրտ ստանալով և ու շինության համար այլեի բիւ միջոցներ են պահանջվում, քան յուրաքանչյուր աշխատողի համար 20 առանձին արհեստանոցների կառուցման համար: Ընդ որում պետք է հաշվի առնել, որ արտադրության կենտրոնացված միջոցների արժեքը աճում է արտադրանքի թողարկմանը ոչ-համամասնական չափով:

Կապիտալիստական երկրների տիրապետող շրջանները փորձում են բանվորներին համոզել այն բանում, որ, ինչպես և կապիտալիստական, բանվորները նույնպես շահագրգռված են արտադրության բնույանման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, իսկ նշելանակում է, նրա կապիտալի կուսակման մեջ: Բայց կապիտալի կուսակմանը խոչընդոտում է աշխատավարձի բարձրացումը, պնդում են բուրժուական տեսեսաղետները, կրկնելով դեռևս Կ. Մարքսի կողմից մեղհացված իրենց նախորդներին: Սակայն վիճակագրական տվյալները համոզելի փաստերով վկայում են այն մասին, որ աշխատանքի արտադրողականությունը և կապիտալիստների շահույթներն աճում են ավելի արագ, քան անվանական աշխատավարձը: Իսկ տուաբին անհրաժեշտության առարկաների գները բարձրացումը, որը հատկապես ուժեղացել է վեր-

ցին տարիներին, և աշխատավորների վրա հարկերի անընդհատ աճը ի չիք են դարձնում աշխատավարձի ավելացումը:

Կապիտալի կուտակման մարքս-լենինյան տեսությունը հնարավորություն է ընձեռում ապացուցելու կապիտալիստների և բանվորների շահերի ընդհանրության մասին շատագոգովական ամեն մի տեսության անհիմնությունը, ինի դա սոցիալական զործընկերությունն տեսությունը, որտեղ կապիտալիստն ու բանվորը ներկայացվում են իբրև ընդհանուր անտեսական շահեր ունեցող հավասար զործընկերներ, ինի դա սեպրգկանի հարաբերությունների տեսությունը, ըստ որի բոլոր մարգիկ եղբայրներ են, որոնք մեկը մյուսի համար միայն բարի գործ են կատարում: Կապիտալիստական երկրներում տիրող ունալ իրականությունն անհերքելի ուժով ապացուցում է, որ բանվորների և կապիտալիստների զսակարգային շահերը ինչպես եղել են տրամագծորեն հակադիր գեռես Կ. Մարքսի ժամանակաշրջանում, աշդպես էլ մեացել են նույնքան հակամարտ, անհաշտելի:

ԿԱՊԻՏԱԼԻ ԵՐԶԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՊՏՈՒՅՑԸ

Վեր շարժման ընթացքում կապիտալն անցնում է արտադրության պրոցեսը և շրջանառության պրոցեսը: Այդ պատճառով էլ կարևոր է կապիտալը գիտարկել շարժման մեջ, վերլուծել շրջանառության ոլորտը և նրա ներգործությունը հավելյալ արժեքի արտադրության վրա:

32 § 1. Կապիտալի շրջապտույտը և նրա երեք փուլերը

Կապիտալի շրջապտույտի երեք փուլերը
Վապիտալի շրջապտույտի առաջին փուլը կարելի է արտահայտել հետևյալ ձևով.

$$\Phi - \text{Ա} \left\langle \begin{array}{l} \text{Ա}_2 \\ \text{Ա}_1 \end{array} \right. \text{Արտադրության մեջ ներդրող ամեն}$$

մի կապիտալի շարժումը սկսվում է նրա դրամական ձևից: Կապիտալի տերը որոշ գումար է ավանսավորում արտադրության գործոններ՝ արտադրամիջոցներ (Ա₁) և աշխատուժ (Ա₂) ձևոք բերելու համար:

Շրջապտույտի այդ փուլում դրամական կապիտալը փոխարկվում է արտադրողականի նախկինում փողի ձևով գոյություն ունեցող կապիտալըն ընդունում է արտադրողական կապիտալի ձև: Դրանից հետո ավանսավորված արժեքի փոխակերպումն ընդհատվում է:

Աշխատանքի շուկայում աշխատուժի ձևաբերումը հանդիսանում է որոշի: պայման ավանսավորված արժեքը, որն առաջ հանդես էր կալիս փողի ձևով, կապիտալի, այսինքն հավելյալ արժեք բերող արժեքի փոխակերպման համար: Աշխատուժի դեումը, այսինքն Փ—Ա₂ գործողությունն արտահայտում է զսակարգային հարաբերությունները կապիտալիստի և վարձու բանվորների միջև: Իսկ արտադրության միջոցների գեումը՝ Փ—Ա₁ արժողությունը արտահայտում է արտադրության միջոցները բաշխելու առևտրային կապիտալիստների միջև տեղի ունեցող հարաբերությունը:

Կապիտալի շրջապտույտի երկրորդ փուլը կապիտալիստի կողմից քնված արտադրամիջոցների և աշխատուժի արտադրողական սպառումն է։ Այն կարող է արտահայտվել հետևյալ կերպ. ...Արտ... Արտ-ից առաջ հարավը կհատկոր նշանակում են, որ կապիտալի փոխակերպումն ընդհատված է, բայց նրա շրջապտույտի պրոցեսը կանգ չի առել, բանի որ ապրանքային շրջանառության ոլորտից այն մտնում է արտադրության ոլորտը։

Դրամական կապիտալի արտադրողականի փոխակերպման հետևանքները արժեքը ձևեր է բերում աշխարհի բնածն, որի միջոցով չի կարող շարունակել շրջանառությունը և պետք է մտնի արտադրողական սպառման ոլորտը։ Արտադրողական կապիտալի գործարկման հետևանքով ստեղծվում է ապրանք, որի մեջ մարմնավորվում է հավելյալ արժեքը։ Ապրանքն ստեղծվելուց հետո արտադրության պրոցեսն ընդհատվում է (որը եղել է կետերով Արտ-ից հետո), իսկ արտադրողական կապիտալը փոխակերպվում է ապրանքայինի։

Կապիտալի շրջապտույտի երրորդ փուլը կարող է արտահայտվել հետևյալ ձևով. Ա՝—Փ՝, որտեղ Ա՝—Փ՝ նշանակում է, որ ստեղծված ապրանքի մեջ պարունակվում է հավելյալ արժեքը։ Այդ փուլում կապիտալիստը հանդես է գալիս որպես իր ձեռնարկությունում ստեղծված ապրանքների վաճառող։ Դրանք վաճառման հետևանքով կապիտալը կրկին ընդունում է իր սկզբնական՝ դրամային ձևը։ Հավելյալ արժեքը ապրանքային ձևից փոխակերպվում է դրամականի, որը նշանակվում է Փ՝ նշանով։

Այսպիսով, իր շարժման ընթացքում կապիտալը հաջորդաբար լուծում է երեք ձև. փողային, արտադրողական և ապրանքային, որոնք համապատասխանում են նրա շրջապտույտի երեք փուլերին։ Այդ փուլերից մեկը վերադառնում է արտադրության ոլորտին, մյուս երկուսը՝ շրջանառության ոլորտին։ Կապիտալի փոխակերպումը արտադրողական ձևից ապրանքային Կ. Մարքսն անվանել է կապիտալի իրական ձևափոխություն, ի տարբերություն նրա ձևական ձևափոխումների, որոնք սեղի են ունենում շրջանառության ոլորտում՝ առաջին և երրորդ փուլերում և որոնց մասնակն առջին է ունենում կապիտալի ձևերի սոսկ պարզ փոխակերպում, այլ ոչ թե նրա մեծացում։

Կապիտալի շարժումը, որի ընթացքում այն հաջորդաբար փոխակերպվում է մի ձևից մյուսին, Կ. Մարքսն անվանել է կապիտալի շրջապտույտ։ Կապիտալի շրջապտույտն ամբողջությամբ արտահայտվում է հետևյալ ֆորմուլայով. Փ—Ա՝ <math>\frac{U_2}{U_1}> ... Արտ... Ա՝—Փ՝, Այս ֆորմուլան

ցայտուն կերպով ցույց է տալիս կապիտալիստական արտադրության նպատակը՝ հավելյալ արժեքի ստեղծումը

Արդյունաբերական կապիտալի երեք ձևերը

Արդյունաբերական կապիտալի շրջապտույտի պրոցեսը արտադրության պրոցեսի և շրջանառության պրոցեսի միասնությունն է։ Շրջապտույտն յուրաքանչյուր փուլում կապիտալը կատարում է հատուկ տնտեսական ֆունկցիան։ Դրամական կապիտալի ֆունկցիան արտադրության միջոցների և աշխատուժի միացումն է կապիտալիստի ձեռքում։ Արտադրողական կապիտալի ֆունկցիան հավելյալ արժեքի ստեղծումն է։ Իսկ ապրանքային կապիտալի ֆունկցիան կապիտալիստի ձեռքի և հավելյալ արժեքի իրացումն է։ Դրամական կապիտալը, արտադրողական կապիտալը և ապրանքային կապիտալը իրենց իրերից ներկայացնում են արդյունաբերական կապիտալի դորժանական ձևերը։ Փայտալիստը, — գրել է Կ. Մարքսը, — որն իր լրիվ շրջապտույտի ընթացքում ընդունում և կրկին դնել է նևտում այդ ձևերը և նրանցից յուրաքանչյուրում կատարում է դրան համապատասխանող ֆունկցիան, արդյունաբերական կապիտալ է, արդյունաբերական բառն այստեղ օգտագործվում է այն նշանակությամբ, որում այն ընդգրկում է արտադրության ամեն մի կապիտալիստի վարժող ճյուղը։

Այնպեսով, որքանով որ կապիտալիստական արտադրության նպատակը հավելյալ արժեքի ստեղծումն է, կապիտալի շարժումը չի սահմանափակվում մի շրջապտույտով, այլ մշտապես վերսկսվում է։ Դրա հետևանքով կապիտալի շրջապտույտի ֆորմուլան ստանում է անվերջ պարունակելու ձև.

$$\Phi - A \left\langle \frac{U_2}{U_1} \right\rangle \dots \text{Արտ...} A' - \Phi' - A' \left\langle \frac{U_2}{U_1} \right\rangle \dots \text{Արտ...} A'' - \Phi'' \text{ և այլն}$$

Շրջապտույտի անընդհատ վերսկսվելու և կրկնվելու պրոցեսում արդյունաբերական կապիտալը ոչ միայն հետևողականորեն ընդունում է երեք ձևեր՝ դրամական, արտադրողական և ապրանքային, այլև յուրաքանչյուր ավելի պահին միաժամանակ գտնվում է բոլոր երեք ձևերում։ Կապիտալիստը մշտապես պետք է կապիտալ ունենա դրամական ձևով, որպեսզի կարողանա աշխատուժի վարձել և արտադրության միջոցներ ձեռք բերել։ Կապիտալի մի մասը պետք է գտնվի և գտնվում է արտադրության ոլորտում։ Պատրաստի արտադրանքը պետք է մշտապես մտադ գործի իրացման ուղի։ Պատրաստի արտադրանքի վաճառքի, այդինքն՝ կապիտալի ապրանքային ձևից դրամականի փոխակերպման խափանումը կարող է կապիտալի դրամական ձևի պակասություն առաջ բերել, որը կհանգեցնի արտադրության տարրերի լրացմանը։ Այսպիսով, յուրաքանչյուր արդյունաբերական կապիտալ միաժամանակ դո-

1 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 24, стр. 60.

յության ունի բոլոր երեք ձևերով, որը կապիտալիստական արտադրության անընդհատության անհրաժեշտ պայմանն է:

Արդյունաբերական կապիտալի յուրաքանչյուր նսպիտալի շրջապտույտի գործառնական ձևին հասուկ է իր շրջապտույտը երեք ձևերը Դրամական կապիտալի շրջապտույտը պատկեր-

վում է հետևյալ ֆորմուլայով. $\Phi - U \left\langle \frac{U_2}{U_1} \dots \right\rangle$ Արտ...

$\Phi - U$ — Փ-Ս նախընկնում է արդյունաբերական կապիտալի շրջապտույտի ընդհանուր ֆորմուլային Դրամական կապիտալը պատմականորեն և արամաբանորեն արդյունաբերական կապիտալի էլակետային ձևն է հանդիսանում և սկիզբ է դնում կապիտալի ամբողջ շարժմանը: Երջապտույտի ժամանակ նրա հետադարձ հոսքը արտադրության պրոցեսի հետագա վերականգնման պայմանն է հանդիսանում:

Դրամական կապիտալի շրջապտույտի մեջ առավել վառ կերպով է արտահայտված կապիտալիստական արտադրության նպատակը՝ հավելյալ արժեքի անձուր: Սակայն նրա ստեղծման րուն պրոցեսը շրջապտույտի այդ ձևում թաքնված է: Հավելյալ արժեքը ալստեղ հանդես է գալիս իրեն ամբողջ կապիտալի շարժման արդյունը:

Արտադրողական կապիտալի շրջապտույտի ֆորմուլան հետևյալ առևն ունի. Արտ... $U - \Phi' - U \left\langle \frac{U_2}{U_1} \dots \right\rangle$ Արտ: Երջապտույտի այդ ֆորմուլան ընդգծում է արտադրության պրոցեսի անընդմեջությունը, կրկնփոփությունը: Արտադրողական կապիտալը հանդես է գալիս արտադրության տարրերի ձևով, որոնք կարող են սպառվել միայն աշխատանքի պրոցեսում:

Դրամական կապիտալի շրջապտույտում արտադրական պրոցեսը միջանկյալ օղակ է կազմում շրջանառության երկու փուլերի միջև Իսկ արտադրողական կապիտալի շրջապտույտի մեջ շրջանառության այդ փուլերը միջնորդավորող օղակ են հանդիսանում, որն անհրաժեշտ է արտադրության պրոցեսի անընդհատ վերականգնման համար: Հետևաբար, աշխույժ րուն շրջանառությունը միջնորդավորում է պարբերաբար վերականգնող և այդ պատճառով էլ անընդհատ վերարտադրությունը:

Արտադրողական կապիտալի շրջապտույտում արտադրության պրոցեսի որոշիչ դերը կապիտալիստի արժեքի ամբողջ շարժման ընթացքում է հայտ է գալիս առավել ցայտուն: Սակայն այդ շրջապտույտը քողարկում է կապիտալիստական արտադրության շարժիչ առիթը՝ հավելյալ արժեքի ստանալը, ծնում է պատկերացում, իրեն թե կապիտալիզմի օրոք արտադրությունն իրականացվում է հանուն հենց իրեն արտադրության, հանդիսանում է ինքնանպատակ:

Աղյառնվային կապիտալի շրջապտույտի ֆորմուլան այսպիսին է.

$U - \Phi' - U \left\langle \frac{U_2}{U_1} \dots \right\rangle$ Արտ... U' , Ապրանքային կապիտալի շրջապտույտը

վերջանում է աճած կապիտալիստի արժեքով: Նրա բովանդակությունը կապիտալիստի արժեքի և հավելյալ արժեքի իրացման մեջ է:

Կապիտալի երեք ձևերի շրջապտույտի վերլուծությունը բացահայտում է արդյունաբերական կապիտալի շրջապտույտի պրոցեսի բովանդակությունը: Երջապտույտի միայն երեք ձևերի միասնությունն է պայմանավորում կապիտալի շարժման անընդհատությունը, արտադրության պրոցեսի և շրջանառության պրոցեսի միասնությունը: Կապիտալը — գրկ է Կ. Մարքսը — դա շարժում է, շրջապտույտի պրոցես, որն անցնում է զանազան փուլեր, պրոցես, որն իր հերթին իր մեջ ամփոփում է շրջապտույտի պրոցեսի երեք տարբեր ձևերը: Այդ պատճառով էլ կապիտալը կարելի է բնկալել միայն իրեն շարժում, և ոչ թե դադար վիճակում գտնվող իրը:

Կապիտալի շրջապտույտի բոլոր ձևերի համար ընդհանուր հանդիսանում է արժեքի անձուր իրեն կապիտալիստական արտադրության սրշի: Նպատակ և առիթ: Կապիտալի շրջապտույտի բոլոր շարժելիքների միջև ընդհանուր նաև նրանում է, որ բոլոր դեպքերում էլ կապիտալի շարժումն իրականացվում է շրջապտույտի կեղծ, տրոհվում է երեք հետևողական փուլերի և կապված է գործառնող կապիտալի մեկ ձևից մյուսին փոխակերպման հետ: Սակայն կապիտալի շրջապտույտի յուրաքանչյուր շարժելիքն այդ ընդհանուր կապիտալի շարժման մեջ արտադրության և շրջանառության տեղն ու դերը, տարբեր կերպ է բացահայտում կապիտալիստական արտադրության նպատակը:

Արդյունաբերական կապիտալի շրջապտույտի անընդհատությունը պահանջում է նրա ձևերի մշտական և հետևողական փոփոխում, նրանց միջև անհրաժեշտ համաձայնության պահանջում: Սակայն կապիտալի շրջապտույտի այդ անընդհատությունը արտադրության միջոցների կապիտալիստական մասնավոր սեփականության տիրապետության, կապիտալիստական արտադրության հավամարտ բնույթի և տարբերային գաղափարների հետևանքով պարբերաբար խախտվում է:

33
Կապիտալիստական արտադրությունը և շրջանառությունը
Արդյունաբերական կապիտալի շրջապտույտն իրենից ներկայացնում է արտադրության պրոցեսի և շրջանառության պրոցեսի միասնություն: Առանց շրջանառության չի կարող լինել նաև կապիտալիստական արտադրություն: Երջանառության մեջ առկա է ունենում կապիտալի ձևերի փոխակերպում՝ այն ապրանքային ձևից փոխա-

1 K. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 24, стр. 121.

հերցովում է դրամականի և դրամականից՝ ապրանքային: Սակայն արտադրության պրոցեսի և շրջանառության պրոցեսի միասնության մեջ առաջնությունը պատկանում է արտադրությանը, քանի որ հենց արտադրության պրոցեսում են ստեղծվում ապրանքը, արժեքը և հավելյալ արժեքը: Միայն արտադրության պրոցեսում է վարձու բանվորների շահագործման հետևանքով առկա ունենում կապիտալի իրական մեծացում, կապիտալիզմի արժեքի փոփոխում: Մինչդեռ շրջանառության պրոցեսում փոխվում է միայն կապիտալի ձևը, բայց ոչ նրա արժեքը:

Շրջանառության պրոցեսի իրականացման համար պահանջվում են լրացուցիչ ծախսումներ: Դրանց կարիքն առաջանում է աշխատուժե վարձելու, արտադրամիջոցների ձեռք բերելու, նյութիկ նսե գնված նյութերի, հումքի, սարքավորման և այլն սեղագիտման համար հատուկ անձնակազմ պահելու անհրաժեշտությանը: Բացի այդ, արտադրված ապրանքների վաճառելու համար անհրաժեշտ են առևտրային բանվորների և ծառայողների հաստիքներ, պահեստային շինություններ և այլն: Զգույթ միջոցներ են ծախսվում սեկյանի համար: Կապիտալի այդ ոլորտ ծախսումները կազմում են շրջանառության ծախսեր:

Շրջանառության ծախսերը բաժանվում են երկու խմբի. շրջանառության զուտ ծախսեր և շրջանառության մեջ արտադրության լրացուցիչ ծախսեր: Շրջանառության մեջ արտադրության լրացուցիչ ծախսեր են դասվում շրջանառության ոլորտում արտադրության պրոցեսի շարունակության հետ կապված ծախսերը: Դրանք կազմված են ապրանքների փոխկիմադրման, կիլոադրաման, պահպանման, դրանք գնահարզին հասցնելու ծախսերից: Նրան այդպիսի դասորդությունը առաջ են գալիս արտադրության կարիքներով, ապա դրանք կատարվում են ծախսված աշխատանքը ստեղծում է արժեք և հավելյալ արժեք, որի հետևանքով նշված գործողությունների կատարման են կերակրված ապրանքների արժեքը բարձրանում է:

Շրջանառության, որպես աշխարհի, պրոցեսով, այսինքն՝ արժեքի ձևերի փոփոխումը պայմանավորված ծախսեր կազմում են շրջանառության զուտ ծախսեր: Դրանք մարվում են հավելյալ արժեքից կատարված հանումների հաշվին: Այդ պրոցեսների վրա ծախսված աշխատանքը չի ստեղծում նոր արժեք և հանդիսանում է ոչ արտադրողական:

Այսպիսով, արտադրությունն ու շրջանառությունը որդանապես փոխադարձաբար կապված են: Առաջնությունն այդ փոխադարձ կապում արտադրությանն է պատկանում: Միևնույն ժամանակ, արտադրության բնութիվով բնորոշվող շրջանառությունը նրա վրա հետադարձ ներգործություն է ունենում: Այն կարող է նպաստել արտադրության անհին, իսկ կարող է նաև այն արգելակել: Շրջանառության նյութական հիմքը աշ-

խատանքի հասարակական բուժանումն է, առանց որի չի կարող գոյություն ունենալ ապրանքային փոխանակություն:

**Քուրծուական և ու-
Փորձուական փոխ-
անկայն կոնցեպցիայի
ընդադասությունը**

Քուրծուական քաղաքատնտեսության մեջ գոյություն ունեն մի շարք տեսություններ, որոնք ստացել են փոխանակային կոնցեպցիա անվանումը: Այդ կոնցեպցիայի համաձայն հասարակության տնտեսական զարգացման վրա վճռական դեր է խաղում շրջանառության պրոցեսը: Իսկ արտադրության պրոցեսը զիտարկվում է նրա ներկայացուցիչների կողմից միայն իբրև մարդու վերաբերման բնության նկատմամբ, հասարակական արտադրական հարաբերությունների հետ որևէ կապից զուրու: «...Քուրծուական մասհորիզոններ,— գրել է Կ. Մարքս,— որում մտքով ուշագրավվածը կանխվում է տնտեսական զործարքներ սարքելով: Տեղյ համապատասխանում է այն մտահայեցելու, որ ոչ թե արտադրության եղանակի բնութիվն է հիմք հանդիսանում իրեն համապատասխանող փոխանակման եղանակին, այլ բնղահկատակն»:

Քուրծուական տնտեսականները հիմնական ուշագրությունը կենտրոնացնում են շրջանառության պրոցեսի վրա: Կապիտալիստների հարաբերությունները վարձու բանվորների հետ նրանց կողմից բնութագրվում են իբրև հավասարության հարաբերություններ, որոնք կապված են փոխադարձ սպասարկումներով: Կապիտալիստն իբր թե վարձատրություն է բանվորների աշխատանքի, իսկ բանվորները կատարում են կապիտալիստի համար օգտակար արտադրական, սեկտիկական ֆունկցիաներ: Դա բացատրվում է նրանով, որ քուրծուական տնտեսականների ղեկավար խնդիրը կապիտալիստական շահագործման բացակայությանն ապացուցելու փորձերն են:

Փոխանակային կոնցեպցիան հատկանշական է բուրժուական ամբողջ քաղաքատնտեսության համար: Այսպես, անգլիական բուրժուական տնտեսական Զ. Քենչը տնտեսության կապիտալիստական սխտան հակացությունը փոխարինել է «քառական տնտեսություն» հակացությունը: Վճռական նշանակությունը նա սովել է շուկային:

Արդի պայմաններում ռեֆորմիստները փորձում են ապացուցել կապիտալիզմի պայմաններում արմատական սոցիալական վերափոխումների հնարավորությունը փոխանակման կատարկազորման միջոցով: Սակայն կապիտալիզմի պայմաններում չեն կարող հաղթահարել նրան հատուկ հակամարտ հակասությունները, բուրժուական կարգերի շահագործողական սխտանը: Փոփոխությունները շրջանառության ոլորտում (օրինակ, բանկերի, պետականացումը) չեն վերացնում կապիտալիզ-

մի հիմքերը՝ արտագրության միջոցների մասնավոր սեփականություն և հրատապանությունը և վարձու աշխատանքի շահագործումը: Կապիտալիստական հարաբերությունների վերացումը միայն կարող է փոխել շրջանառության պրոցեսի բնույթը, այն ենթարկել ամբողջ հասարակության շահերին:

§ 2. Կապիտալի պտույտը: Հիմնական կապիտալ և շրջանառու կապիտալ

34

Կապիտալի պտույտը

Կապիտալի բնույթն ինքն է թևադրում նրա շարժման կրկնողության անհրաժեշտությունը: Ենթակապիտալի շրջանառությունը, որը դիտարկվում է ոչ իբրև առանձին գործառնություն, այլ իբրև պարբերական պրոցես, կոչվում է կապիտալի պտույտ¹:

Իր շարժման մեջ կապիտալն անցնում է արտադրության փուլը և շրջանառության փուլը, որոնք իրականացվում են որոշ ժամանակամիջոցում: Այն ժամանակի գումարը, որի ընթացքում ավանսավորված կապիտալային արժեքն անցնում է արտադրության և շրջանառության փուլերը, կոչվում է կապիտալի պտույտի ժամանակը: Այլ խոսքով, կապիտալի պտույտի ժամանակն իրենից ներկայացնում է արժեքի շարժման պարբերությունը՝ նրա ավանսավորման պահից սկսած, մինչև նրա վերագրվող կապիտալիստի մոտ նստեցնական, զբաղալին ձևով, բայց հավելյալ արժեքի մեծությունը ավելացած:

Գործող կապիտալների պտույտների արագություն համեմատության համար իբրև պտույտի ժամանակի չափման բնական միավոր սովորաբար ծառայում է սարքին իմանալով մեկ տարվա ընթացքում զանազան կապիտալների կատարած պտույտների թիվը, կարելի է որոշել գրանց պտույտի արագությունը:

Կապիտալի պտույտների թվի հաշվարկումը կատարվում է հետևյալ ֆորմուլայով. $n = \frac{O}{O_0}$ -ին, որտեղ n -ը պտույտների թիվն է և, O_0 -ն կապիտալի պտույտի արագության չափման ընդունված միավորը (տարի—12 ամիս), O -ն սովալ կապիտալի պտույտի ժամանակը Այսպիսով, երեք ամսում պտույտ գործող կապիտալը տարվա ընթացքում կգործի 4 պտույտ ($n = \frac{12}{3}$), իսկ 18 ամսվա ընթացքում պտույտ գործող կապիտալը տարվա ընթացքում կգործի միայն իր պտույտի $\frac{1}{3}$ մասը ($n = \frac{12}{18}$):

Միևնույն ճյուղի անհատական կապիտալները և տարբեր ճյուղերի կապիտալները պտույտի տարբեր արագություններ ունեն: Դա բացատրվում է արտադրության և շրջանառության պայմանների տարբերությամբ: Կապիտալի պտույտի արագացումը նաև անհրաժեշտություն է ունենում ավանսավորված կապիտալի մեծության, հավելյալ արժեքի տարեկան մասսայի և նորմալի վրա: Որքան արագ է պտույտ գործում կապիտալը, այնքան շատ հավելյալ արժեք է ստանում կապիտալիստը: Այդ պատճառով էլ կապիտալիստները ձգտում են արագացնել կապիտալի պտույտը:

Կապիտալի պտույտի արագության վրա ազդող կարևորագույն գործոններից մեկը արտադրողական կապիտալի կազմն է, որը բաժանվում է հիմնական և շրջանառու կապիտալի:

Հիմնական կապիտալ և Կապիտալի բաժանումը հիմնականի և շրջանառության կապիտալի պտույտների արագությունների միջև ընկած տարբերությունների փոխարկման եղանակով: Արտադրողական կապիտալի այն տարբերը, որոնք ամբողջությամբ մասնակցում են արտադրության պրոցեսում, բայց իրենց արժեքը փոխանցում են արդյունքին մաս-մաս և կապիտալիստին են վերագրանում գրամի ձևով նույնպես մաս-մաս, կոչվում է հիմնական կապիտալ: Հիմնական կապիտալին զատվում է այն կապիտալը, որն ավանսավորվում է աշխատանքի միջոցների գնման, այսինքն արտադրական շենքեր, կառույցների, մեքենաների, սարքավորում և այլ բաներ ձեռք բերելու համար: Հիմնական կապիտալը կապիտալիստի կողմից ավանսավորվում է միանգամից, նրա գործադրության ամբողջ ժամանակամիջոցի համար, բայց նրա արժեքը շրջանառությունից կարգվում է միայն բաժիններով:

Պտույտի պրոցեսում հիմնական կապիտալի արժեքը ձեռք է բերում երկակի գոյություն: Մի կողմից, քանի որ աշխատանքի միջոցները շարունակում են գործադրվել կապիտալի մի շարք շրջանառությունների ընթացքում, պահպանելով իրենց բնածեղ, ավանսավորված կապիտալի արժեքի մի մասը նշվաբովում է այդ ձևով: Մյուս կողմից, արտադրության պրոցեսում արտադրության միջոցներն աստիճանաբար են մաշվում, և նրանց արժեքի մի մասը որոշ բաժիններով է անցնում ստեղծվող արդյունքին:

Հիմնական կապիտալի կազմում տարբերում են ակտիվ և պասսիվ տարբեր: Ակտիվ տարբերը ներգործում են անշարժանքի առարկայի վրա: Գրանք են մեքենաները, սարքավորումը, շափոշ և կարգավորիչ սարքերն ու հարմարանքները և այլն: Հիմնական կապիտալի պասսիվ տարբերը սպասարկում են արտադրության պրոցեսը: Գրանք կազմված

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 24, стр. 175.


են շննքերից, կատույցներից, փոխանցող հարմարանքներից, տրանսպորտային միջոցներից և այլն:

Երջանառու կապիտալ ինքնից ներկայացնում է արտադրողական կապիտալի մի մասը, որի արժեքը նրա սպառման պրոցեսում արդյունքին է փոխանցվում լրիվ և յուրաքանչյուր շրջապտույտի ընթացքում ամբողջությամբ վերագործվում է կապիտալիստին գրամական ձևով: Երջանառու կապիտալին վերաբերում են աշխատանքի առարկաներ ձևոր բերելու նպատակով կապիտալիստի կատարած ծախսերը: Աշխատանքի առարկաները՝ հումք, օժանդակ նյութերը, վառելիքը և այլն արտադրության պրոցեսում սպառվում են ամբողջությամբ: Նրանք կամ առարկայական մտնում են պատրաստի արդյունքի մեջ, կամ նպատում են նրա ստեղծմանը: Նրանց արժեքը լիովին փոխանցվում է ստեղծվող ապրանքին:

Երջանառու կապիտալին է դասվում կապիտալի այն մասը, որն ավանսավորվում է աշխատում գնելու համար, այսինքն փոփոխուն կապիտալը: Ընչտ է, արտադրության պրոցեսում աշխատումն իր արժեքը չի փոխանցում ստեղծված արդյունքին, այլ ստեղծում է նրա համարձեքը և հավելյալ արժեք: Բայց ըստ շրջանառության եղանակի փոփոխուն կապիտալը չի տարբերվում շրջանառու կապիտալի մնացած տարրերից: Աշխատում ձևոր բերելու նպատակով կապիտալիստի ծախսումներն ամբողջությամբ մտնում են արտադրված ապրանքների արժեքի մեջ և ամբողջությամբ նրան են վերագրանում իրացումից հետո:

Կապիտալի բաժանումը հիմնականի և շրջանառուի ըստ ձևի մասնատրերվում է կապիտալի հաստատունի և փոփոխունի բաժանումից: Կապիտալի բաժանումը հիմնականի և շրջանառուի պայմանավորվում է արտադրության տարբեր պարբերի արժեքների արդյունքին փոխանցելու տարբեր եղանակներով: Կապիտալի բաժանումը հաստատունի և փոփոխունի պայմանավորված է արժեքի և հավելյալ արժեքի ստեղծման պրոցեսում նրանց ոչ միասնական գերակ:

Հիմնական կապիտալի և շրջանառու կապիտալի միջև հարաբերությունը, մի կողմից, և հաստատուն կապիտալի ու փոփոխուն կապիտալի միջև, մյուս կողմից, սխեմատիկորեն կարելի է պատկերել հետևյալ կերպ.



Արտադրողական կապիտալի բաժանումը հիմնականի և շրջանառուի միջակում է հաստատունի և փոփոխունի նրա բաժանումը: Փոփոխուն կապիտալը ավելի զեպրում հանդես է գալիս սուկ իրեն շրջանառու կապիտալի մասերից մեկը: Այդ պատճառով էլ հավելյալ արժեքը թվում է ոչ թե վարձու բանվորների շահագործման արդյունք, այլ ավանսավորված կապիտալի բույր մասերի ծնունդ:

Հիմնական և շրջանառու կապիտալներն իրենց շրջանառությունը կատարում են տարբեր արագությամբ: Այն ժամանակավիշտքում, երբ հիմնական կապիտալը կգործի մեկ պտույտ, շրջանառու կապիտալը կկատարի մի քանի պտույտ: Այդ պատճառով էլ, որքան մեծ է շրջանառու կապիտալի տեսակարար բաժինը ավանսավորված կապիտալում, այնքան փոքր է ամբողջ կապիտալի պտույտի ժամանակը, իսկ հետևաբար, այնքան մեծ է և կապիտալիստի ստացած հավելյալ արժեքը:

Հիմնական և շրջանառու կապիտալների բույր
ժամանակը բնորոշումները
 քանակաբանությունը

Կապիտալի հիմնական և շրջանառու կապիտալներից նայածի էին գնենս մինչև 4, Եվրոպայում Այդ հասկացությունների ինքնատեղ բացատրությունները եղել են Ֆ. Միլերի, Ա. Թյուրոպի, Ա. Սմիթի, Գ. Ռիկարդոյի և այլք արտասպասած մտքերում: Ֆիզիոկրատները (Քլենն, Բյուրդո) նշել են կապիտալի առանձին մասերի պտույտի տարբերությունը: Հիմնական կապիտալի և շրջանառու կապիտալի միջև տարբերությունը նրանք բացատրում էին իրեն նախակերպական ավանսի և ամենամյա ավանսի տարբերությունում: Նրանք ճշտ էին գտնում, որ կապիտալի նման բաժանումը վերաբերվում է միայն արտադրողական կապիտալին: Եվ դրանում է նրանց ծառայությունը: Սակայն նրանք սխալմամբ կարծում էին, թե արտադրողական կապիտալ միայն հողագործության և զջողատեսակության այլ ճյուղերում ներդրած կապիտալն է Այդ կապիտալն էլ նրանք բաժանում էին նախակերպական ավանսներին, այսինքն մի քանի տարում կատարվող ծախսումների (զջողատարնառական գույր, անասուն ձևոր բերելու, կատույցներ և այլ բաներ անելու համար), և տարեկան ավանսների (սերմերի, աշխատումի և այլ բաների համար): Ավանսավորված կապիտալի այդպիսի բաժանումը համապատասխանում էր հիմնական և շրջանառու կապիտալի նրանց հասկացություններին:

Ա. Սմիթը արտադրողական կապիտալ էր համարում արդեն նյութական արտադրության որևէ ճյուղ ներդրված կապիտալը: Սակայն նա ենթադրում էր, որ շրջանառում է միայն շրջանառու կապիտալը: Ըստ որում, նա եննում էր հիմնական և շրջանառու կապիտալի տարբերի բնական հատկանիշներից, այլ ոչ թե կապիտալի շրջապտույտի պրոցեսում նրանց կողմից կատարվող ֆունկցիաներից: Ա. Սմիթը չավելի կա-

պիտանի շարժման տարբեր ձևերի՝ դրամականին, արտադրողականին և ապրանքայինի վերլուծությունը: Նա տարբերություն չէր գտնում արգելափակումների և առևտրային կապիտալների միջև և առևտուրը համարում էր անտեսության արտադրողական ճյուղեր: Հողագործության՝ մեջ կապիտալի կիրառման հարցի սովորված Ամիթը կրկնում էր ֆիզիկո-կրտսեաների տեսանկյունը, կարծելով, որ ոչ միայն աշխատանքը, այլև ինքը հողը, բնությունն էլ է արժեք ստեղծում:

Ի տարբերություն Ա. Ամիթի, Գ. Ռիկարդոն հասկանում էր, որ կապիտալը ինքը ապրանքի արժեք չի ստեղծում, որ այն աշխատանքի միջոցով է միայն փոխանցվում նոր ստեղծված ապրանքին: Սակայն կապիտալը հիմնականի և շրջանառուի տարբերվելու նա ելնում է նրա բաղկացուցիչ մասերի երկարակյանությունից: Շրջանառու կապիտալ նա համարում էր նրա միայն այն մասը, որը ծախսվում էր աշխատուժեի վրա: Կապիտալի այն մասը, որն սովանակություն է համբքի, վառելիս-կյուլի և օժանդակ նյութերի համար, մեկարդոն դասում էր հիմնական կապիտալի շարքը:

Արդի բուրժուական անտեսագետները այս պրոբլեմի մեջ սրել էական նոր բան չեն մտցրել առեկաթի համեմատ, ինչ որ ամսված է եղել բուրժուական կյանիկ ըստգրաստեսություն ներկայացուցիչներին կողմից:

35

Հիմնական կապիտալի ֆիզիկական և բարոյական մաշումը

Փոյություն ունի հիմնական կապիտալի օգտագործման որոշակի միջին տեսողություն, որովհետև զրա օգտագործման ժամանակ այն ֆիզիկական և բարոյական մաշվում է:

Հիմնական կապիտալի ֆիզիկական մաշումը կայանում է նրանում, որ աշխատանքի միջոցները օգտագործման պրոցեսում կորցնում են իրենց սպասողական արժեքը, իսկ նրանց արժեքը փոխանցվում է արդյունքին այն չափով, որչափով դրանք կորցնում են իրենց սպասողական արժեքը: Փոյություն ունի կապիտալի երկու տեսակ ֆիզիկական մաշում: Նախ, աշխատանքի միջոցները ֆիզիկական մաշվածություն են ենթարկվում զրանց կիրառման պրոցեսում՝ դրանց գործածության ինտենսիվությանը համեմատ: Երկրորդ, դրանք կորցնում են իրենց բնորոշ հատկությունները միջոցառային պայմաններին ազդեցության տակ, ինչպես նաև ենթքին պրոցեսների հետևանքով, որոնք տեղի են ունենում նյութի, որից դրանք պատրաստված են, կառուցվածքի մեջ:

Այդպիսով, հիմնական կապիտալի ֆիզիկական մաշվածության աստիճանը կախված է մեքանիկների և տարբերումների օգտագործման տեսողությունից, արտադրական պրոցեսի ինտենսիվությունից, աշխատանքի միջոցների որակից, տեխնոլոգիական պրոցեսների առանձնահատկություններից, որոնցում զրանք իրականացվում են, արտաքին

պայմանների ներգործությունից, վերանորոգման ժամանակին և որակով կատարելուց և մի շարք այլ գործոններից:

Հիմնական կապիտալի արագ մաշվելը կանխելու համար անհրաժեշտ է ծախսել լրացուցիչ կապիտալ ընթացիկ, միջին և հիմնական վերանորոգման համար: Հիմնական վերանորոգման համար միջոցների աղբյուր է հանդիսանում ամորթագանձի ֆոնդը: Հիմնական վերանորոգման (այնպես աշխատանքի միջոցների ամենակարևոր մասերի ու զենաների փոխարինման) հետևանքով վերականգնվում է ոչ միայն հիմնական կապիտալի տարբեր տեսակների գործունեությունը, այլև դրանց արժեքը: Հիմնական վերանորոգման համար ծախսված կապիտալը դասվում է հիմնական կապիտալին: Հիմնական կապիտալի գործելը սպասարկելու համար (զրանք խնամքը, ընթացիկ և կանխիկ վերանորոգում և այլն) ծախսվող կապիտալը չի դասվում ոչ հիմնական, ոչ շրջանառու կապիտալին: Գ. Մարքսն այդ կապիտալն անվանել է հատուկ բնույթի կապիտալ: Բայց գործնականում քանի որ սովորյալ կապիտալը դասվում է ընթացիկ ծախսումների կատեգորիային, այն վերաբերում է շրջանառու կապիտալին:

Հիմնական կապիտալի բարոյական մաշումը տեղի է ունենում կապիտալի արժեքիկման հետևանքով, նրա ֆիզիկական մաշվածության աստիճանից անկախ: Հիմնական կապիտալի բարոյական մաշումը նույնպես, ինչպես և նրա ֆիզիկական մաշումը, իրենից երկարակյան է հիմնական կապիտալի մասնակի արժեքիկման, նրա արժեքի մի մասի կորուստ: Սակայն բարոյական մաշում առաջացնող պատճառները այլ են, քան այն պատճառները, որոնք հասցնում են ֆիզիկական մաշվածության:

Փոյություն ունի բարոյական մաշվածության երկու տեսակ: Նրա առաջին տեսակը պայմանավորված է նախկին կոնսուրուկցիայի մեքանիկների արտադրության էժանացման հետ, որն աշխատանքի արտադրողականությունն ունի շնորհիվ նրանց արժեքի իջնելու հետևանք է: Երկրորդ տեսակի բարոյական մաշվածությունը կապված է նույն նշանակության ավելի կատարելագործված կոնսուրուկցիա ունեցող նոր մեքանիկ ստեղծման հետ, որը պայմաններ է ստեղծում նվազեցնելու արտադրվող արդյունքի միավորի վրա կատարվող ծախսումները (Ընդ որում, հին մեքանիկները մասնակիորեն արժեքիկման են Հիմնական կապիտալի մասատայան բարոյական մաշումը սովորաբար տեղի է ունենում գերարտադրության անտեսական նշանաբանի ժամանակ):

Որքան կարճ է նոր արդյունքին աշխատանքի միջոցների արժեքի փոխանցման ժամանակը, այնքան քիչ են հիմնական կապիտալի բարոյական մաշվածության հետևանքով հնարավոր կորուստները: Բարոյական

Մաշվածութեան հետեւեղով հիմնական կապիտալի արժեզրկման վտանգը ստիպում է կապիտալիստներին միջոցներ ձեռնարկելու այն բանի համար, որպէսզի հիմնական կապիտալի արժեքը փոխհատուցվի նրա ֆիրմիական մաշվածութիւնից դեռ շատ աւաւ: Զգուհով արագացնել հիմնական կապիտալի արժեքի փոխանցումը նոր ստեղծվող ապրանքների և դրանով իսկ հասնել ավանսավորված կապիտալի ավելի արագ վերագործմանը, կապիտալիստները ստիպում են վարձու բանվորներին աշխատել բարձրացած ինտենսիվութեամբ, ուժեղացնում են նրանց շահագործումը:

Ամորտիզացիա

Նոր ստեղծվող ապրանքին փոխանցված և դրամի ձևով նրա իրացումից հետո կապիտալիստին վերագործվող աշխատանքի միջոցների արժեքը կազմում է ամորտիզացիոն ֆոնդ, այսինքն՝ հիմնական կապիտալի փոխհատուցման ֆոնդ: Ամորտիզացիոն ֆոնդի միջոցներն օգտագործվում են հնացած աշխատանքի միջոցները լրիվ նորերով փոխարինելու համար, վերանորոգման, սարքավորման մոդեռնացման համար, ինչպես նաև լրացուցիչ մեքենաներ, հաստոցներ և այլն գնելու նպատակով: Հետեւաբար, ամորտիզացիոն ֆոնդը մասնակիորեն օգտագործվում է նաև արտադրութեան ընդլայնելու համար, ծառայում է իբրև կուտակման լրացուցիչ աղբյուր:

Ամորտիզացիոն ֆոնդը գոյանում է ամորտիզացիոն հատկացումներից, որոնք համապատասխանում են արտադրվող ապրանքների աշխատանքի միջոցների արժեքի փոխանցված մասերին: Ամորտիզացիոն հատկացումների գումարի հարաբերութեանը աշխատանքի միջոցների արժեքին՝ տոկոսներով արտահայտված, իրենից ներկայացնում է ամորտիզացման նորման: Այդ նորման հաշվի է առնում հիմնական կապիտալի ֆիզիկական և բարձրական մաշվածութեանը:

Ամորտիզացիոն նորման կախված է գիտատեխնիկական առաջընթացի տեմպերից, մրցակցային պայքարի սրութեանից, աշխատանքի միջոցների արժեքից և այլնից: Բարոյական մաշվածութեան պրոցեսն արագացնող և հիմնական կապիտալը արագորեն կապիտալիստին փոխհատուցելը հարկադրելու կարևորագույն գործոն է տեխնիկական առաջընթացի ընդլայնումը: Հիմնական կապիտալի բարոյական արագ մաշումը ստանում է ամորտիզացիոն հատկացումների նորման բարձրացման: Որքան բարձր են տեխնիկական առաջընթացի տեմպեր, այնքան շատ են կրքեատվում հիմնական կապիտալի ամորտիզացման ժամկետները:

Մրցակցային պայքարի հարվածի տակ, կապիտալիստները ձգտում են ապահովել կապիտալի ներդրումների զգալի մասի փոխհատուցումը նոր սարքավորման վաղ, առավել ինտենսիվ օգտագործման փուլում:

Կոտլոբյուն ունեն ամորտիզացիոն արագացնող այլ օրինակով գործունեոր Գրանցից առավել կարևորը դա արդի գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում մեքենաների և սարքավորումների բարոյական մաշվածութեան ժամկետների խիստ կրճատումն է: Սուր, կատաղի մըքնացումային ազդեցութեան արագութեան հիպոթեզում դա հասցնում է այն բանին, որ դրանից շահում են այն կապիտալիստները ովքեր ավելի շուտ են ազատվում հնացած սարքավորումների բնոյի: Ահա թե ինչու ամորտիզացիոն նորմաները բարձրանում են: Միջինպերիֆարատական մըքնացումային ազդեցութեան ներքո բորժեական պետութեանը օրենսդրական կարգով բարձրացնում են ամորտիզացիոն նորմաները:

ԱՄՆ-ում գոյութեան ունեն արագացված ամորտիզացիայի օրենքեր, որոնք համառոտ կապիտալիստներին թույլ է տրվում մեքենաների և սարքավորումների արժեքի գաղտնի տեղեր գործ գրել որպես ամորտիզացիոն ֆոնդ: Հարկ է նկատի առնելու և այն հակառակն, որ արագացված ամորտիզացիան կապիտալիստներին թույլ է տալիս ամորտիզացիոն ֆոնդը մտցնել շահութեան հոկուսական գումարներ, դրանց թողնել և այդպիսով ապավել մեծ հարկումներից:

Աստիճանաբար աճում է ամորտիզացիոն հատկացումների բաժինը կապիտալ ներդրումներում, որը կապված է հիմնական կապիտալի պտուտի արագացման հետ: Հետեւանք լինում է այն, որ փոփոխվում են աշխատանքի միջոցների փոխարինման և մոդեռնացման ու արտագրական հզորութեաների ընդլայնման համար ծախսումների հարաբերութեանները: Արտագրական հզորութեաների ընդլայնումը նոր շինարարութեան միջոցով ավելի ու ավելի շատ տեղի է ունենում ի հաշիվ ամորտիզացիոն հատկացումների:

Գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում հիմնական կապիտալը մեծանում է շքշքանաուից ավելի արագ: Առավել արագ աճում է հիմնական կապիտալի այն մասը, որը վերաբերվում է նրա ակտիվ տարրերին, որի անփոփոխելից հետեւանք բունվոր գտնադրույից շահագործման աստիճանի բարձրացումն է, բանվորների զգալի մասի արտադրութեան ոլորտից արտառիզը:

Հիմնական կապիտալի արագ աճիժացումն ազդում է հասարակական արտադրութեան աճի տեմպերի վրա: Առավել արագ տեմպերով զարգանում են նրա նոր, առաջատար ճյուղերը: Հիմնական կապիտալի չափերի մեծացման համընթաց արդյունաբերական կապիտալը կորցնում է իր մանկայնութեանը, պարաների մեծ տեսակի արտադրութեանից ապրանքների ուրիշ տեսակների արտադրութեան կապիտալի փոխարինելու հնարավորութեանը: Գծվարանում է կապիտալի փոխտրումը մի ճյուղից մյուսը: Այս բուրբ ավելի է սրում արտադրութեան կապիտալիստական լեզանկի հակասութեանները:

կապիտալի պտույտի
ժամանակը և նրա
բազկացուցչի մասերը

Կապիտալի պտույտի ժամանակը, դա այն ժա-
մանակն է, որի ընթացքում ամբողջ ավանսա-
վորված կապիտալն անցնում է արտադրության
պրոցեսը և շրջանառության ոլորտը: Կապիտալի
պտույտի տևականության վրա, բացի արտադրողական կապիտալի կազ-
մից, կապիտալը կազմում են արտադրության ժամանակը և շրջանառության
ժամանակը:

Արտադրության ժամանակը դա այն ժամանակն է, որի ընթացքում
կապիտալը գտնվում է արտադրության ոլորտում: Այն իր մեջ ընդգր-
կում է. նախ, աշխատանքի առարկայի վրա անմիջականորեն ներգոր-
ծության ժամանակը, երկրորդ, աշխատանքի առարկայի վրա քրոնոսյան
ուժերի ներգործության ժամանակը, ինչպես նաև արտադրության պրո-
ցեսում ընդհատումների՝ կապված արտադրության տեխնոլոգիայի հետ
ճրտորդ, արտադրական պայտերների ձևով արտադրողական կապիտալի
գտնվելու ժամանակը:

Այն ժամանակը, որի ընթացքում իրականացվում է բանվորի ան-
միջական ներգործությունը աշխատանքի առարկայի վրա, կազմում է մի
աշխատանքային ժամանակաշրջանը: Այն իրենից ներկայացնում է մի
ժամանակ, պրոկազմված է հաջորդական և միմյանց հետ կապված աշ-
խատանքային օրերից, որոնք սահմանվում են տվյալ էությունում միանգա-
ման պատրաստի արդյունք պատրաստելու համար: Հենց աշխատան-
քային ժամանակաշրջանում են ստեղծվում արժեքը և հավելյալ արժեքը:

Աշխատանքային ժամանակաշրջանի տեղումնումն ազդում է
ավանսավորված կապիտալի պտույտի արագության և մեծության վրա:
Մթաճան փոքր է աշխատանքային ժամանակաշրջանը, այնքան արագ է
պտույտը զործում կապիտալը, հետևաբար, այնքան թիչ կապիտալ պետք
է ծախսվել արտադրությունում: Կապիտալի պտույտն արագացնելու հա-
մար կապիտալիստները ձգտում են կրճատել աշխատանքային ժամա-
նակաշրջանը աշխատանքի ինտենսիվությունը բարձրացնելու, բազմա-
նրթ աշխատանք մտցնելու, զանազան տեսակի տեխնիկական բնույթի
կատարելագործումների կիրառելու և այլն միջոցներով:

Արտադրության ժամանակը կրճատվում է նաև արտադրությունում
քնական պրոցեսների արագացման շնորհիվ: Հաշվեն է, որ քիմիական
արտադրության մեջ, օրինակ, հարկավոր է ժամանակ թիմիական օժան-
ցիաների համար: Փայտամշակման արդյունաբերությունում ժամանակ
է պահանջվում փայտանյութի շրջանում համար, բուսաբանության մեջ
գյուղային ունի երկարատև փոխանցման շրջան: Արտադրության զար-
գացման արդի մակարդակի, քիմիայի, կենսաբանության և այլ առար-
կեղներում ձևեր բերված խոշոր նվաճումները մույլ են առաջ արդյու-
նաբերական արտադրության մեջ խիստ կրճատել քնական պրոցեսների

համար ծախսվող ժամանակը, դրանք ինտենսիֆիկացնել, որն արա-
ցացնում է կապիտալի պտույտը:

Արտադրության ժամանակ է համարվում նաև այն ժամանակը, որի
ընթացքում արտադրության պրոցեսն այս կամ այն պատճառով դադա-
րեցվում է, առաջանում են պարապրոցներ: Այդ պարապրոցները հա-
ճախ առաջ են գալիս ձեռնարկությունների ֆերմաներարներնաժամույ-
նից, իրացման պրոցեսի սրումից, զործադրվելից և այլն: Վերսպան, արտադրության
ժամանակը իր մեջ ընդգրկում է այն ժամանակը, որի
ընթացքում արտադրության միջոցները, իրեն պայար, գտնվում են պա-
հասեցումում, որոնք անհրաժեշտ են վերարտադրության պրոցեսի նոր-
մալ ընթացքն ապահովելու համար: Այդ պայաններն իրենցից ներկա-
յացնում են պատենցիալ արտադրողական կապիտալ:

Կապիտալի պտույտի տեղումնումն պետք է մեծ ներգործություն ունի
շրջանառության ժամանակը, այսինքն այն ժամանակը, որի ընթացքում
կապիտալը գտնվում է շրջանառության ոլորտում: Արտադրության առ-
բեր շուկայում այն առարկա է և կազմվում է սպրանքը արտադրողից
սպասարկի փոխարժեքն ժամանակից, սպասարկային պաշտպանի պահ-
ման ժամանակից, զարտատրի սպրանքների վաճառքի ժամանակից,
արտադրության միջոցների և աշխատանքի գնումն ժամանակից:

Արտադրած սպրանքների իրացումը կապիտալիստների համար
ավելի բարդ զործ է, քան արտադրության միջոցների գնումը: Վաճառքի
ժամանակի տեղումնումն կախված է կապի և արևանպարտի միջոցների
զործացման առարկանից, շուկայական կոնյունկտուրայից, վաճառքի
շուկայի հետազոտությունից, աշխատավորների գեոդակալությունից,
կապիտալիստի մրցունակությունից և այլն:

Կապիտալի մի զարգացմանը համընթաց, շնայած այն բանին, որ
կապիտալիստական շուկայի տարողությունն ընդլայնվում է (պետական
գնումների մեծացման, սպասարկի վաճառքի՝ սպասարկական վարկի մե-
ծացման և այլնի կապակցությամբ), ապրանքների իրացման դժվարու-
թյունները մեծանում են: Կապիտալի պն մասը, որը հանդես է գալիս
սպասարկային ձևով, մեծանում է: Դրա հետ միաժամանակ աճում է նաև
կապիտալի այն մասը, որը ծախսվում է արևանպարտի, կապի միջոց-
ների, պահեստային շինությունների և այլնի օգտագործման համար:

Կապիտալի պտույտի տեղումնումն պետք է նաև այն, որ
կապիտալի ինչ-որ մասը իր շրջապտույտի պրոցեսում պարբերաբար
ազատվում է, գտնվում է ժամանակավորապես ազատ զրամական կա-
պիտալի ձևով, որը կուտակվում է իրեն գնումների կամ վաճառումների
համար նախապես ուղղվելիքին: Փոխարեն երկարացնում է կապիտալի ընդ-
հանուր շրջանառությունը: Վարկային սխառմի զարգացմամբ մի կոն-
կրկությունում ժամանակավորապես ազատվող զրամական կապիտալը

բանկերի միջոցով օգտագործվում է այլ ձևերնապիջուններում:

Շրջանառության ժամանակի կրճատումը պայմանավորում է նրա ոլորտում զբաղված կապիտալի փոքրացումը և նախադրյալներ է ստեղծում արտադրական ոլորտում, կապիտալի մեծացման համար, իսկ հետևաբար, նաև հավելյալ արժեքի սեփական համար:

Ավանսավորված կապիտալի ընդհանուր պտույտը գոյանում է իբրև միջինը՝ հիմնական կապիտալի պտույտներից: Հիմնական կապիտալի զանազան տարրերը տարրեր երկարակեցություն ունեն և այդ պատճառով էլ պտույտ գործում են ու միևնույն ժամանակաշրջանում: Հիմնական կապիտալի պտույտի ժամանակի տևողությունը, կամ նրա վերադարձագրության ժամանակը, պայմանավորում է ամբողջ ավանսավորված կապիտալի պտույտի ցիկլը:

Շրջանառու կապիտալը լրիվ պտույտ է գործում յուրաքանչյուր շրջապտույտում, և նրա պտույտի տևողությունը այլ հավասար պայմաններում որոշվում է արդյունքի արտադրության և իրացման ժամանակի տևողությունը: Տեքստիլ արդյունաբերության մեջ, օրինակ, շրջանառու կապիտալի պտույտի ժամանակը կախված է զյևակորագլան ապրանքային արտադրության իրացման արագությունից: Իսկ նավաշինության մեջ ժամանակը շախազանց երկարատև է համեմատաբար երկարատև աշխատանքային ժամանակաշրջանի հետևանքով:

Կապիտալի իրական պտույտն իրենից ներկայացնում է նրա բոլոր բաղկացուցիչ մասերի փոխճառագույն, ինչպես արժեքի տեսակետից, այնպես էլ, բնա-իրային կազմով: Գործնականում կապիտալի պտույտը արժեքի տեսակետից ավելի արագ է աճիչ ունենում, քան նրա հատուցումը բնա-իրային ձևով: Բնա-իրային ձևով կապիտալի փոխճառագույն ճան համար անհրաժեշտ է կապիտալի մի քանի պտույտ ըստ արժեքի: Այդ պատճառով էլ կապիտալի իրական պտույտը որոշում է կապիտալի պտույտների իրար հետ կապված ցիկլը: Այն արագացվում է արտադրության մեջ գիտական հայտնագործությունների և տեխնիկական գյուտերի կիրառման հետևանքով:

§ 8. Փոփոխում կապիտալի պտույտը և նրա ազդեցությունը հավելյալ արժեքի տարեկան մասսայի և նորմալի վրա

Փոփոխում կապիտալի իր պտույտի եղանակով վերաբերում է շրջանառու կապիտալին: Սակայն փոփոխում կապիտալի պտույտն ունի իր առանձնահատկությունները: Ի տարբերություն շրջանառու կապիտալի մյուս մասերի, աշխատուժի գլխի համար ավանսավորված շրջանառու կապիտալի մի մասը արդյունքին չի փոխանցվում, այլ վերա-

դարձվում է կրկին, անկող հավելյալ արժեքի մեծության շախազ: Այդ պատճառով շրջանառության փոշում իրացվում է ոչ թե ավանսավորված փոփոխում կապիտալը, այլ նոր արժեքը: Արտադրված ապրանքների վաճառքի ժամանակ նախկինում ավանսավորված փոփոխում կապիտալը փոխճառագույն կոր արժեքը փողային ձև է ընդունում և կրկին ավանսավորվում է աշխատուժի գլխի մեծամասնությամբ:

Փոփոխում կապիտալի պտույտի արագությունից կախված են հավելյալ արժեքի տարեկան մասսան և տարեկան նորման: Այն տարվա ընթացքում արտադրված հավելյալ արժեքի գումարը, այս կամ այն փոփոխում կապիտալի զեկպում, կազմում է հավելյալ արժեքի տարեկան մասսան:

Մեկ տարվա ընթացքում ստացված հավելյալ արժեքի մասսայի հարաբերությունը ավանսավորված փոփոխում կապիտալին կազմում է հավելյալ արժեքի տարեկան նորման: Այն հավասար է փոփոխում կապիտալի մեկ պտույտի ժամանակ ստացված հավելյալ արժեքի նորման ընդամաստեղված մեկ տարում նրա գործած պտույտների թվին:

Որքան արագ է շրջանառության կտատումը փոփոխում կապիտալը, այնքան մեծ է կապիտալիտաների կոզիցից յուրացվող հավելյալ արժեքը:

Նկատարենք, որ գոյություն ունեն միևնույն փոփոխում կապիտալ (5 հազարակոտ զրպար) ունեցող երկու մեծարկություն, որոնցում շահագործման նորման 100% է: Բայց սակայն կապիտալիտանի մաս փոփոխում կապիտալը տարեկան գործում է 12 պտույտ, իսկ երկրորդի մաս միայն մեկ պտույտ: Առաջին կապիտալիտար տարվա ընթացքում կտանան 60 հազ. զրպար հավելյալ արժեք (5000×12), իսկ երկրորդը՝ միայն 5 հազ. զրպար: Թա կազդեցություն նաև հավելյալ արժեքի տարեկան նորմալի վրա: Առաջին զեկպում աչե կկազմի 1200%, $\left(\frac{6000}{5000} \times 100\right)$, իսկ երկրորդում՝ 100%, $\left(\frac{5000}{5000} \times 100\right)$: Հավելյալ արժեքի տարեկան մասսայի և տարեկան նորմայի այդ հարաբերությունը բացարձակ է նրանով, որ առաջին մեծարկափորջ ավանսավորված փոփոխում կապիտալը պտույտում է ավելի արագ:

Այն փաստը, որ միևնույն մեծությունն ունեցող ավանսավորված փոփոխական կապիտալները պտույտի տարբեր արագությունների զեկպում բերում են հավելյալ արժեքի տարբեր տարեկան մասսա և տարեկան նորմա, օգտագործվում է բուրժուական անտեսագիտության կողմից պնդելու, թե իբր հավելյալ արժեքը առաջանում է շրջանառությանից, թե իբրև նրա առաջացումը առկա է ունենում շրջանառության ոլորտում: Սակայն նման պնդումների ամբողջ անհեթեթությունը ակնհայտ է գտնում տարվա ընթացքում ավանսավորված և իրքը կիրառված փոփոխում կապիտալի սահմանազատումով:

Ավանսավորված փոփոխում կապիտալը դա այն կապիտալն է, որն օգտագործվում է տարվա ընթացքում բանվորներին աշխատավարձ վճարելու համար: Իրականում կիրառված փոփոխում կապիտալը կարող է գերազանցել ավանսավորված փոփոխում կապիտալը, եթե վերջինս մի քանի պտույտ է գործում տարվա ընթացքում:

Մեր օրինակում առաջին ձևափոխության ավանսավորված կապիտալը տարվա ընթացքում կառաքեց 12 պտույտ: Հետագայում, երբ կողմից իրականում կիրառված փոփոխում կապիտալը տարվա ընթացքում կազմել է 60 հազ. դոլար (5000×12): Այդ պատճառով էլ առաջին կապիտալիստի կողմից լավագործվող բանվորների թիվը 12 անգամ ավելի մեծ է, քան երկրորդ կապիտալիստի կողմից շահագործվող բանվորների թիվը:

Հավելյալ արժեքի շրջանառության վերլուծությունը ցույց է տալիս, որ նախապես ավանսավորված անհատական կապիտալի մասան նամբոզը: Մյուսն ավելի արագ է պտույտ գործում հավելյալ արժեքը, այնքան ավելի հաճախ է նոր կապիտալի գոյացում աեղի ուենենում: Քանն այն է, որ կապիտալի պտույտի արագության մեծացումը բարձրացնում է հավելյալ արժեքի տարեկան նորման, արագացնում զրա արտադրության պրոցեսը: Սակայն իրացված ոչ ամբողջ հավելյալ արժեքն է այնուհետև միանգամից վերածվում արտադրողական կապիտալի: Հավելյալ արժեքի մի մասի արտադրողական կապիտալի վերածման հետ մեկտեղ նրա որոշ մասը կուտակվում է իրեն թարմված փողային կապիտալ, որը հետագայում, երբ այն հասնի որոշակի մեծության, կկարողանա գործել որպես լրացուցիչ ակտիվ կապիտալ:

Այսպիսով, կապիտալի շրջանառության վերլուծությունը ցույց է տալիս, որ կապիտալի պտույտի արագության վրա ուղղակի կամ անուղղակի կերպով ազդող բոլոր գործոնները միևնույն ժամանակ հանդիսանում են բանվոր դասակարգի շահագործումն ուժեղացնող գործոններ:

Կապիտալի շրջապտույտի և պտույտի ուսումնասիրությունը թույլ է տալիս հասկանալու, թե ինչու է բոստոնացիայի գասակարգի կազմում ձևավորվում կապիտալիստների երեք խումբ. արզունաբերական, առևտրական և վարկային: Փողային, արտադրողական և ազդունային կապիտալները արզունաբերական կապիտալի շարժման պրոցեսում կատարելով գլանական ֆունկցիաներ, կարող են առանձնանալ կապիտալի ինքնուրույն աեաակներին: Կապիտալիստական արտադրության զարգացումը, առավելագույն հավելյալ արժեք ստանալու կապիտալիստների Ապտոմեր այգպիտի առանձնացումն աեխուսափելի են զարձնում: Համապատասխանաբար էլ հավելյալ արժեք իրացման պրոցեսում այնպիսի կոնկրետ ձևեր է ընդունում, ինչպես արզունաբերական շահույթն է, առևտրային շահույթը, փոխառվական սուկուրը: Հետևապես, կապիտալիստների բոլոր երեք խմբերն էլ մասնակցում են արտադրության պրոցեսում աեղծվող հավելյալ արժեքի բաշխմանը: Բացի այդ, կապիտալիստները հարկադրված են հավելյալ արժեքի մի մասը դիելու: Տեղի սեփականատերերին հողային սեխուսայի ձևով, հավելյալ արժեքի այդ մասում իրականացվում է նրանց միջև կատաղի մրցակցային պայքարի ընթացքում: Տվյալ դիսում պարզվում են արզունաբերական կապիտալիստների միջև հավելյալ արժեքի բաշխման օրենքներն ու մեխանիզմը:

§ 1. Հավելյալ արժեքի փոխակերպումը շահույթի

36 Արժեքը և արտադրողական կապիտալիստական ծախսերը կապիտալիստական ձևափոխությունում արտադրված յուրաքանչյուր սպրանքի արժեքը (W) բաշկացած է արտադրության միջոցների փոխանցված արժեքից (C), որն իր մեջ մարմնավորում է նախկին աշխատանքի ծախսումները և նոր ստեղծված արժեքից

($V+III$), որի մի մասը աշխատուժի արժեքի (V) վերաբերող լած համարժեքն է կազմում, իսկ մյուս մասը՝ հավելյալ արժեքը (III)։ Ապրանքի արժեքի մեծությունն արտահայտվում է՝ $W=c+v+III$ ֆորմուլայով։ Ապրանքի արժեքի արժեքի արտացոլում է նրա արտադրության համար հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի ըրտր ծախսումները և դրանով իսկ ցույց է տալիս, թե հասարակությանը ինչ է նստել այդ ապրանքի պատրաստումը։ Սակայն այն, ինչ ապրանքը նստել է կապիտալիստին, չափվում է նրա կապիտալի ծախսումներով։ Ապրանք արտադրելու համար կապիտալիստը պետք է ծախսի հաստատուն և փոփոխուն կապիտալ։ Կապիտալի այդ ծախսումներն էլ հենց կապիտալիստի համար կազմում են արտադրական ծախսերը։ Գրանց մեջ, բնական է, որ չի մտնում հավելյալ արժեքը, որն ստեղծվել է վարձու բանվորների հավելյալ աշխատանքով։ Հետևաբար, կապիտալիստական արտադրական ծախսերն իրենցից ներկայացնում են ապրանքի արժեքի մի մասը, որը հավասար է նրա պտուղատման համար ծախսված հաստատուն և փոփոխուն կապիտալի գումարին։ Եթե արտադրական ծախսերը նշանակել K -ով, ապա $K=c+v+III$ ։

Ապրանքի արժեքը՝ $W=(c+v)+III$ ֆորմուլայով արտահայտված, այժմ կարող է ներկայացվել հետևյալ տեսքով՝ $K+III$, այսինքն ապրանքային արժեքը հավասար է արտադրական ծախսերին պլյուս հավելյալ արժեքը։ Այդպիսով, ապրանքների արտադրության համար հասարակության ծախսերը ($c+v+III$) և կապիտալիստի ծախսերը ($c+v$) իրենց մեծությամբ, տարբեր են։ Այն, ինչ արժե ապրանքը կապիտալիստների համար, և այն ինչ արժե ապրանքի բուն արտադրությունը, դա համեմանի զեպա երկու միասնական տարբեր մեծություններ են։ Այն, ինչ արժե ապրանքը կապիտալիստի համար, սլափվում է կապիտալի ծախսումներով։ Են, ինչ ապրանքն արժե իրականում՝ աշխատանքի ծախսումներով։ Այդ պատճառով էլ ապրանքի կապիտալիստական արտադրական ծախսերը քանակապես տարբերվում են նրա արժեքից, կամ նրա իրական արտադրական ծախսերից...¹։

Կապիտալիստական արտադրական ծախսերի և ապրանքի արժեքի միջև քանակական հարաբերությունը արտացոլում է նաև նրանց միջև դրույթյուն ունեցող որակական տարբերությունները, քանի որ ապրանքի արժեքի բաղկացուցիչ մաս է կազմում հավելյալ արժեքը՝ կապիտալիստական շահագործման արդյունքը, որի ստեղծումը կապիտալիստի համար ոչինչ չի արժենում։ Այն չի մտնում կապիտալիստական արտադրական ծախսերի մեջ և կապիտալիստի կողմից յուրացվում է անհատապես։

Արտադրական ծախսերը չի կարելի նույնացնել ամբողջ ավանսավորված կապիտալի հետ։ Ճիշտ ժամանակաշրջանի ընթացքում ապրանքի արտադրական ծախսերի մեջ մտնում է ավանսավորված կապիտալի միայն այն մասը, որը համապատասխանում է նրա ամորալիզացիայի գումարին տվյալ ժամանակաշրջանում։ Եթե ավանսավորված շրջանառու կապիտալը տվյալ ժամանակաշրջանում (օրինակ, մեկ տարում) կատարում է մի քանի պտույտ, ապա արտադրական ծախսերի մեջ կմտցվի այն գումարը, որը հավասար կլինի այդ կապիտալի մեծության և մեկ տարվա ընթացքում նրա պտույտների թվի արտադրյալին։

Արտադրական ծախսերի և ավանսավորված կապիտալի միջև քանակային տարբերությունը մասնաձևափոխել կարելի է արտահայտել հետևյալ կերպ։

Ավանսավորված կապիտալը (V ավ) հավասար է ավանսավորված հիմնական կապիտալի (H հիմ) և ավանսավորված շրջանառու կապիտալի (U շրջ) գումարին, այսինքն

$$V_{ավ} = H_{հիմ} + U_{շրջ}$$

Իսկ արտադրական ծախսերը (K) կազմվում են, նախ ավանսավորված հիմնական կապիտալի (H հիմ) մեծության և ամորալիզացիայի նորոժոյի ($Ա$) արտադրյալից և երկրորդ, ավանսավորվող շրջանառու կապիտալի (U շրջ) մեծության և տարվա ընթացքում նրա պտույտների ($Ո$) թվի արտադրյալից, այսինքն.

$$K = H_{հիմ} \times Ա + U_{շրջ} \times Ո$$

Ընդունել, որ ավանսավորված կապիտալի ընդհանուր գումարը կազմում է 100 հազ. զրաբ, այդ թվում հիմնականը՝ 70 հազ. զրաբ և շրջանառու՝ 30 հազ. զրաբ, ներառյալ փոփոխուն կապիտալը 10 հազ. զրաբ չափով, 10%-ի ամորալիզացիոն նորոժոյի զեղքում արտադրական ծախսերի մեջ տարվա ընթացքում կմտցվեն հիմնական կապիտալի մաշվածքը 7 հազ. զրաբ չափով $\left(\frac{70000 \cdot 10}{100}\right)$ ։ Տարվա մեջ շրջանառու կապիտալի երեք պտույտի զեղքում այդ ծախսերի մեջ կմտնեն նա 30 հազ. զրաբ (30000×3)։ Այդպիսով, ապրանքների արտադրության տարեկան ծախսերի ընդհանուր գումարը կկազմի 97 հազ. զրաբ։ Պայմանականորեն հավելյալ արժեքի նորման ընդունելը հավասար 100%-ի։ Այդ զեղքում հավելյալ արժեքի տարեկան ժառանգ կկազմի 30 հազ. զրաբ $\left(\frac{100000 \cdot 100 \cdot 3}{100}\right)$ ։ Այդ զեղքում մեկ տարվա ընթացքում արտադրված ապրանքային ժառանգի արժեքը հավասար կլինի 127 հազ. զրաբ ($97000 + 30000$)։

Կապիտալիստական արտադրական ծախսերի կատեգորիան արտահայտում է բուրժուական հասարակության իրական անտեսական հարաբերությունները։ Ապրանքի արժեքի մի մասն առանձնացում է արտադրական ծախսերի մեծով, ապրանքի արտադրության և շրջանառության

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 25, ч. 1, стр. 30

Ճեղ մշտապես կրկնվող երևույթ է Կապիտալիստի կողմից պարանքների իրացումից ստացված միջոցների մի մասը պարտադիր կերպով զեռում է արտադրական ծախքերի փոխհատուցմանը, քանի որ արտադրության վերականգնման հատարումն ապագա անհրաժեշտ է կրկին ձևաքրեկել արտադրության միջոցների և աշխատուժի:

Կապիտալիստական արտադրական ծախքերի կատեգորիայի իրական ինչևիդ նաև նրանով է արտահայտվում, որ դրանք որոշում են ապրանքի վաճառքային գնի նվազագույն սահմանը: Եթե ապրանքների գները սահմանվում են այդ մակարդակից ցած, ապա չլին հատուցվի նույնիսկ կապիտալի ծախքերը: Սակայն պարանքի արտադրական ծախքերի և նրա արժեքի միջև ընկած սահմանում Շեարափոր են ապրանքը շահույթով իրացնելու տարրեր մակարդակի մի շարք վաճառագներ:

Ենթադրենք, որ ապրանքի արժեքը կազմում է 800 դոլար, իսկ արտադրական ծախքերը՝ 700 դոլար: Ի՞նչ այլ տարբեր գնաձևով 700, 730, 770, 780 դոլարով, սպասել կերպով իր արժեքի համապատասխանար 10, 20, 30, 40 դոլարով ցածը գնում Ապրանքի վաճառքի կտեսցվի շահույթ համապատասխանաբար 20, 30, 70 և 80 դոլարի շտիպ:

նորդավորելով ապրանքների իրացումը, դա նորից վերադառնում է այն
կապիտալիստներին, որոնք շրջանառության մեջ էին գրել այն.

2) շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակը զգալիորեն
լրակատ է իրացվող տարեկան արտադրանքի արժեքից, քանի որ փողի
յուրաքանչյուր միավոր տարեկան կատարում է մի քանի պտույտ:

§ 3. Իրացման պայմանները կապիտալիստական ընդլայնված վերարտադրության ժամանակ

Ընդլայնված վերարտադրության հաստատությունը

Ընդլայնված վերարտադրության ժամանակ I ստորարժամանակ արտադրանքը պետք է ոչ միայն փոխհատուցի սպառված հաստատուն կապիտալը, այլ, բացի դրանից, իր մեջ պարունակի արտադրության լրացուցիչ միջոցներ, որոնք հատկացված են երկու ստորարժամանակների հաստատուն կապիտալը մեծացնելու համար: Այստեղից հետևում է, որ ընդլայնված վերարտադրության ժամանակ $IW > Ic + IIc$:

Գրա հետ մեկտեղ ընդլայնված վերարտադրության ժամանակ չի կարող պահպանվել $I(v+m) = IIc$ հավասարությունը, որը պարտադիր պայմար է I ստորարժամանակի համար: Բանն այն է, որ ընդլայնված վերարտադրության ժամանակ հավելյալ արժեքը կապիտալիստի անձնական սպառման նպատակների համար օգտագործվում է ոչ լրիվ չափով, նա բաժանվում է կապիտալիստի անձնական սպառման մասի (m_n) և կապիտալացվող մասի (m_k): Իր հերթին, հավելյալ արժեքի կապիտալացվող մասը (m_k) բաժանվում է լրացուցիչ հաստատուն կապիտալի (Δc) և լրացուցիչ փոփոխուն կապիտալի (Δv): I ստորարժամանակ կապիտալացվող հավելյալ արժեքի մի մասը, որը վերաժգում է այդ ստորարժամանակի լրացուցիչ հաստատուն կապիտալի, մնում է նրա ներսում և չի կարող իրացվել II ստորարժամանակի հետ փոխանակման կարգով: Հետևաբար, ընդլայնված վերարտադրությունը $I(v+m) = IIc$ հավասարության փոխարեն ենթադրում է $I(v+m) > IIc$ անհավասարությունը:

Վերապահեա, ընդլայնված վերարտադրության ժամանակ չի կարող լինել և երրորդ հավասարությունը, որը բնորոշ է պարզ վերարտադրության համար, այսինքն՝ $IIW = I(v+m) + II(v+m)$: Բանն այն է, որ ընդլայնված վերարտադրության պայմաններում կապիտալացվող հավելյալ արժեքի մի մասը վերաժգում է լրացուցիչ հաստատուն կապիտալի, այսինքն՝ ծախսվում է արտադրության լրացուցիչ միջոցներ ձեռք բերելու համար և, հետևաբար, չի կարող փոխանակվել անձնական սպառման առարկաների հետ: Ուստի ընդլայնված վերարտադրության նախադրյալներից մեկը $I(v+m) + II(v+m) > IIW$ անհավասարությունն է:

Համաձայնությունները I և II ստորարժամանակների միջև ընդլայնված վերարտադրության ժամանակ

Ընդլայնված վերարտադրության ժամանակ I ստորարժամանակ արտադրանքը ծախսում է I ստորարժամանակ սպառված կապիտալը (Ic) փոխհատուցելու և այդ կապիտալի սեղ ($I\Delta c$) ապահովելու համար, II ստորարժամանակ սպառված հաստատուն կապիտալը

(II c) փոխհատուցելու և այդ նույն կապիտալի սեղ ($II\Delta c$) ապահովելու համար: Այստեղից հետևում է, որ $IW = I(c + \Delta c) + II(c + \Delta c)$, այսինքն՝ I ստորարժամանակ տարեկան արտադրանքի արժեքը հավասար է հաստատված արտադրության երկու ստորարժամանակների սպառված և լրացուցիչ հաստատուն կապիտալի գումարին:

II ստորարժամանակ տարեկան արտադրանքը ընդլայնված վերարտադրության ժամանակ հատկացվում է I ստորարժամանակ նախկինում գրազված և լրացուցիչ բանվորների անձնական սպառման համար՝ $I(v + \Delta v)$, II ստորարժամանակ նախկինում գրազված և լրացուցիչ բանվորների անձնական սպառման համար՝ $II(v + \Delta v)$, երկու ստորարժամանակների կապիտալիստների անձնական սպառման համար ($II m_n + II m_k$): Հետևաբար, $IW = I(v + \Delta v) + II(v + \Delta v) + II m_n + II m_k$, այսինքն՝ II ստորարժամանակ տարեկան արտադրանքի արժեքը հավասար է հաստատված արտադրության նախկինում և լրացուցիչ փոփոխուն կապիտալի և կապիտալիստների կողմից անձնական սպառվող հավելյալ արժեքի գումարին:

Արտադրանքի իրացումը ընդլայնված վերարտադրության ժամանակ սեղի է ունենում հետևյալ կերպ: I ստորարժամանակ ներսում իրացվում է նրա արտադրանքի այն մասը, որը փոխհատուցում է այդ ստորարժամանակի հաստատուն կապիտալը, և նրա այն մասը, որ պահանջվում է նրա հաստատուն կապիտալի սեղի համար, այսինքն՝ $I(c + \Delta c)$: II ստորարժամանակ ներսում իրացվում է նրա արտադրանքի այն մասը, որի հաշվին ապահովվում է նախկինում գրազված բանվորների, լրացուցիչ վարձված բանվորների և իրենց՝ կապիտալիստների անձնական սպառումը, այսինքն՝ $II(v + \Delta v + m_n)$:

I ստորարժամանակ արտադրանքի մնացած մասը, որը գումարական արտահանության հավասար է նախկինում գրազված, լրացուցիչ վարձված բանվորների աշխատավարձի $I(v + \Delta v)$, ինչպիսի նաև կապիտալիստների կողմից անձամբ սպառվող հավելյալ արժեքի մի մասի ($II m_k$) գումարին, չի կարող իրացվել I ստորարժամանակ շրջանակներում, քանի որ արտադրության միջոցները չեն կարող ծառայել բանվորներին ու կապիտալիստներին անձնական պահանջույթները բավարարելու համար: Գրա հետ մեկտեղ, II ստորարժամանակ արտադրանքի մի

մասը, որը դրամական արտահայտությամբ հավասար է նրա նախնական և լրացուցիչ հաստատուն կապիտալի զուամբին $II (c + \Delta c)$, չի կա-
 ռող իրացվել II ստորարժամանակ ներսում, քանի որ անձնական սպա-
 ման ապահովանքը պիտանելի չէն հաստատուն կապիտալը բնականօր փոխ-
 հատուցելու և մեծացնելու համար Արտադրանքի այն մասերը, որնք
 չեն իրացվում յուրաքանչյուր ստորարժամանակ ներսում, իրացվում են
 իրար հետ փոխանակման միջոցով:

Այսպիսով, բնդալանված վերարտադրության ժամանակ հասարակա-
 կան ամբողջական արդյունքի իրացման անհրաժեշտ պայմանը հետևյալ
 հավասարությունն է. $I (v + \Delta v + m_n) = II (c + \Delta c)$, այսինքն՝ I ստոր-
 արժամանակ նախակարգական և լրացուցիչ փոփոխուն կապիտալի և կա-
 պիտալիտանների կողմից սպասվող հավելյալ արժեքի զումարը
 պետ է հավասար լինի II ստորարժամանակ նախակարգական և լրա-
 ցուցիչ հաստատուն կապիտալի զումարին:

Բնդալանված
 վերարտադրության
 սեփական

Հասարակական կապիտալի ընդլայնված վերար-
 արդրության վերլուծւ շարքոված օրինաչափու-
 թյունները կարելի է ցույց տալ հետևյալ թվա-
 կան օրինակով՝ «կապիտալ»-ի II հաստարում

Կ. Մարքսը ընդլայնված վերարտադրության սեփական համար իբրև
 էլակետ վերցրել է հետևյալ մեծությունները.

$$\left. \begin{aligned} I. 4000c + 1000v + 1000m = 6000 \\ II. 1500c + 750v + 750m = 3000 \end{aligned} \right\} = 9000:$$

Ընդումին դայմանականորեն ենթադրվում է, որ I ստորարժամանակ
 հավելյալ արժեքը բաժանվում է երկու հավասար մասերի, որոնցից մե-
 կը ծախսվում է կապիտալիտանների անձնական սպասման համար, իսկ
 մյուսը փոխարկվում է կապիտալի կուտակման համար: Այդ ենթադրու-
 թյան համապատասխան I ստորարժամանակ 1000 m -ն բաժանվում են
 500 m_n -ի և 500 m_n -ի, իսկ այդ ստորարժամանակ կապիտալացվող հա-
 վելելյալ արժեքը (500 m_n), իր հերթին բաժանվում է լրացուցիչ հաստա-
 տուն կապիտալի և լրացուցիչ փոփոխուն կապիտալի՝ 4:1 համամասնու-
 թյամբ, այսինքն՝ 500 m_n -ն արժեքում են 400 c -ի և 100 v -ի:

Այսպիսով, I ստորարժամանակ արտադրանքը արտադրության երկ-
 րորդ տարուց առաջ իր մեջ ընդգրկելու է հետևյալ տարրերը.
 $I (4000 + 400)c + (1000 + 100)v + 500 m_n = 6000$: Այս արտադրանքից
 $4400c$ -ն իրացվում են I ստորարժամանակ ներսում և օդադրոթվում են
 սպասված հաստատուն կապիտալը (4000 c -ն) փոխհատուցելու և այդ
 նույն կապիտալը (400 c -ն) մեծացնելու համար: I ստորարժամանակ
 արտադրանքի մնացած մասը, որը զրամական արտահայտությամբ հա-
 վասար է 1600 (1000 v + 100 v + 500 m_n), չի կարող իրացվել I ստորարա-

ժաման շրջանակներում, քանի որ աշխատուժի վերարտադրության հա-
 մար նախկին և լրացուցիչ վարձված բանվորների համար պահանջվում
 են 1000 v + 100 v զումար անձնական սպասման ապահովանք, իսկ I
 ստորարժամանակ կապիտալիտանների համար անհրաժեշտ են նրանց
 կողմից անձամբ սպասվող հավելյալ արժեքի զումարի (500 m_n) սպա-
 ման ապահովանք, իսկ I ստորարժամանակ արտադրանքը բաղկացած է
 բանվորների և կապիտալիտանների անձնական սպասման համար ոչ պի-
 տանի արտադրության միջոցներից: Ուստի 1600 զրամական միավոր
 զումարի ամլյալ արտադրանքը պետ է իրացվի II ստորարժամանակ
 արտադրանքի հետ փոխանակելու կարգով:

Որպեսզի զա հնարավոր լինի, II ստորարժամանակը պետ է I
 ստորարժամանակը ներկայացնի 1600 զրամական միավորի շափի ար-
 տադրանքի պահանջարկ: Հետևաբար, II ստորարժամանակ կապիտա-
 լիտանները պետ է իրենց հաստատուն կապիտալը 1500 c -ից մեծացնեն
 ու հասցնեն 1600 c -ի: Այլ կերպ ասած, II ստորարժամանակ հավելյալ
 արժեքից 100 զրամական միավոր պետ է օդադրոթվի այդ ստորարա-
 ժամանակ հաստատուն կապիտալը մեծացնելու համար: Քանի որ ենթա-
 դրվում է, որ կապիտալի օդանական կազմը մնում է անփոփոխ (II
 ստորարժամանակ մեջ այն հավասար է 2:1), հաստատուն կապիտալի
 սեղ 100 զրամական միավորով կպահանջի փոփոխուն կապիտալի սեղ
 50 զրամական միավորով: Այդ 50 զրամական միավորը կարելի է վեր-
 ցրելի միայն հավելյալ արժեքից: Իրա հետևանքով II ստորարժաման-
 ակ կապիտալացվող հավելյալ արժեքը կհազմի 150 զրամական միա-
 վոր (100 Δv + 50 Δv), իսկ կապիտալիտանների կողմից անձամբ սպա-
 սվող հավելյալ արժեքը՝ 600 միավոր (750—150):

Եվ այսպես, արտադրության երկրորդ տարվա նախօրյակին II
 ստորարժամանակ արտադրանքը բաղկացած կլինի հետևյալ տարրերից.

$$II. (1500 + 100)c + (750 + 50)v + 600 m_n = 3000,$$

երկու ստորարժամանակների արտադրանքի իրացումը տեղի է ունե-
 կում հետևյալ կերպ: I ստորարժամանակ շրջանակներում իրացվում են
 4400 զրամական միավոր զումարի արտադրության միջոցներ, որոնցից
 4000-ը փոխհատուցում են սպասված հաստատուն կապիտալը, իսկ
 400-ը կազմում են հաստատուն կապիտալի ամբը: II ստորարժամանակ
 ներսում իրացվում են 1400 զրամական միավոր զումարի սպասման
 ապահովանք, որոնցից 750-ը ծախսվում է նախկին բանվորների սպա-
 ման համար, 50-ը՝ լրացուցիչ վարձված բանվորների սպասման և
 600-ը՝ կապիտալիտանների անձնական սպասման համար: I և II ստորա-
 րժամանակների միջև փոխադարձ փոխանակման որոտն են մտնում I
 ստորարժամանակ 1600 (1000 v + 100 Δv + 500 m_n) զումարի արտա-

գրանքը և II ստորաբաժանման նույնպես 1600 (1500c+100 Δc) գումարի արտադրանքը Քանի որ այն մեծությունները համարժեք են, իրար ցույց տեսնալով որ է գտնում:

Արտադրության առաջին տարվա ընթացքում թողարկված արտադրանքի իրացումից հետո արտադրության պրոցեսը վերակազմում է ընդլայնված հիմքի վրա, և երկրորդ տարվա վերջին նրանց արտադրանքը կկազմի (այն ենթադրությամբ, որ հավելյալ արժեքի նորման մնում է անփոփոխ)։

$$\left. \begin{aligned} I. 4400c+1100v+1100m &= 6600 \\ II. 1600c+800v+800m &= 3200 \end{aligned} \right\} = 9800,$$

Ինչպես երևում է սխեմայից, երկրորդ տարվա վերջին, առաջին տարվա համեմատությամբ, I ստորաբաժանման արտադրանքը մեծացել է 600 միավորով, II ստորաբաժանման արտադրանքը՝ 200 միավորով, իսկ հասարակական ամբողջական արդյունքը՝ 800 միավորով:

Ելնելով նույն նախադրյալներից, կարելի կլինեն շարունակել ընդլայնված վերարտադրության սխեման: Ընդլայնված վերարտադրության այն օրինակությունները, որոնք երևան են գալիս առաջին երկու տարիների վերլուծության ժամանակ, գործելու են նաև երեք տարվա, հինգ տարվա ընթացքում և այլն:

Այսպիսով, իրացման օրինակությունները կապիտալիստական ընդլայնված վերարտադրության ժամանակ կարելի է համառոտակի ձևակերպել այսպես.

1. Հասարակական ամբողջական արդյունքի իրացման համար ընդլայնված վերարտադրության ժամանակ անհրաժեշտ են հետևյալ համաժամանությունները.

$$\begin{aligned} IW &= I(c+\Delta c) + II(c+\Delta c), \\ IIW &= I(v+\Delta v+m_0) + II(v+\Delta v+m_0), \\ I &= I(v+\Delta v+m_0) = II(c+\Delta c); \end{aligned}$$

2. Ընդլայնված վերարտադրությունը պահանջում է հասարակական արտադրության երկու ստորաբաժանումների փոխադարձ կապ՝ I ստորաբաժանման առջատար զինքի պայմաններում: Հենց I ստորաբաժանումն է ապահովում ընդլայնված վերարտադրության նյութական բազան, քանի որ նա արտադրության լրացուցիչ միջոցներ է մատակարարում արտադրության բոլոր մշտական մեջ է գտնվում I ստորաբաժանման նյութական արտադրության աճը կախման մեջ է գտնվում I ստորաբաժանման արտադրության աճից: Սակայն I ստորաբաժանումը, իր հերթին, ման արտադրության աճից: Սակայն I ստորաբաժանումը, իր հերթին, իր կարող ընդլայնված վերարտադրության իրականացնել II ստորաբաժանի կարող ընդլայնված վերարտադրության իրականացնել II ստորաբաժանումից մեկուսացած, քանի որ նա իր արտադրանքի մի մասը իրացնում է այն II ստորաբաժանմանը վաճառելու միջոցով և II ստորաբաժանում է այն II ստորաբաժանմանը վաճառելու միջոցով:

Մասնավորապես է պայտման առարկաներ, որոնք ապահովում են բանվորների ու կապիտալիստների անձնական սպասույթ:

3. Կապիտալիստական ընդլայնված վերարտադրությունը պայմանավորում է ներքին շուկայի աճը: Այդ աճը տեղի է ունենում այն պատճառով, որ ընդլայնված վերարտադրության ընթացքում, ա) մեծանում է հաստատուն կապիտալը և, հետևաբար, աճում է արտադրության միջոցների պահանջարկը, բ) մեծանում է փոփոխուն կապիտալը և, հետևաբար, աճում է բանվորների պայտման առարկաների պահանջարկը, գ) մեծանում է երկու ստորաբաժանումների կապիտալիստների կողմից անձնական սպասույթ հավելյալ արժեքը, որի հետևանքով աճում է կապիտալիստների պայտման առարկաների պահանջարկը:

§ 5. Կապիտալիստական արտադրության աճման օրինակափոխությունները

Արտադրության միջոցների արտադրության և կապիտալի օրգանական կազմի բարձրացման րացակառուցության ղեկավարում արտադրությունը երկու ստորաբաժանումներում էլ կանի հավասար տեմպերով: Ռեալ իրականության մեջ տեխնիկան զարգանում է, առաջընթաց է ապրում, իսկ կապիտալի օրգանական կազմը բարձրանում է: Տեխնիկական առաջընթացի պայմաններում արտադրության միջոցների արտադրության սեռույթը զերգաղտնում է սպասման առարկաների արտադրության սեմանը, որը հանդիսանում է ընդլայնված վերարտադրության օրենք: Դա նշանակում է, որ I ստորաբաժանման աճման տեմպերը գերազանցում է II ստորաբաժանման աճման տեմպերին:

Սպասման առարկաների արտադրության համեմատությամբ արտադրության միջոցների արտադրության զերգաղտնող (կամ առավելական) աճման անհրաժեշտությունը բխում է առարկայացած աշխատանքի և կենդանի աշխատանքի միջև եղած հարաբերակցության փոփոխումից: Մեքենական տեխնիկայի զարգացման և աշխատանքի արտադրողականության բարձրացման հետ միասին յուրաքանչյուր ժամ կենդանի աշխատանքին բաժին է ընկնում արտադրության միջոցների մեջ առարկայացած ավելի ու ավելի մեծ քանակությամբ աշխատանք: Որքի խոսքով, արդյունքների արտադրության համար ժախտվող աշխատանքի ընդհանուր քանակի մեջ կենդանի աշխատանքի բաժինը պակասում է, իսկ իրանցիվային աշխատանքի բաժինը աճում: Դա ենթադրում է I ստորաբաժանման ավելի արագ աճում: II ստորաբաժանման համեմատությամբ, Այսպիսով, զարգացող մեքենական տեխնիկայի պայմաններում ընդլայնված վերարտադրության օրենքն է արտադրության միջոցների

արտադրության առաջանցիկ անձամբ սպառման ապրիկաների արտադրության համեմատությամբ:

Ստորաբաժանի գերազանցող անձան ժառն են վկայում, օրինակ, հետևյալ աշխատողները: 1947 թթ. ԱՄՆ-ում արդյունաբերական արտադրների ընդհանուր ծավալները 1447 միլիարդ դոլար էին, իսկ 1948 թ. 140 միլիարդ, ըստ որում ստորաբաժանների արտադրությունը անկ է վաղ մեծացել է 140 միլիարդ, ըստ որում ստորաբաժանների արտադրությունը 224 միլիարդ, նյութերի արտադրությունը՝ 135, իսկ սպառման ապրիկաների արտադրությունը՝ 121 միլիարդ:

Սպառման ապրիկաների արտադրության համեմատությամբ արտադրության միջոցների արտադրության առաջանցիկ անձան օրենքի գործողությունը դրսևորվում է ոչ թե կարճատև ժամանակահատվածներում, այլ երկարատև ժամանակաշրջանների ընթացքում: Չրա հետ մեկտեղ այդ օրենքի զիմ գործում են որչալի գործոնները: I ստորաբաժանան հետ ճյուղերում աշխատանքի արտադրողականությունը բարձրացման մաս ճյուղերում աշխատանքի արտադրողականությունը բարձրացման մաս ճյուղերում հաստատան կապիտալի տարրերի կմանցումը զանգուղանում է կապիտալի օրգանական կազմի անք (որը ետ է մեծում կապիտալի սեխեխկական կազմի անքը) և հաստատասխանաբար զանգուղանում է (բայց չի վերաբերում) I ստորաբաժանի մասնակիցներին արդյուն-նավթու և խնայողաբար օգտագործման հետևանքով նույն այդ ուղղու-թյամբ էլ գործում է արտադրության կապիտալատուրողության ու նյու-թաատուրության ինքնում:

Տեխնիկայի առաջընթացը և հիմնական կապիտալի ավելի արդյու-նավթու օգտագործումը պայմանավորում են արտադրության կապիտա-լատուրողության ինքնումը: Արտադրության կապիտալատուրողությունը բառարոգության ինքնումը: Արտադրության կապիտալատուրողությունը շահվում է թողարկված արտադրանքի արժեքի նկատմամբ հիմնական կապիտալի գումարի ճարարերությամբ: Օրինակ, ԱՄՆ-ում 1929 թ. մշա-կապիտալի գումարի ճարարերությամբ 46,9 ցինտ, իսկ 1963 թ.՝ միայն 23,5 ցինտ: Արտադրության կապիտալատուրողության նվազումը նպաս-տում է I և II ստորաբաժանումներին անձան տեմպերի միջև եղած ճեղք-վածքի կրճատմանը:

Արտադրության նյութատուրողությունը շահվում է արտադրանքի մեկ միավորի պատրաստման համար նյութերի ծախսումով: Արտադրու-թյան արդյունավետության բարձրացման և քանակովում է հումքի և նյու-թերի ծախսումների կրճատմամբ և քանակարժեք նյութերը ավելի կծա-խսելու նյութերով փոխարինելով: Այս բանը ետ որը շահվում կպատմում է I ստորաբաժանան անձան տեմպերի ճարարերական ինքնմանն ու I և II ստորաբաժանումների անձան տեմպերի միջև եղած ճեղքվածքի փոքրացմանը:

Սակայն նշված գործոնները չեն վերացնում արտադրության միջոց-ների արտադրության առաջանցիկ անձան: Օրենքի գործողությունը կառավարված ճարարի վնջում: Հնչյալնված վերարտադրության տեմպերի վրա ազդող կարևոր գործոն է կապիտալիտաական կուտակման անձան կուտակման նորման, այնինքն՝ կապիտալացվող ակճերի մաս ճյուղայ արժեքի բաժինը հավելյալ արժեքի մարող մասատի մեջ, կուտակման նորմայի բարձրացումը, մյուս հա-վասար պայմանների զիցքում, տանում է զիցի լրացուցիչ կապիտալ ներդրումների մեծացում, որը, իր հերթին, պայմանավորում է արտա-դրության անձան տեմպերի ավելացումը:

Այս դրույվունը ցույց տանը հետևյալ օրինակով: Ընթացողները, թե հասարակական ամբողջական արդյունի արժեքը արտադրության առա-ջին տարվա վերջին կազմում է (մյուր ցու.) $450c + 50v + 100m = 600$; Ինքնոր, թե կապիտալի օրգանական կազմը մեծում է անփոխելու, իսկ կա-պիտալիտական կուտակման նորման հավասար է առաջին ղեկարում 50 տեղոսի, երկրորդ ղեկարում՝ 60 տեղոսի: Այդ ժամանակ առաջին ղեկարում կապիտալացվող հավելյալ արժեքի կազմը 50 m ($45\Delta c + 5\Delta v$), իսկ երկրորդ ղեկարում՝ 60 m ($54\Delta c + 6\Delta v$): Հասարակական արդյուն-քի արժեքը արտադրության երկրորդ տարվա ավարտին կհասնի առա-ջին ղեկարում՝ $495c + 55v + 110m = 660$, իսկ երկրորդ ղեկարում՝ $504c + 56v + 112m = 672$, Հետևաբար, արտադրության անի տարեկան տեմպը կկազմի առաջին ղեկարում 10 տեղոս, երկրորդում՝ 12 տեղոս: Այսպիսով, ուրեմն ավելի մեծ է կապիտալիտաական կուտակման նորման, այնինքն ավելի բարձր է հասարակական ամբողջական արդյունքի անձան տեմպը:

Ինչ վերաբերում է կուտակման բուն նորմային, ապա այն կախված է շատ հանգամանքներից, այդ թվում պարզությունին պայման չարի-րից, որի համար կապիտալիտաները ծախսում են հավելյալ արժեքի էլանակալի մասը (որքան ավելի մեծ է անարտադրողաբար սպառվող հավելյալ արժեքի բաժինը, այնքան ավելի փոքր է կուտակման նոր-ման), մրցապայքարի արտվյունից, որը կապիտալիտաներին ճրքում է ունեղանելու կապիտալի կուտակումը, պարանքների իրացման հեռա-եկարներից (որքան ավելի վառ են այդ հեռաեկարները, այնքան փոքր է կուտակման նորման):

Վ. Բ. Լենինը մեծ ավանդ ներդրեց վերարտա-դրության մարքայան տեսության հետագա զար-գացման և այդ տեսությունը սերիոզիան ենթար-կելու և խեղաթյուրելու փորճերի պաշտպանելու գործում: Կապիտալիտական վերարտադրության հարցերին Վ. Բ. Լենինը մեծ ուշադրություն է նվիրել իր շատ աշխատու-թյուններում, հատկապես՝ «Այսպես կուլված շուկաների ճարքի ատթվով»

Քյանք, ապա բոլոր ժամավոր տեղափոխումներում յուրացանչուր զբաղվածի մեկ ժամ-
վա արտադրանքը 1950—1969 թթ. ապիլայնի է 74 տոկոսով:

Ազգային կեանտի ✓ Ազգային կեանտի բաշխումը կապիտալիզմի
բաշխումը, օգտաբաշ-
խումը և զեղազորումը որով բնորոշվում է հետևյալ հիմնական գծերով.

առաջին, այլ բաշխման անուսպնիտական
բնույթով, քան որ ազգային կեանտուր բաժանվում է ամենից առաջ
աշխատավարձի, որ ստանում է վարձու բանվորների դասակարգը, և
հավելյալ արժեքի, որ յուրացնում են շահագործող դասակարգերը՝ կա-
պիտալիստներն ու Նոդատերերը. երկրորդ, կեանտուների բաշխման
աննպատակաբարձ անմամբ, որը արտահայտվում է ազգային կեանտի
մեջ բանվոր դասակարգի բաժնի նվազմամբ և բուրժուազիայի բաժնի
մեծացմամբ. երրորդ, ազգային կեանտի առավել մեծ բաժնի համար
առարկե շահագործող դասակարգերի ու խմբերի միջև մղվող պայքարով:
Այս պայքարը կապված է այն բանի հետ, որ հավելյալ արժեքը բաշխ-
վում է արդյունաբերական շահույթի, առևտրական շահույթի, փոխա-
ավական տոկոսի, Նոդային տեղումի: Հավելյալ արժեքի այս բոլոր տե-
ականերն ստացողները ձգտում են յուրացնել նրա Ներառվորին շափ
ավելի մեծ մասը:

Ազգային կեանտուր վերաբաշխելու ժամանակ երկնական (առաջ-
նային) կեանտուների մի մասի հաշվին, որանց թվին են պատկանում
աշխատավարձը, շահույթը և ռենտան, ձեռնարկվում են անհնցյալ
(եղբորդական) կեանտուները: Գրանց թվին են պատկանում ոչ արտա-
գրական ոլորտում զբաղված անձանց կեանտուները, ինչպես նաև պե-
տական բյուջեի կեանտուները (Անանցյալ կեանտուների զիսավոր ազ-
բյուրներից է ոչ արտադրական ոլորտի աշխատողների ծառայություն-
ները վարձատրությունը: Օրինակ, փաստաբանի կամ բժշկի Նտորաբը
գանձվում է բանվորների աշխատավարձից, կապիտալիստների շահույ-
թից կամ Նոդատերերի տեղումից՝ Նայած, թե ով է դիմում նրանց ծա-
այությունը և ով է վճարում այն:

Ազգային կեանտի վերաբաշխման զործում կարևոր դեր է կատա-
րում պետական բյուջեն: Հարկերի, փոխառությունների և ինֆլյացիայի
միջոցով բուրժուական պետությունը իր բյուջեի օգտին գանձում է
պետությունից, առաջին հերթին աշխատավոր զանգվածների, կեանտու-
ների մի մասը: Մյուս կողմից, պետական բյուջեի նամար մորիխից
վող միջոցներն մի մասը պետական ծախսերի միջոցով անցնում է
պաշտոնյաների, զինծառայողների, պետական մասակարարողների և
այլոց ձեռքը:

Հարկային բեռը շատ անհավասարաշափ է բաշխվում կապիտալիս-
տական հասարակության տարրից դասակարգերի միջև: Խոշոր բուրժուա-
զիան ձգտում է պետությունից ստանալ հարկային մեծ արտոնություն-

ներ և իր կեանտուների բավական մեծ մասը Քարցնում է հարկումից
իսկ, օրինակ, ԱՄՆ-ում, Անգլիայում և ԳՖՀ-ում աշխատավորների տե-
րին է բարդվում ուղղակի և անուղղակի հարկերի ընդհանուր զանարի
50 տոկոսից ավելին: Հարկերը ծառայում են որպես բանվոր դասակար-
գի լրացուցիչ շահագործման գործիք, քանի որ հարկերի միջոցով բուր-
ժուական պետությունը յուրացնում է վարձու բանվորների անհրաժեշտ
աշխատանքի մի մասը:

Կապիտալիզմի ժամանակ ազգային կեանտի օգտագործումը կախ-
նում է նրանում, որ գրա մի մասը մտնում է աննպական սպառման ֆոն-
դի մեջ, որից ծածկվում են ինչպես աշխատավորների աննպական սպա-
ման ծախսերը, այնպես էլ շահագործող դասակարգերի պարագիտային
աննպական սպառման ծախսերը. ազգային կեանտի մի մասը կազմում
է կապիտալիստական կուսական ֆոնդը, որը ծախսվում է բնդայնված
վերադարձության համար. վերջապես, ազգային կեանտի ոչ պակաս
մասը ծախսվում է անարտադրողական ուղղվածան ծախսերը ծածկելու
համար:

§ 7. Վերաբաշխության և ազգային կեանտի ժամանակակից բուրժուական տեսությունների քննադատությունը

Վերաբաշխության նկատման տեսությունը	Ջ. Մ. Քենյաի վերաբաշխության տեսության համաձայն, կապիտալիստական վերաբաշխու- թյան հակասությունները իր կարող են հաղթա- հարվել Նենց կապիտալիզմի շրջանակներում պահանջարկի և կապիտալ ներդրումների պետական կարգավորման միջոցով:
---------------------------------------	--

Քենյաի կարծիքով, վերաբաշխության մեջ վճռական դերը պատ-
կանում է ոչ թե արտադրությանը, այլ սպառմանն ու պահանջարկին:
Սպառումը...— գրել է նա,— ամեն մի տեսնական գործունեության
միակ նպատակն է: Աշխատանք ստանալու հնարավորությունները ան-
խոստափելիորեն ասմանափակված են ամբողջական պահանջարկի մաս-
շտարենքով: Ապրանքների կեանտում սպառողական և ինվեստիցիոն
(այսինքն՝ կապիտալ ներդրումների հետ կապված) պահանջարկի անբա-
վարարությունը ևր Քենյաը համարում ժամանակակից կապիտալիզմի
զիսավոր հիվանդությունը: Սպառողական պահանջարկի անբավարարու-
թյունը նա թխեցնում էր այն հավիտենական Նոգբրանական օրենքից, որ
մարդկանց սպանելու հակումը նրանց կեանտուներին ամանար զուգըն-
թաց պակասում է: Որքան ավելի խոշոր են մեր կեանտուները, — գրել
է Քենյաը, — այնքան, զբրախտաբար, ավելի մեծ է մեր կեանտուները

¹ Ж. М. Кейнс, Общия теория занятости, процента и денег, М., 1911,
1948, стр. 99.

ու մեր սպառման միջև եզած տարբերությունը՝ Իսկ ինվեստիցիոն պահանջարկի անբավարարությունը Քենյուր բացատրում էր այն բանով, որ կապիտալիստների մտք թուլացել է ներդրումներ կատարելու «հակուր», այսպես Նկատմամբ վստահ չլինելու, «իրացվելիություն գերազանցության (այսինքն՝ կապիտալիստ արտադրության մեջ ներդրելու փոխարեն դրամական ձևում պահելու հակումները) և փոխառված անդրախի բարձր մակարդակի հետևանքով Նվ չենց ամբողջական պահանջարկի անբավարարությունը, պնդում էր Քենյուր, ծնում է մասսայական գործազրկություն, իրացման զգվարություններ և ընդլայնված վերարտադրության ցածր տեմպեր ժամանակակից կապիտալիզմի պայմաններում:

Վերարտադրության քենյույան տեսությունը անակ է ամենից առաջ մեթոդոլոգիական տեսակետից. այդ տեսության համար բնորոշ է իդեալիստական մոտեցումը անտեսական երևույթների նկատմամբ և փոխանակյուն կոնցրեյցիան:

Քենյույանները ամենազիջավորը համարում են սուրբեկտիվ հոգերանակյան զրգապատճառները և մարդկանց «հակումները»: Այսպես, Քենյուր կապիտալիստական արտադրության աճումը զգվարանող պահանջարկի սահմանափակություն վճակյան գործոններ էր համարում ոչ բովարար «հակումը զեպի սպառումը» և «ենրդումներ խթանել» անբավարարությունը: Մակչյն անտեսական պրոցեսներում վճակյան նշանակություն ունեն ոչ թե սուրբեկտիվ հոգերանակյան զրգապատճառները, այլ օրյեկտիվ անտեսական պայմանները: Սպառողական պահանջարկը կապիտալիզմի ժամանակ իրոք սահմանափակ է, բայց ոչ թե ինչ-որ հավիտենական հոգերանակյան օրենքի պատճառով, թե իրր գնալով թուլանում է «հակումը զեպի սպառումը», այլ ժողովրդական զանգվածների պրոլետարական ընկնակի հետևանքով: Վիվետոցիյան պահանջարկի սահմանափակությունը պայմանավորված է նաև օրյեկտիվ պատճառներով: Կապիտալիզմի զարգացման հետ արտադրության ամման տեմպերը ցածր են ոչ թե այն պատճառով, որ թուլացել է կապիտալիստների «հակումը» զեպի ներդրումները, կապիտալիստները ձեռնարկությունների մեջ ներգնելու փորք «հակումը» բացատրվում է կապիտալիստական վերարտադրության սրված հակասություններով:

Փոխանակչյին կոնցրեյցիան վերարտադրության քենյույան տեսության մեջ վառ կերպով արտահայտվել է այն բանում, որ այդ տեսու-

թյունը ընդլայնված վերարտադրության պրոցեսում վճակյան զերը վերահանարկի է պահանջարկի, Իսկ իրականում պահանջարկի աճումը երկրորդական երևույթ է և պայմանավորված է արտադրության աճմամբ: Նկնելով փոխանակչյին կոնցրեյցիայից, Քենյուր սուկոս նորման համարում էր կապիտալ ներդրումների ծավալի զլխավոր կարգավորիչը: Իսկ իրականության մեջ սուկոսի նորման այդպիսի զեր չի կատարում, և փոխառվական տակոսի ցածր մակարդակը միանգամայն համատեղելի է ներդրումների ցածր մակարդակի հետ, մի բան, որ, օրինակ, տեղի էր ունենում XX դարի 30-ական թվականներին:

Արատազոր լինելով մեթոդոլոգիական տեսակետից, վերարտադրության քենյույան տեսությունը օխու է ըստ էության և հակառակ է իրական փաստերին: Մասնավորապես, սխալ է այն պնդումը, թե իրր սպառողական պահանջարկի սահմանափակությունը հետևանք է այն բանի, որ եկամուտների զնալով ավելի մեծ մասը վերաժվում է խնայողություններին: Աշխատավորների ճնշող մասը սպառում է իր ամբողջ եկամուտը և հնարավորություն չունի խնայողություն կատարելու: Նաչավորում նրանց պահանջարկը սահմանափակ է Քենյույան տեսությունը առանձնապես րնգծում է կարծեյալ հակասությունը եկամուտների աճման և սպառման աճման միջև, բայց սրողում է իրական հակասությունը: կապիտալիստական արտադրության աճման և եկամուտների սահմանափակության, իսկ այդ պատճառով և աշխատավոր զանգվածների սպառման միջև: Այդ տեսությունը սխալ է մեկնարարում բուն սպառումը, իրար խառնելով պրոլետարիատի և բուրժուալիայի սպառումը: Այդ տեսությունը անտեսական իրական երևույթները արտացոլում է միակողմանիորեն և խեղաթյուրված ձևով: Իսկ ինչ վերաբերում է կապիտալիստական վերարտադրությունը խթանելու համար Քենյուի ստաշալված միջոցներին, այդ դրանք փաստորեն նշանակում են ինֆլյացիայի ջատագովում, քանի որ Քենյու ստաշարկում էր մեծացնել թղթադրամային մասսան՝ առկոսը իջեցնելու և արտադրության աճումը խթանելու համար: Դրանք նշանակում են նաև միլիտարիզմի ջատագովում, քանի որ Քենյուր քարոզում էր ամեն կերպ ավելացնել պետական ծախսերը, որոնց մեջ, ինչպես հայտնի է, ստաշին տեղը զրավում են ոսպական ծախսերը:

Ի տարբերություն այ ընչնակյանների, որոնք արգարացնում են ինֆլյացիան, ռեալ աշխատավարձի իջեցումը և ոսպական ծախսերի աճումը, ձախ քենյույանները (օրինակ, ԱՄՆ-ում՝ Է. Կալդրելիցը, Անդրյալում՝ Զ. Ռոբինսոնը) արտահայտվում են աշխատավորնք քարծրացնելու օտրին, զրա մեջ տեսնելով պահանջարկը մեծացնելու և ընդլայնված վերարտադրությունը խթանելու միջոցը: Նրանք անտեսում են, որ կապիտալիստներն ու բուրժուալական պետությունը կամովին ընեն հա-

1 Дж. М. Кейнс, Общая теория занятости, процента и денег, стр. 99
Եկամուտների և սպառման միջև եզած տարբերությունը, Քենյուի կարծիքով, կապում են խնայողությունները: Այն կերպ սասած, ըստ Քենյուի, եկամուտների մեծացումն հետ զրանք ավելի ու ավելի մեծ մասն է խնայում և ավելի փորք մասը՝ սպառում:

Մասնաշխի եկամուտները վերաբաշխել աշխատավորների օգտին և որ աշխատավարձը բարձրացնելու համար անհրաժեշտ է պրոլետարիատի գաղափարգաշխի համար պայքարը:

Ազգային եկամտի բուրժուական տեսությունների քննադատությունը

Բուրժուական տնտեսագետները սովորաբար ազգային եկամուտը բնորոշում են որպես «բարձրների ու ծառայությունների ամբողջությունը»:

Օրինակ, ամերիկացի տնտեսագետ Ս. Կուլենդեյի

խոսքերով, ազգային եկամուտը «բնորոշում է բոլոր ապրանքների ու ծառայությունների հոսքը դեպի վերջնական սպասողները», այդ թվում և այն «ծառայությունները, որ կառավարությունները մատուցում են վերջնական սպասողներին»: Ազգային եկամտի նման բնորոշման հիմնական արատն այն է, որ այստեղ իրար հետ շփոթված են արտադրական և ոչ արտադրական ոլորտները, հիմնական և անաշխույժ եկամուտները: Ազգային եկամուտը, որը արժեզում է հիմնական եկամուտների, ստեղծվում է նյութական արտադրության ոլորտում, իսկ անշահական կատարվում է նրա բաշխումն ու վերաբաշխումը: Ազգային եկամտի մի մասի վերաբաշխման շնորհիվ էլ ստեղծվում են անաշխույժ եկամուտները, որ ստանում են պաշտոնյաները, զինծառայողները, փաստաբանները և այլն:

Բուրժուական տնտեսագետները տարբերություն չեն դնում առաջնային (հիմնական) և երկրորդական (ածանցյալ) եկամուտների միջև, ազգային եկամտի մեջ մտցնում են ոչ միայն նյութական արտադրության ոլորտում ստեղծված արժեքը, այլև ծառայությունների բոլոր այն տարատեսակությունները, որ կատարում են ոչ արտադրական ոլորտում գտնված մարզիկ, այդ թվում և այնպիսի ծառայություններ, որոնք բուրժուական կապիված չեն արտադրության հետ: Ազգային եկամտի մի մասի տնտեսագործական օգտագործումը պաշտոնյաների, զինծառայողների, սպասարկող անձնակազմի և այլոց «ծառայությունները» վարձատրելու համար բուրժուական տնտեսագետները ներկայացնում են որպես եկամտի ստեղծում, զբաղով իսկ բուրժուա-զատազգվական նպատակներով խեղաթյուրելով ռեալ իրականությունը:

Ազգային եկամտի էության խեղաթյուրումը պայմանավորում է նրա շտափերի անշահի մեծացումը: Երբ բուրժուական տնտեսագետները ազգային եկամուտը հաշվարկելիս հիմնական եկամուտներին ավելացնում են նաև անաշխույժները, որոնք, ըստ էության, հանուրը են առաջիններից, ապա նրանք արհեստականորեն մեծացնում են ազգային եկամտի իսկական գումարը:

Ազգային եկամտի աղբյուրների հարցի վերաբերյալ բուրժուական քաղաքատնտեսությունը կանգնած է այսպես կոչված «արտադրության երեք գործոնների» տեսության դիրքերում, որն արդեն մեր կողմից քրք-

նարկվել է «Արտադրության երեք գործոնների» տեսությունը բուրժուական տնտեսագետները պրոպագանդում են նաև ներկայումս: Բայց նրանցից ոմանք ստացվա նման շարունակում են խոսել արտադրության երեք գործոնների մասին: Իսկ մյուսները կամ այդ գործոնների թիվը պակասցնում, հասցնում են երկուսի, հոգը համարելով կապիտալի տարատեսակություն (օրինակ, ամերիկացի տնտեսագետ Ջ. Եյակոպի-ը), կամ զբաղք թիվը ավելացնում, հասցնում չորսի, իրրեկ ինքնուրույն գործոն առանձնացնելով ձեռնարկատիրական նախաձեռնությունը (իսկ մի քանի տնտեսագետներ այդպիսի գործոն են համարում նաև պետությունը): Այսպես, ժամանակակից ամերիկացի տնտեսագետ Ջ. Էնթոնյոսը գրում է. «Սենն մի արտադրություն պահանջում է արտադրության բոլոր երեք (կամ չորս) գործոնները...»:

«Արտադրության երեք գործոնների» և ազգային եկամտի երեք աղբյուրների տեսությունը սնանկ է ամենից առաջ այն պատճառով, որ իրար հետ շփոթում է արտատեսակ երկուսները: Աշխատանքը մարդկանց արտադրական գործունեությունն է, որը տեղի ունի ամեն մի հասարակության մեջ, հողը բնության մի մասն է, իսկ կապիտալը սպիցիֆիկ արտադրական նարարելություն է, որը հատուկ է միայն բուրժուական հասարակությանը: Կ. Մարքսը, ծագելով Սևի լեռնահանական ֆորմուլայից, արել է. «Մարտական կարծեցյալ աղբյուրները...վերաբերում են միանգամայն տարբեր ոլորտների և նվազագույն նմանություն անգամ շունեն իրար հետ: Նրանք իրար եկամտամբ վերաբերում են մասավորապես այնպես, ինչպես նոտարական տուրքերը, ճակնդեղն ու իրաժեշտությունը»:

Ազգային եկամտի երեք աղբյուրների մասին ուսմունքը խեղաթյուրում է իրականությունը, քանի որ ազգային եկամտի մի մասի ստացումը շփոթում է զրա ստեղծման հետ: Բուրժուական հասարակության ազգային եկամուտը ստեղծվում է ոչ թե աշխատանքով, կապիտալով և հողով՝ համատեղ վերցրած, այլ միայն աշխատանքով: Ազգային եկամտի երեք աղբյուրների տեսության դատապարտաբան դերն էլ հենց այն է, որ փորձի թաքցնել շահույթի ու անշահի շահագործողական բնույթը և բուրժուական հասարակությանը հատուկ դատապարտաբան անտագոնիզմը սրողի շահերի կարծեցյալ ներքաշխույժումը:

Վ. Կ. Մարքս և Փ. Էնգելս, Սոց., Կ. 25, է. 11, սթ. 386

**§ 8. Կապիտալիզմի հակասարտ հակասությունները
և տնտեսական ճգնաժամերը**

ճգնաժամների հնարա-
վորություն ու անհու-
սափելիությունը կապի-
տալիզմի ժամանակ

Կապիտալիստական Այնտնիքյան ենթակա է զե-
րարտարությունը պարբերական ճգնաժամների
Տնտեսական ճգնաժամը կապիտալիստական
տնտեսության այնպիսի մի վիճակ է, երբ ապ-
րանքների արտադրությունը հասարակության մեջ
գերազանցում է զբանջ վճարուկան պահանջարկին, որի հետևանքով
ապրանքային մասսայի էիջ թե շատ եղանակալի մասը չի իրացվում և
հասարակական արտադրությունը անմանը հայտնուում է նրա անկողմը:

Ճգնաժամների արտադրանքի հնարավորությունը կա դեռևս պարզ ապ-
րանքային տնտեսության պայմաններում և կապված է փողի՝ որպես
շրջանառության միջոցի և վճարման միջոցի ֆունկցիաների հետ (տես
ՊԷ. V, § 5): Իսկ կապիտալիզմի պայմաններում այդ հնարավորությունը
արտադրության գրանցում է իրական: Ինչո՞ւ է դա բացատրվում:

Առաջին, կապիտալիստական տնտեսության մեջ, որտեղ հասարա-
կական աշխատանքի բոլոր արդյունքները արտադրվում են որպես ապ-
րանքներ, հասարակական ամբողջական արդյունքի շարժումը միջնոր-
դավորվում է փողի շրջանառությամբ Փ—Ա և Ա՝—Փ՝ անտերը առաքելը
անհատական կապիտալիստների շրջագոտույտի մեջ, փոխադարձաբար կապ-
ված են, և այդ պատճառով զբանջ խզումը որոշ օղակներում առաջ է
բերում խզում մյուս օղակներում և խախտում է իրացման պրոցեսը հա-
սարակության մասշտաբով:

Երկրորդ, կապիտալիզմի ժամանակ լայն զարգացում է առանում
ապրանքների ապափիկ վաճառքը, իսկ դրա հետ միասին նաև փողի՝
որպես վճարման միջոցի ֆունկցիան: Այնպիսի պայմաններում, երբ մեծ
թվով կապիտալիստներ միմեաների շղթայում, մեծ շարք կապիտալիստների
անվճարունակությունը հեշտությամբ կարող է առաջացնել այդ ամբողջ
շղթայի խզում և մասսայական սեանկացումներ:

Տնտեսական ճգնաժամների առաջացման պատճառը կապիտալիզմի
հիմնական հակասությունն է, այսինքն՝ արտադրության հասարակական
բնույթի և յուրացման մասնավոր կապիտալիստական ձևի միջև եղած
հակասությունը: Կապիտալիստական արտադրության հասարակական
բնույթը արտահայտվում է ամենեից առաջ աշխատանքի բարձր զարգա-
ցած հասարակական բաժանման և կապիտալիստական յուրացանչույթ
ձևանարկությունում մեծ թվով բանվորների համակենտրոնացման մեջ:
Կապիտալիզմի ժամանակ արդյունաբերությունը ամբողջական անջատ-
վում է գյուղատնտեսությունից և բաղկացած է միմյանց հետ կապված

բաժանված ճյուղերից: Հետևաբար, կապիտալիզմի ժամանակ աշխա-
տանքի հասարակական բաժանման հետևանքով արտադրության բա-
ժան-բաժան եղած բազմաթիվ պրոցեսները միաձուլվում են արտադրու-
թյան մեկ հասարակական պրոցեսի մեջ: Գրա հետ մեկտեղ, կապի-
տալիստական ձևանարկությունում համակենտրոնացած են վարձու բան-
վորների մեծ խմբեր, որոնք ապրանք են արտադրում համատեղ աշխա-
տանքով: Արտադրության հասարակական բնույթը արտահայտվում է
նաև շուկայի ընդլայնման մեջ: Կապիտալիզմի պայմաններում գործը չի
սահմանափակվում, անընդմեջ եղ շուկաներում ապրանքների վաճա-
նահանամար. ծաղում է նախ ազգային, իսկ ապա նաև համաշխարհա-
յին շուկա, որը իրար հետ է կապում բոլոր ճրկները:

Կապիտալիզմի պայմաններում արտադրության հասարակական
բնույթին զմեծ հանդիման կանգնած է նրա արդյունքների մասնավոր յու-
րացումը: Կապիտալիստական յուրացումը բնութագրվում է նրանով, որ,
նախ, նա արտադրության միջոցների մասնավոր սեփականության վրա
խաբարձած յուրացում է, և, երկրորդ, վարձու աշխատանքի շահագործ-
ման միակ հիմնված յուրացում:

Կապիտալիստական յուրացման օրյեկտ են ինչպես արտադրության
միջոցները, այնպես էլ սպառման առարկաները: Բայց վերջիններս մի
մասը (աշխատուժի վերարտադրման համար անհրաժեշտ գոյություն մի-
ջոցները) փոխարկվում է բանվորների սեփականության, որոնք դրանք
ցնում են իրենց աշխատավարձով: Ինչ վերաբերում է արտադրության
միջոցներին, ապա դրանց իրացումից հետո էլ նրանք ամբողջապես
մնում են որպես կապիտալիստների սեփականություն:

Կապիտալիզմի հիմնական հակասությունը՝ արտադրության պրոցե-
սի հասարակական բնույթի և յուրացման մասնավոր կապիտալիստա-
կան ձևի միջև եղած հակասությունը արտահայտվում է կապիտալիստա-
կան արտադրության և ժողովրդական զանգվածների սպառման միջև
եղած խոր հակասության մեջ: Կապիտալի կոստակումը և կապիտալիս-
տական արտադրության անումը, իրենց հետ շեն բերում ժողովրդական
սպառման համապատասխան անում, այլ ուղեկցվում են աշխատավոր
պակեզմաների դրույթան վրաստացումով: Կապիտալիստական վերար-
տադրության մեխանիզմը բանվորների անձնական սպառումը սահմա-
նափակում է նրանց աշխատուժի որպես ապրանք վերարտադրելու հա-
մար անհրաժեշտ գոյության միջոցների բանակով: Ավելին, ընդլայնված
վերարտադրության պրոցեսում գործում են այնպիսի գործոններ (և
գրանցից գլխավորը գործազրկությունն է), որոնք պայմանավորում են

1 Վ. Ի. Լենին, Երկր, հ. 1, էջ 210:

բանվորների անձնական սպասման եւ մնալը աշխատութի արժեքի համապատասխան շահերից:

Բանվոր զբաղակարգի սպասման սահմանափակությունը խորը զոտներ է ստեղծում ան ապրանքների իրացման ճանապարհին, որոնց քանակը ընդգայելած վերադարձություն հետևանքով գնալով ավելի է ուժեղ: Կ. Մարքսը գրել է. «Արտադրության կապիտալիստական եղանակի հակասությունն է. բանվորները, որպես ապրանք դեռողներ, կարևոր են շուկայի համար: Բայց կապիտալիստական հասարակությունը անընդհնդ ունի բանվորներին, որպես իրոնց ապրանքի՝ աշխատութի վաճառողներ: Գին միխիմուսով սահմանափակելը»¹: Ճանաչվի հետևից ընկնելով, կապիտալիստները ամեն կերպ սահմանափակում են բանվորների աշխատավարձը, որը զգալիորեն պակասեցնում է Ո ստորաբաժանման արտադրանքի վաճառահանման հնարավորությունները:

Կապիտալիզմի պայմաններում արտադրության և սպասման միջև եղած հակասության խորացումը պայման է սպասման տեսակների արտադրության համաձայնության արտադրության միջոցներէ արտադրության տառաջնիկ ամսան օրեկի գործողության հետ: Ենթադրույալն արտադրության միջոցների հաշվին արտադրության (հետևաբար և ներքին շուկայի) զարգանալը— գրում էր Վ. Ի. Լենինը,— պարտաբար է թվում և, անտարակուս, հակասություն է ներկայացնում: Քա իսկական օտարադրություն է՝ արտադրության համար, արտադրության ընդլայնումն է, առանց սպասումը համապատասխան շահով ընդլայնելու»²:

Կապիտալիստական Ֆարքիաններն ու գործարանները, որոնք հիմնված են մեթոդական տեխնիկայի և վարձու բանվորների համատեղ աշխատանքի վրա, ունեն մեծ կուսակուսներ և ընդունակ են արագ կերպով ընդլայնելու արտադրությունը: Արտադրության ընդլայնման շարժիչն այն է, որ կապիտալիստները ընկած են շահալիքի հետևից: Սակայն կապիտալիզմի հիմնական հակասությունը ծնում է անհամապատասխանություն կապիտալիստական արտադրությունը անսահմանորեն ընդլայնելու տևողացի և ժողովրդական զանգվածների վճարունակ պահանջարկի սահմանափակության միջև: Բանվոր զբաղակարգի կողմից պահանջարկի և նրա սպասման շահերը սահմանափակված են բանվորների աշխատավարձի մեծությամբ: Ճիշտ է, կապիտալի կուսակման հետ միասին որոշ շահով աճում է և փոփոխում կապիտալը: Հետևաբար, բանվորների աշխատավարձի ֆոնդը, իսկ համապատասխանաբար և վճարունակ պահանջարկը, որ նրանք ներկայացնում են Ո ստորաբաժանման արտադրանքի նկատմամբ, բացարձակորեն մեծա-

նում է: Բայց հարաբերակներին, այսինքն՝ արտադրության աճման սահմանափակումը, այդ պահանջարկը կրճատվում է, որին զգալի շահով կուսասում է կապիտալի օրգանական կազմի բարձրացումը, որի հետևանքով փոփոխուն կապիտալը կազմում է ամբողջ կապիտալի գնալով ավելի փոքր մասը, իսկ աշխատավարձի ֆոնդը՝ արտադրվող արտադրանքի արժեքի գնալով ավելի փոքր մասը: Այսպիսով, կր կապիտալիստական արտադրության անուր հասնում է մեծ շահերի, Ո ստորաբաժանման արտադրանքը տնտեսագիտիկորեն զերպանցնում է վճարունակ սպասողական պահանջարկի ընդհանուր ծավալը, որի հետևանքով սկսվում է զերարտադրության ճգնաժամ: Բայց քանի որ Ո ստորաբաժանման կապիտալիստները, լրիվ շահով չիրացնելով իրենց ապրանքները, կրճատում են պահանջարկը արտադրության միջոցների նկատմամբ, գերարտադրությունը տարածվում է նաև Ո ստորաբաժանման վրա:

Այսպիսով, տնտեսական ճգնաժամերի մեջ ցայտուն կերպով արտահայտվում է անհամապատասխանություն կապիտալիստական հասարակության արտադրողական և սպասողական ուժի միջև: Կապիտալիզմի պայմաններում որքան ավելի շատ է զարգանում արտադրողական ուժը, այնքան նա ավելի շատ է հակասության մեջ ընկնում այն երկ հիմքի հետ, որի վրա խարսխվում են սպասման հարաբերությունները³:

Կապիտալիզմի հիմնական հակասությունը արտահայտվում է նաև առանձին ձեռնարկարյուններում (իսկ մոնոպոլիստական կապիտալիզմի պայմաններում՝ նաև միաժողովուրդներում) արտադրության կազմակերպում և ամբողջ հասարակության մեջ արտադրության անարխիայի միջև: Անշարժված լինելով մասնավոր սեփականության և ստորաբանք արտադրելով տարբերակներին, կապիտալիստական տարբեր ձեռնարկություններ և արտադրության ճյուղեր զարգանում են անհավասարաչափ և անհամաձայնորեն:

Կապիտալիստական արտադրությունը վճարունակ պահանջարկի սահմաններից ավելի աճելու և արտադրության տարբեր ճյուղերի անհամաձայնական զարգացման հետևանքով առաջանում է անհամապատասխանություն շահագործման պայմանների և իրացման պայմանների միջև: Ընտանջանալը,— գրել է Կ. Մարքսը,— սահմանափակվում են միայն հասարակության արտադրողական ուժով, երկրորդները՝ արտադրության տարբեր ճյուղերի համամասնությամբ և հասարակության սպասողական ուժով»⁴: Կապիտալիստական արտադրության անման և

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 24, стр. 356.

² Վ. Ի. Լենին, երկեր, Ե. Տ. էջ 48:

³ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 25, ч. 1, стр. 268.

⁴ Այսին տեղը:

աշխատավորների վճարունակ պահանջարկի սահմանափակության միջև եղած անհամապատասխանությունը ծնում է նաև անհամամասնությունը և 11 ստորաբաժանումների միջև:

Այսպիսով, տնտեսական ճգնաժամների վճռական պատճառը կապիտալիզմի հիմնական նպատակներն էլ, Այն արտահայտվում է փոխադարձորակ կապված երկու ձևերի մեջ՝ կապիտալիստական արտադրության աճման և աշխատավորական մասնակների վճարունակ սպասարկական պահանջարկի հարաբերական կրճատման միջև եղած անհամապատասխանության ձևով և արտադրության տարրեր ուղղորտների ու ճյուղերի զարգացման անհամապատասխանության ձևով: Իր գրեթե բոլոր այս ձևերի միջոցով էլ կապիտալիզմի հիմնական նպատակները ծնում է տնտեսական ճգնաժամներ, շեղաբար, ճգնաժամները վերացնելու համար անհրաժեշտ է վերացնել արտադրության կապիտալիստական եղանակը՝ արտադրության պրոցեսի հասարակական բնույթի և յուրաքանչյուր մասնավոր կապիտալիստական ձևի միջև եղած՝ նրան հատուկ նպատակության նկատմամբ:

Ճգնաժամների պարբերականությունը: Արդյունաբերական ցիկլը և նրա փուլերը

XIX դարի երկրորդ քառորդից տնտեսական ճշգրտաժամները սկսեցին կրկնվել պարբերաբար, բիշեն շատ որոշակի ժամանակաշրջանների ընթացքում, որոնք կապիտալիզմի զարգացման հետ կրճատվում են: Սկզբում գերարտադրության տնտեսական ճգնաժամները իրարից բաժանվում էին 10—11 տարի ժամանակամիջոցներով (1825, 1836, 1847, 1857 թթ. ճգնաժամները): XIX դարի երկրորդ կեսին նրանք համախափ դարձան և սկսեցին կրկնվել յուրաքանչյուր 7—9 տարին մեկ (1857 թ. ճգնաժամին նաջորդեցին 1866, 1873, 1882 և 1890 թթ. ճգնաժամները): Իմպերիալիզմի դարաշրջանում ծագեց ճգնաժամների նոր պատերազմը տեղի ունեցան 1900 և 1907 թթ. ճգնաժամները, երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում՝ 1920—1921, 1929—1933 և 1937—1938 թթ. ճգնաժամները (այսինչն՝ մոտ 25 տարում սեղի ունեցավ երեք ճգնաժամ)։ վերջապես, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ժամանակակից կապիտալիզմի միջնաբերդը՝ ԱՄՆ-ը, 25 տարում սպրդեց հինգ ճգնաժամ՝ 1948—1949, 1953—1954, 1957—1958, 1960—1961 և 1969—1971 թթ., 1957—1958 թթ. և 1969—1971 թթ., ճգնաժամները բնորոշեցին նաև կապիտալիստական մի շարք ուրիշ երկրներ:

Դեռարտադրության մի ճգնաժամից մինչև մյուս ճգնաժամն ընկած ժամանակաշրջանը իրենից ներկայացնում է արդյունաբերական ցիկլ: Այն բաղկացած է չորս հիմնական փուլերից՝ ճգնաժամ, զեպրեսիա, աշ-

խուժացում և արդյունաբերական վերելք: Այս փուլերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները:

Ճգնաժամը բնութագրվում է ամենից առաջ սարսերների զերբարտադրությամբ, դրանց գների շեղանկի անկումով, արտադրության չափերի զգալի կրճատումով, ֆիրմաների մասսայական սնանկացմամբ, գործազրկության աճմամբ և աշխատավարձի անկումով, վարկային սխտեմի քայքայումով:

1857 թ. ճգնաժամի ժամանակ մեծածախ գները ԱՄՆ-ում իջել էին միջին հաշվով 16 տոկոսով, իսկ 1929—1933 թթ. ճգնաժամի ժամանակ՝ գրեթե 54 տոկոսով: Գները անկումը պայմանավորում է շահույթի նոր մայրի իջեցումը, որը առաջ է բերում արտադրության չափերի կրճատում: 1929—1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակ կապիտալիստական արդյունաբերական պրոցեսի արտադրության կրճատվել էր 44 տոկոսով, 1957—1958 թթ. ճգնաժամի ժամանակ կապիտալիզմի դիտավոր երկրում՝ ԱՄՆ-ում, արդյունաբերական արտադրանքի թողարկումը պակասել էր 15 տոկոսով:

Ապրանքների մի մասի իրացման անհնարինությունը է մյուս մասի վաճառքը ցածր գներով իրենց հետ բերում են անուարկությունների մասսայական սնանկացումներ: Իր հերթին արտադրության կրճատումը տանում է զեպրեսիոն ճգնաժամի մեծում և աշխատավարձի իջեցում: Քե ճգնաժամների հետևեցող ինչպես է աճում գործազրկությունը, երևում է, օրինակ, այն փաստը, որ 1969—1971 թթ. ճգնաժամը ԱՄՆ-ում լրիվ գործազուրկների թիվը 2,9 մլն մարդուց հասցրեց 5,8 մլն մարդու:

Արդյունաբերական ճգնաժամը ծնում է գրամա-վարկային ճգնաժամ, որը երևան է դալին բանկիրից ավանդների արտահոսքի, վարկի շեղանկի կրճատման, սակուսի նորմայի արագ բարձրացման մեջ:

Տնտեսական ճգնաժամը սովորաբար շարունակվում է մեկից մինչև երկու տարի (միայն 1929—1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը ի տարբերություն բոլոր նախորդ ճգնաժամների, սակց երեք արտույց ավելի), որից հետո նրան նաջորդում է զեպրեսիան: Վերջինս ճգնաժամից սարբերվում է ամենից առաջ այն բանով, որ դեռարտադրությունը դադարում է, աստիճանաբար վերականգնում է արտաբերների իրացումը, որով շափով կանց է առնում գների շեղանկի անկումը:

Ճգնաժամից անցումը զեպրեսիային կանխորոշվում է հետևյալ նախաձայններով: Ապրանքային գների անկումը, լինելով ճգնաժամի գրեթե անխուսելիք մեծը, միաժամանակ ծառայում է իրեն զրանից զրոս գալու գործուն: Քանի որ ապրանքների նկատմամբ պահանջարկի չափերը նախադարձ կախվածություն մեջ են գտնվում ապրանքային գների մակարդակից, ապա գների անկումը տանում է զեպրեսիոն պահանջարկի մեծացում և ապրանքային ավելցուկների աստիճանական ներծծում: Նույն

ուղղութիւնք էլ գործում է արտադրութեան շափերի կրճատումը, որը միաժամանակ է՝ հզնածամի արտաճարտութիւնն էլ, ն՛ գրանից զուր գալու գործուն Արտադրութեան կրճատումը պայմանաւորում է ապրանքների պահանջարկի պակասումը չուկայում և զերարտադրութեան աստիճանային հասկանալիութիւնը: Ապրանքային անկցուղիք որոշ շափով վերացվում է նաև ապրանքների մի մասի ուղղակի օշնջումն միջոցով: Ընդհանածուից զուրս գալու աշգրիտի միջոցը լայնորեն կիրառվում էր, օրինակ, 1929—1933 թթ. հզնածամի ժամանակ, երբ մի շարք երկրներում կապիտալիստները օշնջացնում էին ապրանքային պաշարները, որպէսզի կտուցեին գները անկումը և հասնեն դրանք բարձրացման ձգնաժամից զուրս գալու գործունեից մեկն էլ հաստատուն կապիտալի տարրերի արժեզրկումն է, արտադրութեան միջոցների գների անկումը: Երբ արտադրութեան միջոցների գները բնկնում են ավելի քան պատշաճորէն արտադրանքի գները, ապա ցա նպատակում է շահույթի նորմայի բարձրացմանը, որը կապիտալիստներին խթանում է ընդլայնելու արտադրութիւնը:

Ընդհանածուից զուրս գալը կապիտալիստները զգալի շափով իրականացնում են բանվորների դրութեանը վատթարացնելու հաշիւն: Աշխատավարձի կրճատումը ճգնումամի ժամանակ տանում է զեպի բանվորների շահագործման աստիճանի բարձրացում, որը նպատակում է շահույթի նորմայի անձանն ու, հետեւաբար, կապիտալիստական արտադրութեան ընդլայնմանը:

Գնպրեհալի զլխավոր առանձնահատկութիւնը արտադրութեան անկման զագարումն է: Գնպրեհալի ժամանակ արտադրութեան շափերը որոշ շափով մեծանում են: Ընդհանածուային միխիմումի համեմատութեամբ, սակայն, հասնելով միջնահամաձային մարքսիմումին Վարկային ուղորտում զեպրեհալան աշքի է բնկնում փոխաւովական կապիտալների աստատութեամբ և ստեղծի ցածր նորմայով:

Գնպրեհալին հաջորդող ցիկլն երկու փուլերը բնութագրվում են արտադրութեան նայի աստիճանական շիխումացումով, իսկ ապա թիւրքումն արագ (արդյունաբերական վերելք) անումով: Գա բացատրվում է հետևյալ կերպ: Գնպրեհալի փուլում զարգարում է գների շիխուակի անկումը, բայց դրանց մակարդակը հիշեսս մնում է ցածր: Այդ պայմաններում շահութեանը մեծացնելու համար կապիտալիստները պիտք է զգալիորեն իջնցնեն արտադրութեան ծախսերը, որի համար պահանջվում է մոդեռնացնել սեխներեկան, նորացնել հիմնական կապիտալը, այսինքն՝ հիւ սարքավորումները փոխարինել նոր, ավելի կտտարեւազորավածներով և կատուցել ավելի լավ սեխներկայով հազելված նոր ձեռնարկութիւնները: Կապիտալիստներին՝ հիմնական կապիտալը նորացնելու է զրգում նաև մրցապայքարի ուժեղացումը: Ընկեց հիմնական կապիտալի

նորացումն էլ ծառայում է իրրի վճռական գործուն զեպրեհալից անցնելու աշխուժացման, իսկ անսուհետ, երբ այդ նորացումը բնկնում է մասսայական մաշտարները,— արդյունաբերական վերելքին: Աշխուժացման ժամանակաշրջանում արտադրութեան շափերը հասնում են միջնահամաձային մարքսիմումին, իսկ վերելքի ժամանակ այդ շափերը զերազանցում են դրան և հասնում նոր մարքսիմումի՝ ավելալ ցիկլի սահմաններում:

Արտադրութեան արագ աճումը վերելքի փուլում իր հետ բերում է ապրանքների պահանջարկի մեծացում և ապրանքային գների բարձրացում: Արտադրութեան անձան մեկ այլ նետանքն է աշխատանքի արդյունաբերական պահանջարանակի մի զգալի մասի ներգրավումը արտադրութեան մեջ և զործարկութեան կրճատումը, որը, իր հերթին, նպատակում է աշխատավարձի բարձրացմանը: Արդյունաբերական վերելքը մնում է վարկային էքսպանսիա, այսինքն՝ վարկի շափերի նշանակալի մեծացում, ըստ որում վերելքի հետեւանքով առաջացած փոխաւովական կապիտալի պահանջարկի անձար պայմանավորում է ստեղծի նորմայի բարձրացումը:

Սակայն, արդյունաբերական վերելքի բննացումը պայմաններ են հաստեւանում նոր ճգնածամի սեպելու համար, քանի որ վերը շարազրված պատճառների բերումով, արտադրութեան անք անխոստափելիորեն դրսւ է զալիս վճարունակ պահանջարկի սահմաններից:

Ճգնածամերի պարբերակաւորութեան նյութական նգնանքների պարբերակաւորութեան նյութական նորացումը: Յարաբանելու ճիշտակեան ստանում է զեպի հիմնական կապիտալի մասսայական մաշտարի բարոշական մաշում, քանի որ գների շիխուակի անկման ժամանակ հին սարքավորումները չեն փոխհատուցում իրենց արժեքը: Մրցապայքարը և որքան կարելի է ավելի շատ շահույթ ստանալու նպտակը կապիտալիստներին զրգում են նորացնել հիմնական կապիտալը, որի շեռքիով սեղի է ունենում անցում զեպի աշխուժացման ու վերելքի փուլերը: Ընկեց այդ պատճառով էլ ամեն մի նոր ցիկլ նախորդից տարբերվում է արտադրութեան նյութատեխնիկական բազայի ցիկլի բարձր մակարդակով: Սակայն, հարկավոր է նկատի ունենալ, որ հիմնական կապիտալի պարբերական նորացումը ճգնածամերի պարբերականութեան նյութական հիմքն է միայն, այլ ոչ թե արտադրութեան վերելքները: Ըզնածամերով փոխարինվելու պատճառը, Պատճառը, փնջպես վերանում է պարզեցնել, կապիտալիզմի հիմնական նակասութեանն է:

Հիմնական կապիտալի նորացումը, որ սեղի է ունենում յարաբանելու ցիկլում, առաջ է բերում կապիտալիզմի հիմնական հակասութեան հետագա խորացում և արտադրութեան անձում, որը դուրս է զալիս աշ-

խոտավոր զանգվածների վճարունակ պահանջարկի սահմանափակ շրջանակներին: Ուստի կապիտալիզմի պայմաններում անխուսափելի է աղքատներիական վերելքներին գերարտադրության ճգնաժամերի պարբերական նազդրումը:

Կապիտալիստական վերարտադրությանը հատուկ ցիկլային բնույթը պահպանելով է նաև ժամանակակից կապիտալիզմի պայմաններում, բայց այս դեպքում աղքատներիական ցիկլը ատանում է մի քանի տասնձևահատկությունների, որոնք մենք կգնահատենք XXII դիվիզիոն:

Կապիտալիստական երկրների գյուղատնտեսու-

Աղքատային ճգնաժամերը և քրահ ատանձև-հատկությունները

րային, ինչպես նաև աղքատներական, ճգնաժամերի պատճառը արտադրության կապիտալիստական եղանակի հիմնական հակասության մեջ է:

Աղքատային ճգնաժամերի ծագումը սերտորեն կապված է կապիտալիստական էկոնոմիկայում սեղի սենցից կաուտցվածքային փոփոխությունների հետ: XIX դարի երկրորդ կեսին ԱՄՆ-ի գյուղատնտեսության մեջ սկսվեց անցում մեքենական արտադրության, որը հանցիցրեց այդ նյութում աշխատանքի արտադրողականության զգալի բարձրացման և գյուղատնտեսական միջրեքների գների իջնջման: Դրա հետ մեկտեղ նշված ժամանակաշրջանում ձևավորվեց համաշխարհային կապիտալիստական տնտեսությունը: էժանագին հացահատիկի մասսայական արտահանումը օվիհանսի այն կողմից քայքայում էր Նվրոսայի հացահատիկային արտադրությունը, իսկ դա պահանջում էր փոփոխել գյուղատնտեսության կաուտցվածքը Արևմտյան Նվրոսայի երկրներում: XIX դարի վերջին բառորում մի շարք կապիտալիստական երկրները առաջին անգամ ապրելին աղքատային ճգնաժամ: Ավելի լայն մասշտաբով այդ ճգնաժամերը տեղի ունեցան առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմներից հետո:

